

301

L-14

67

30 APR 2013

11815

301

L-14 300

1295-L4

25 SEP 2006

ԻՆՉ Է ՀԱՐԿԱԴՈՐ ԳԻՒՂԻՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ



ՍԱՐԳԻՍ ՍԱՀԱԿԵԱՆ ԼԱԼԱՅԵԱՆՑԻ

1003
15447

Մ Ո Ս Կ Ո Ւ Ս.

ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ
1907

Типографія Х. Бархударянцъ, Срѣтенка, Мясной пер., д. Бѣляева.

ԻՒՐ ԹԱՆԿԱԳԻՆ ԱՄՈՒՍՆՈՒՆ

ԿԱՏԱՐԻՆԷ ԽԱՉԱՏՐԵԱՆ

ԼԱԼԱՅԵԱՆՑԻՆ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

ՀԵՂԻՆԱԿԸ

ԻՆՉ Է ՀԱՆԱԽՈՐ ԳԻՒՂԻՆ



ՍԻՐԵԼԻ ԿԱՏԻՆ

Բազում քաղաքի մեջ ծնունդի, Բազումն էլ մեծացիր, բայց այն օրից, երբ ինձ հետ եկար գիւղը, ապրեցիր գիւղի մեջ, ճանաչեցիր գիւղական կեանքը և լաւ իմացիր նրա ցաւն ու դարձը, այնուհետեւ դու քաղաքը մոռացիր: Հիմա գիշեր-ցերեկ քո միտքը գիւղն է, գիւղացին է ու նրա կարիքներն են:

Հանգամանքը մեզ ստիպեց մեր քաղաքը հայրենիքը թողնել: Մեր սիրելի եղբայր Սողոմոնի շնորհիւ՝ մենք եկանք Մոսկով: Այս հեռու տեղում մեր երկրի կարօտը ամեն օր մաշում է մեր սրտերը: Հեռուից ինչ լաւութիւն կարելի է անել, մեր ոյժի չափ՝ մենք անում ենք և կշարունակենք անել: Բայց իհարկէ հատ-հատ օգնութիւններով գիւղացու վերքը չի սաղանալ: Նրա ցաւը շատ մեծ է, նրա համար արած օգնութիւնը պիտի լինի հիմնական:

Որքան մենք տեսանք՝ գիւղացու ամենագլխաւոր ցաւը խաւար մնալն է:

Գիւղացուն հարկաւոր է հող և մի քիչ ուսում:

Դու ինքդ էլ տեսար, որ մեր գիւղացին խաւար է մնացել, ուսումնարանների թիւը գիւղերի մեջ շատ քիչ է: Խաւար էլ մնալով, գիւղացին չի կարողա-

նում չարն ու բարին հասկանալ, դրա համար էլ միշտ մնում է խեղճ և աղքատ:

Հենց էդ մտքովն էլ մենք ուզեցինք մեր Քառանի գիւղում (Ղարաբաղում) ուսումնարան ունենալ: Դրա համար՝ էդ մեր գիւղի մէջ՝ մեր սեպհական տունը առաջարկեցինք ձրի՝ այսինքն ուսումնարանը այնտեղ տեղաւորեն հրկար տարիներ առանց վարձի: Այս ղէպքը մի քանի տարի առաջ էր: Այդ ժամանակ սե ու չար հանգամանքները չթողեցին մեր տանը մէջ հայոց ուսումնարան ունենալ:

Մեր գիւղն աւանդութեամբ իւր քառասուն նահատակ որդոց յիշատակին է կոչում Քառանի: Այդ պատմութիւնը թուրքերի իշխանութեան ժամանակն է եղել: Քառասուն քաջ աղամարդիկը մեռել են՝ իրանց գիւղի պատիւը բարձր պահելու համար: Մեռել են և, ինչպէս աւանդութիւնն է ասում, իրանց մահով շատ քոյրեր ու եղբայրներ են փրկել թուրքի թրերից:

Քառանին Շուշուց հեռու չէ: Գիւղն ընկած է կանաչ սարալանջին, ծմակների մօտ: Հիմա Քառանին միշտ մեր աչքի առաջն է: Նրա ամեն մի որդու ցաւն ու դարձը միշտ մեր սրտին մօտիկ է:

Բայց Քառանու նման որքան գիւղ կայ և օգնութեան կարօտ որքան քոյրեր ու եղբայրներ ունինք: Եթէ ասեմ նրանց մոռացել են մեր քաղաքացի եղբայրները՝ չեմ կարող՝ որովհետեւ մէկ-մէկ յիշում են: Խնդիրը օգնութեան չափի մէջն է:

Ամեն մի մարդ իւր խեղճ ու աղքատ եղբորը պիտի օգնէ իւր կարողութեան չափ: Շատից շատ պիտի ստանալ քչեցը՝ քիչ: Բայց ցաւը հենց նրանումն է, որ մեր հարուստները էգպէս չեն անում: Մեր հարուստը գիւղացի եղբորը օրինաւոր բաժին չէ տա-

լիս: Հարուստի տուածը իւր սուփրի մէջ մնացած փշրանքներն են: Բայց հիմիկուայ հարուստի սուփրում փշրանք էլ չի մնում:

Հենց վերցնեք էն հարուստներին, որոնք գիւղացու որդիք են: Գիւղիցը քաղաք գալով, գործ են ձարել, էդ գործն էլ առաջ է գնացել և իրանք էլ հարստացել են: Ախր դրանք ո՞նց են մոռանում գիւղը, իրանց տունն ու իրանց օջաղը, ո՞նց են մոռանում իրանց ընկերներին, հարեաններին: Ձե՞ որ մէկ հողի վրայ են ծնուել, մէկ օդի մէջ են մեծացել, մի աղբրից են ջուր խմել: Ասենք մէկը եկել է քաղաք, գործըն աջողուել է, հարստացել է, միւսը մնացել է գիւղում, խեղճ դուրսեան մէջ, բայց նա է հայրական օջաղը վառ պահել, դուրսնի ծէրիցը բռնել, մնացել իւր սուրբ հողի վրայ:

Ո՞վ չի տալի, որ ամեն մի երկրի կեանք տուողը գիւղն է, որ քաղաքացու հայ տուողը և նրա չարքաշ օգնականը գիւղացին է: Հաց, գինի, իւղ, միս, ամեն մի բուսեղէն, ամեն մի կաթնեղէն, մի խօսքով ամեն մի բարիք տալիս է գիւղը: Գիւղացու աղի քրտինքովն է բնում, նրա կոշտ ձեռներովն են պատրաստում: Բայց խեղճ գիւղացին դրա փոխարէնը ո՞րքան է ստանում:

Կրակ ու պատուհասը միշտ անպակաս է գիւղացու գլխից: Մի տարի կարկուտն է զնասում, միւս տարի երաշտը, մի ուրիշ տարի ցաւ ու աղար է ընկնում, մորեխ ու մկներն են գալիս: Էդ բոլորն էլ աղքատութիւն են բերում, գիւղացին մնում է խեղճ, վիզը ծռած, ձեռները դռնին ծալած:

Բայց ո՞վ է մոռնում նրա համար, ո՞վ է խղճում, ո՞վ է ասում թէ աղքատացել է, գնանք օգնեք, ձեռք մեկնեք, մեր եղբայրն է: Միւս տարին

կաշխատէ, էլի փոխարէնը կտայ:

Հայը միշտ գիւղն է սիրել: Հայի սիրելի արհեստը հողագործութիւնն է:

Մի ջուխտ եղը, մին էլ մի գութան:

Դրանք են հայ գիւղացու ուղածը, նրա բոլոր էշի ու հաւէսը:

Հող, եղ ու գութան: Ուրիշ ոչինչ:

Բայց, ան, շատ շատերը զրկուած են զրանցից:

Հողը սակաւ է, շատ սակաւ: Երկիրը մեծ է, բայց գիւղացու բաժինը քիչ: Ինչքան էլ ունեցել է նա վաթսուէն տարի առաջ՝ էնքանն էլ մնում է մինչեւ օրս: Ախր այդ վաթսուէն տարուայ մէջ քանի՞ հողի է աւելացել, ուտողը ո՞րքան է շատացել:

Սրանց մասին մտածող չկայ:

Գիւղացին ինքը մենակ չի կարող իւր գլխի ճարը տեսնել: Նա ոչ ուսում ունի, ոչ գրի սե ու սխալա-կրն է ճանաչում, ոչ էլ օրէնք գիտէ: Նրա համար պէտքէ մտածեն քաղաքացի եղբայրները, կամ հենց են գիւղացիները, որոնք մի կերպ քաղաք են ընկել: Նրանցից՝ որը ուսում է առել, անուանի մարդ է դառել, որն էլ հարստացել է և մեծ մեծ քաղաք-ներում փառաւոր տներ է շինել, ապրանքներով լեքը դռքաններ է սարգել կամ զաւոդներ է բաց արել և լաւ ուտում, լաւ ապրում է իրա համար:

Բայց էն մարդը ի՞նչ մարդ է, որ մենակ իրա գլուխըն է պահում, որ իւր հայրական օջաղը միտը չէ գցում, որ իւր խեղճ եղբայրներին օգնութիւն չի անում:

Ո՞ր գիւղացին չէ ուրախացել, երբ որ լսել է թէ իրանց գիւղին էս ինչի տղան, էս ինչ քաղաքում հարստացել է, լաւ տներ է շինել, մեծ-մեծ մարդ-կանց հետ է նստում—վեր կենում:

Այո, ուրախացել է, աչքը ճանապարհ դրել, թէ էգուց կամ միւս օրը էս ինչը կգայ քաղաքից մեր դարդին դարման կանի, մեր ցաւին ճար կը գտնի, մեր էրէխանց համար ուսումնարան բաց կանի, մեր էրէխերըն էլ սե ու սխալաւ կճանաչեն, էլ էսպէս աղքատ չենք մնալ, էսպէս խաւարի մէջ չենք թափուիլ:

Բայց աչքը ջուր կտրեց հարուստ որդուն ճանապարհին դրելուց: Հարուստն իրան մոռացել է, նա էլ չի դալիս:

Ախր մինչեւ ե՞րբ: Ո՞ւր մնաց նամուսը, ո՞ւր մնաց խղճմտանքը:

Ի՞նչ պատիւ կարելի է տալ էն մարդուն, որ մոռացել է իւր վաթանը, իւր պապական օջաղը, իւր աշխատաւոր եղբորը, իւր նաչար քրոջը: Ո՞ր աղնիւ մարդը չի սսել նրան թէ ամօթ է, հօր տունը չեն մոռանալ, քրոջն ու եղբոր անտես չեն անիլ:

Հաւատա, գիւղացու համար շատ բան չի հարկաւոր: Մի թէթեւ ապրուստ: Էդ ապրուստն էլ ինքը կաշխատի, իւր հալալ քրտինքով, եթէ նրան մի եղը տաս, մի գութան և էնքան հող, որ մենակ մի տարուայ ապրուստը կարողանայ պատրաստել: Նրան հարկաւոր է մի ճանապարհ, որ մի ցաւ, մի պատու-հաս եկած ժամանակ, վիզը ծուռ չմնայ, մի պարտքատէրի դերի չդառնայ:

Դիտես ի՞նչ է գիւղացու պարտքատէրը: Մի գաղան, որ մէկի տեղ տասը պիտի առնէ, մի մանէթ կտայ, երեք ամսիցը յետոյ տասը մանէթ կը պահանջէ, եղը կտանէ, գութանը կտանէ, տան մէջ աման-չաման չի մնալ՝ բոլորը կտանէ, երեխաները դուրսը կածէ, քաղցած-ծարաւ կկոտորէ:

Ո՞վ է վայելում գիւղացու քրտինքի պտուղը: Կար-

ծում եւ ինքը:

Ո՛չ, ոչ: Մի մասը պարտքատէրն է տանում, միւս մասը հարկի տեղ է գնում, մի ուրիշը գլխին է վերցնում, տէրտէրն է խլում և ինքը վերջը մնում է տկլոր, ամբարը դատարկ, կինն ու երեխաները քաղցած:

Անբան անասունը հազար անգամ աւելի բախտաւոր է քան բանաւոր գիւղացի մարդը:

Էսօր էլ դանակը հասել է ոսկրին:

Հարուստ եղբայրներ, քար մի դառնաք: Թէ հայ էք, հայութիւն արէք, թէ վերջապէս մարդ էք, մարդու նման կացէք, ձեռք մեկնեցէք ձեր գիւղացի եղբայրներին: Զեռքից ընկնում են նրանք:

Ես գիւղացի եմ, գիւղի հարազատ որդի եմ, զուրկ եմ կանոնաւոր ուսումից, բայց իմ օջաղը լաւ եմ ճանաչում, գիւղի ցաւն ու դարդը լաւ տեսել եմ, յետոյ նրա ճարն ու դարմանը իմացել եմ:

Ինչ որ արել եմ իմ գիւղական եղբայրներին, այդ յայտնի է նրանց և Աստըծուն: Հեռու եմ ապրում գիւղից, շատ հեռու, բայց ամեն ժամանակ՝ քնելիս ու քնից վերկենալիս միշտ գիւղն է իմ մըտքիս մէջ, գիւղական եղբայրներն ու քոյրերն են իմ աչքի առաջ:

Գիւղի կարիքները, այսինքն ինչ որ հարկաւոր է նրան՝ ես փորձով եմ ճանաչել: Ամեն բան տեսայ: Եւ նրա զրութիւնը լաւացնելու համար, ինչ որ ես հարկաւոր համարեցի, էն գրեցի: Իհարկէ սխալներ շատ կլինին իմ գրածների մէջ, բայց այդ սխալների համար յոյս ունիմ կներեն: Եւ ոչ մենակ կներեն, այլ կաշխատեն, պակաս կողմերը լրացնել:

Իրար պակասութիւն լրացնելով, իրար անկեղծ ձեռք բռնելով, մեր ոյժերը միացնելք և գիւղի դը-

րութիւնը բարեկարգենք:

Գիւղացին մեր եղբայրն է, եղբօրն ուրանալը յանցանք է:

Ազնիւ մարդը մենակ իրա համար չէ ապրում:

ՍԱՐԳԻՍ ԼԱԼԱՅԵԱՆՑ.

Ի՞նչ է ՀԱՐԱՆՈՐ ԳԻՒՂԻՆ

Գիւղին հարկաւոր է երկու բան:

Հող և ուսում:

Հողը հաց կտայ, ուսումը խելք:

Հացով ապրում են, խելքով առաջ են գնում:

Հողը պիտի պահանջել հողատէրից: Ամեն մի գիւղ
հողը պիտի բաժանէ հողու վրայ:

Հողը մենակ արտի համար չէ: Հողի վրայ պիտի
բուսցնել զանազան կանաչեղէն և պտղատու ծառեր:

Ամեն գիւղ պիտի ունենայ ուսումնարան: Ուսում
նարանում պիտի սովորեն տղերքն էլ, աղջկերքն էլ:

Ուսումնարանները պիտի լինին մի դասեան և երկ
դասեան: Գիւղեր կան, որոնք մի քանի հարիւր տնե-
րից են բաղկացած: Էդպիսի գիւղերում պիտի հիմ-
նել էնպիսի ուսումնարաններ, որոնց դասարանների
թիւը հասնի մինչև երրորդի կամ չորրորդի: Այդ
տեսակ ուսումնարանները մենակ էն գիւղերի հա-
մար չեն լինիլ, որտեղ նրանք շինուած կլինին: Ոչ
էդ ուսումնարաններում ուսում կստանան և մօ-
տիկ գիւղերի երեխաները:

Զորս դասարան ունեցող ուսումնարաններ պիտի

հիմնել և էնպիսի գիւղերում, որոնք շատ են հեռու
քաղաքից: Էդպիսի գիւղերում, թէկուզ հենց հարիւր
կամ հարիւրից աւել ու պակաս տներ լինի, չորս
դասարան ունեցող ուսումնարաններ պիտի հիմնել:
Դրանց մէջ ուսում կստանան նոյնպէս և շրջակայ
փոքրիկ գիւղերի երեխաները:

Էդպէս որ լինի, այնուհետեւ գիւղացի երեխաները
էլ քաղաք չեն գնալ: Բայց նա, ով ուզում է քա-
հանայ կամ վարժապետ դառնայ, կամ հենց ուզում
է աւելի շատ ուսում ստանայ, նրա համար աւելի
հեշտ է մինչև չորրորդ դասարանը գիւղումը սովո-
րել, յետոյ կմնայ երեք դասարան, որ վերջացնէ հո-
գեւոր դպրանոցի ամբողջ ուսումը, էդ երեք դասա-
րանն էլ կարող է քաղաքում անցնել:

Քաղաքից հեռու գիւղերում չորրորդ դասարան ու-
նեցող ուսումնարանների օգուտը շատ է:

Առաջին՝ քաղաքի դպրանոցում ամեն ժամանակ
տեղ չի լինում: Երկրորդ՝ գիւղացու երեխան շատ
պրստիւտ քաղաք տանելով, գիւղական կեանքից
խամաճում է: Վերջապէս պատիկ երեխայի համար
էնքան էլ հեշտ չէ ուրիշի տան ապրելը: Յետոյ ծախ-
սերը ծանր են լինում գիւղացու համար: Շատ ան-
գամ էլ տեղ չի գտնուում, որ երեխան տեղաւորեն:

Գիւղական բոլոր ուսումնարաններում վարժապետ-
ները պիտի հենց իրանց քահանաները լինին: Դրա
համար քահանաները պիտի ուսումնով լինին:— Էն-
քան ուսում, որքան ունենում է վարժապետը:

Էդպէս գիւղացու համար հեշտ կլինի ուսումնա-
րան պահելը: Քահանայի պատիւն էլ աւելի մեծ
կլինի, ապրուստը աւելի մաքուր ու քաղաքավարի:

Էդպէս, որ լինի, քահանան կստանայ վարժապետի
ռոճիկը, մի քիչ էլ զիւ աւելի: Ինքն էլ ամեն մի

եկեղեցական օրէնք, այսինքն մկրտութիւն, պսակ, թաղում և այլն կկատարէ ձրի և էլ զանազան խօսակցութիւն չի լինիլ ժողովրդի և քահանայի մէջ: Ել ամեն մի օրէնք կատարելիս առուստուր չի սարգուիլ իրարից նեղանալ կամ իրար պակաս խօսք չին ասիլ:

Քահանայի ոռծիկը զիւղացին կտայ օրինաւոր տուրքերից ստացած արդիւնքից:

Տուրքերը պիտի հաւաքուին կանոնաւոր: Տուրքը պիտի լինի փողով և զիւղական արդիւնքներով: ցորեն, գարի, կորեկ, հաճար, բրինձ, լոբի, սիսեռ, իւղ, պանիր, հաւ, ճուտ, ձու, մրգեղէն, զինի, արաղ և էլ ուրիշ ինչ որ լինում է: Եղ բոլորից զիւղացին պիտի տայ՝ ով ինչքան ունի և ով ինչքան կարող է:

Դրանց համար ամեն մի զիւղ կունենայ շտեմարան և գանձարան:

Ամեն մի զիւղ իրանց միջից պիտի ընտրէ մի քանի հոգի՝ շտեմարանը կառավարելու, մի քանի հոգի էլ հարկաւոր են գանձարանի համար:

Ընտրուած մարդիկը պիտի ամեն կերպ աշխատեն շտեմարանն ու գանձարանը հարստացնեն:

Շտեմարանի տուրքը համարեա մենակ իրանց զիւղումը պիտի հաւաքուի: Տուրքը ամեն մարդու եկամուտին համեմատ պիտի նշանակել: Այսինքն ոչ թէ ամեն մի մարդ տարեկան էսքան ցորեն պիտի տայ կամ էսքան միրգ, էսքան զինի արաղ և այլն: Ոչ, էղպէս անյարմար է: Որովհետեւ մի մարդ կարող է մի գութան ունենալ, ուրեմն և մի ջուխտ լծկան եղը: Բայց մարդ կլինի, որ մի քանի գութան կունենայ, մի քանի ջուխտ էլ լծկան եղը: Ե, ուրեմն ճնց կլինի, որ էրկուսիցն էլ հաւասար տուրք առնուի:



Տուրքը պիտի նշանակել եկամուտի վրայ: Այսինքն ամեն մի մարդ տարուայ ընթացքում ինչքան բերք է ստացել ցորնից, դարուց, կորեկից, լոբուց, սիսեռից, խաղողից, խնձորից, տանձից, բոլոր մրգերից կամ հաւից, ձուից, ամեն տեսակ կաթնեղէնից, մինչև իսկ դարմանից, խոտից, որն էլ ձէթ կունենայ, զինի, արաղ, մի խօսքով ամեն մի բերքից պիտի մաս հանի շտեմարանի համար:

Շտեմարանն ամենքին է, ուրեմն ամենքն էլ պիտի հոգս անեն նրա համար:

Կանխքը պիտի սովորութիւն չինեն տանն ունեցածից բաժին հանել, գուլպայ, թել, ճուտ, ձու, ուրիշ ինչ որ կարող են՝ պիտի ուղարկեն շտեմարան:

Շտեմարանը ամեն մի բան օրինաւոր ցուցակով և հաշուով կմտցնէ զրքի մէջ: Յետոյ ամիսը մի անգամ կամ երկու անգամ հաւաքած բերքերը մէկ-մէկ հաշուած կուղարկէ քաղաք: Այդ բոլորն էնտեղ կը ծախուին և ստացած փողն օրինաւոր հաշուով կը յանձնուին գանձարանին:

Գանձարանի եկամուտը մենակ շտեմարանից չպիտի լինի:

Նրա կառավարող մարդիկը պիտի լինին աչքաբաց: Պիտի ճանաչեն հարուստին էլ, աղքատին էլ: Պիտի հետեւեն ամեն կողմից էլ արդիւնք հաւաքեն, գանձը մեծացնեն:

Գանձարանը պիտի ունենայ օրինաւոր զուամար:

Գանձարանի զուամարին պիտի հիմք դնեն ամեն մի զիւղի հարուստ որդիքը: Ամեն մի զիւղ հարուստ որդիք ունի թէ քաղաքներում և թէ հենց իրանց զիւղերի մէջ: Մենք զիտենք, որ թէ քաղաքների և թէ զիւղերի մէջ ապրող հարուստներից ամեն մէկը կարող է ամենապակասը մի հարիւր մանէթ տալ՝

1003
1775

իրբե հիմք գանձարանի: Եւ ոչ թէ կարող է, այլ պարտաւոր է տալ: Ամօթ եւ աններելի կլինի նրանց համար՝ եթէ չտան: Գիւղացիներն էղպէսներից բարոյական իրաւունք ունին մինչեւ իսկ պահանջել: Հարիւր մանէթ տուողը կկոչուի գանձարանի հիմնադիր անդամ: Նրանց պատկերները կտեղաւորեն գանձարանի կամ ուսումնարանի դահլիճում: Ով որ չկարողանայ հարիւր մանէթը միանգամից տալ, նա կարող է մաս-մաս մտցնել: Թող սկսի տասը մանէթից, քսանից, քսանուհինգից, միւսոյն է: Երբոր հարիւրը լրացաւ, այնուհետեւ նա կկոչուի հիմնադիր անդամ:

Էն գիւղերը, որոնք հեռաւոր քաղաքներում հարուստ որդիք ունին, էղպէսների մօտ պիտի յատուկ մարդիկ ուղարկուին: Գնացող մարդիկը պիտի խնդրեն, որ հոգս անեն գիւղի համար, ամեն մէկը նրանցից աշխատեն մի ուսումնարան ապահովացնեն:

Գանձարանը ամեն ամիս քահանայի ռոճիկը պիտի կանոնաւոր վճարէ, ուսումնարանի վրայ էլ պիտի լաւ ուշադրութիւն դարձնէ:

Գանձարանը միշտ պիտի աւել գումար ունենայ:

Եթէ գիւղացուն փող է հարկաւոր, նա պիտի պարտք անէ գանձարանից: Գիւղացու պարտքատէրը միշտ պիտի գիւղական գանձարանը լինի: Գանձարանը պիտի տայ տոկոսով: Տոկոսը ամենաշատը պիտի լինի տարեկան մի մանէթին տասը կոպէկ: Եթէ պարտք անող գիւղացին շատ է խեղճ՝ նրանից կարելի է 8, մինչեւանգամ 6 տոկոս առնել:

Գանձարանը կառավարող մարդիկը՝ ամենայն տարի մի նշանաւոր օր, պիտի դիմեն իրանց հարուստներին՝ թէ գիւղերում ապրողներին եւ թէ քաղաքներում,

եւ միշտ պատմեն իրանց գիւղի գրութիւնը ու խնդրեն, որ օգնեն, նուէրներ տան գանձարանին: Նուէր տուողների անունները իհարկէ կգրուի գրքի մէջ: Ամենայն տարի մի անգամ՝ քահանայի պարտաւորութիւնը կլինի նրանց անունները յիշել եկեղեցում՝ պատարագի ժամանակ, կամ ուսումնարանում՝ ժողովրդի առաջ: Նրանց անունները կյիշուին եւ կյայտնուին թէ՛ ամեն մէկը որքան է ընծայել:

Բարեգործութիւն անելուց աւելի քաղցը գործ չեկայ: Բարի անունը միշտ անմահ է, յաւիտեանս բարիք է անում: Մեր նոր մեծացող երեխաներն էլ օրինակ են վերցնում: Ճնց պըստկուց սրտներում տպաւորում են: Լաւ անունի համար են մտածում: Էղպէս մտածելով էլ աշխատում են լաւ մարդիկ դառնալ:

Եթէ մէկը գիւղի համար նուիրեց մի էնպէս գումար, որ նրա տոկոսով միշտ ապահով կպահուի ուսումնարանը, այն ժամանակ թող ուսումնարանը հենց նրա անունով կոչուի: Օրինակ՝ եթէ մի տասը հազար մանէթ նուիրեց մի Մարկոս, մի Գրիգոր, այն ժամանակ ուսումնարանը թող կոչուի Մարկոսեան կամ Գրիգորեան ուսումնարան: Նրա պատկերը ուսումնարանի դահլիճում կախեն, նրա յիշատակին ամենայն տարի եկեղեցում պատարագ անեն, իսկ ուսումնարանում հանդէս կատարեն: Սշակերտներին թող պատմեն նրա արած բարութեան մասին:

Տասը հազար ռուբլու տոկոսը յաւիտեանս ապահով կպահէ գիւղական մի դասեան ուսումնարանը:

Տասը հազար ռուբլի կարող են լրացնել եւ մի քանի հոգի՝ երկու, երեք մինչեւ իսկ չորս, հինգ հոգի: Եւ էդ բոլոր հոգիներն էլ կկոչուին ուսումնարանի հիմնադիրներ եւ գիւղի անմահանալի բարերար-

ներ, որոնց պատկերները նոյնպէս կանգաւորեն ուսումնարանում և կ'իշխեն միշտ:

Եթէ այդպէս ապահովացնեն զիւղական ուսումնարանները, այնուհետեւ զիւղը կամայ-կամաց շունչ կ'քաշէ, զիւղացին աչք բաց կանէ, չարն ու բարին կ'արողանայ հասկանալ և էլ նեղութիւն չի տալ իւր հարուստ կամ իւր քաղաքացի եղբօրը:

Հարուստը հանգիստ ապրելու համար պիտի հետեւէ աղքատի ախն ու վախը կտրցնէ: Իսկ աղքատի ախն ու վախն էլ մենակ օգնութիւն անելով կ'արհիլի է վերջացնել:

Շատ ու շատ հարուստներ կան, որոնց համար տասը հազարները մեծ գումար չէ, բայց տասը հազարը մի զիւղ խաւարիցը հանում է և մի քանի տարուայ ընթացքում աղքատութիւնը վերացնում է նրա միջեց:

Այո՛, միայն ուսումը կ'արող է աղքատութիւնը վերացնել:

Անուսում մարդ էլ կայ, ճշմարիտ է, բայց դա պատահական բան է:

Գիւղացու համար մենք շատ մեծ ուսում չենք ուղում. էնքան լինի, որ կ'արողանայ հասկանայ իւր դրութիւնը, որ մի քիչ բարձր խօսողի առաջ կուչ չգայ, որ իւր իրաւունքը, այսինքն ինչքան, որ իրան տուած է, ուրիշի ոտքի տակ չընկնի: Թէ չէ՝ ով վրայ է հասնում խեղճ զիւղացու կաշին է մաշկում: Մինչև անգամ մի անզգամ ետսաւուլ, մի քոսոտ աքցի զչի, մի ագահ ու անկիրթ տանուտէր ամենքն էլ՝ զիւղացու հոգին հանում են, խաբում են, սուտ են խօսում և ինչ որ ունի-չունի ձեռիցը խըլում են: Իսկ ուսումը նրա աչքը բաց կանի, էլ նա էդ խաբեբաներին զերի չի դառնալ:

Քահանան, որ, ինչպէս ասացինք, կլինի և վարժապետ, պիտի աշխատէ ժողովրդի սէրը վառ պահել՝ ինչպէս դէպի իրար, էնպէս էլ դէպի ուսումնարանը և դէպի շտեմարանն ու գաճարանը: Քահանան միշտ պիտի բացատրէ, որ շտեմարանի և գաճարանի տէրը մի մարդ չէ, նրանց տէրը ամբողջ ժողովուրդն է, ուրեմն պիտի աշխատել նրանց միշտ հարստացնել:

Քահանան ինքը պիտի շատ թէ քիչ տեղեակ լինի զիւղատնտեսութեան, կաթնատնտեսութեան, այգեպանութեան, երկրագործութեան, նաև մեղուաբուծութեան և շերամապահութեան:

Էս բոլորը շատ ծանր գիտութիւններ չեն:

Մենք չենք ասում, որ էս բոլորի մէջ վարժապետ քահանան կատարեալ լինի կամ մասնագէտ լինի: Այ՛ ման բանից քիչ իմանալը, քիչ հասկացողութիւն ունենալը դժուար չէ: Երբ ինքը քահանան ամենքից քիչ-քիչ տեղեկութիւն կ'ունենայ, այնուհետեւ ինքն էլ կ'րացատրէ ու կ'սովորացնէ զիւղացիներին:

Քահանան պիտի միշտ եկեղեցումը և կամ կեանքի մէջ բացատրէ ժողովրդին զանազան սովորութիւնների աւելորդ լինելը:

Օրինակ՝ նա պիտի բացատրէ ննջեցեալների համար զանազան ծախսերի անմիտ և աւելորդ լինելը: Մեռնողը գնաց: Եթէ նա թողել է արժանի յիշատակ, էդ պիտի երեւայ նրա արած գործի մէջ: Կենդանի ժամանակ ինչ բարութիւն արել է, կամ ինչ բարի կտակ թողել է, բաւական է: Նրա յիշատակը իւր արածներովը կ'յարգուի: Առատ ժամահացները, վառած մոմերը և ուրիշ զանազան ծախքերը մի մազի չափ պատիւ չեն բերիլ նրա յիշատակին:

Իսկ եթէ հանդուցեալը ինքը կենդանի օրօք ոչինչ

չի արել, էն ժամանակ նրա սզգականները, եթէ կամենում են իրանց մեռելի յիշատակը յարգանքի արժանացնել, թող ժամահացի փոխարէն մի որոշ գումար յատկացնեն զիւղական գանձարանին: Ժողովուրդըն էլ ամենայն տարի պարտաւոր կլինի էդպէսների յիշատակին հոգեհանգիստ կատարել: Վերջապէս էդպէսների յիշատակը անմոռաց կմնայ:

Մի խօսքով ժամահացը միանգամայն պիտի վերանայ: Իհարկէ կստատահի, որ մի գիւղում մի նընջեցեալի յիշատակը յարգելու համար ուրիշ գիւղեց ժողովուրդ կամ քահանայ կգան, էն ժամանակ էդպէսներին ուտացնելը ժամահաց չի կոչուիլ: Դա միայն հիւրասիրութիւն կհամարուի: Շատ պարզ է, որ ուրիշ տեղեց եկողը պիտի մի տեղ ունենայ, որ ճաշ անէ:

Շատ անմիտ ծախսեր են լինում և ուրիշ զանազան ուրախութիւնների ժամանակ:

Տեսնում էք մէկը պսակում է և իւր հարսանիքը հետևում է գեղեցիկ անել: Գեղեցկութիւնն էլ ուրիշ բանի մէջ չեն տեսնում: Նա հենց մենակ անմիտ ծախսերի մէջ է: Մի ւրիշն էլ հետևում է իւր հարսանիքը հարևանի հարսանիքից աւելի գեղեցիկ անել, այսինքն աւելի մեծ ծախսեր անել: Էս բոլորը պիտի միանգամայն յիմարութիւն համարել: Շուայլ ծախսերը, աւելորդ ուտել-խմելը իսկի գեղեցկութիւն չի կարելի ընդունել: Աւելորդ ծախսերի փողը պիտի յանձնել զիւղական գանձարանին:

Եթէ մի գիւղում էլ աղքատ չի լինիլ, էնտեղ ամեն օր կարելի է ուրախութիւն անել, բայց առանց շուայլ ծախսերի: Իսկ եթէ մէկը շուայլ հարսանիք է անում և հարևանը աղքատ է, տնքում է, ցաւում է, էն ժամանակ էդ հարսանիքը, չի կարելի ուրախու-

թիւն համարել:

Էսպէս էլ նշանդրէքը, մկրտութիւնը և ուրիշ ամեն տեսակ հիւրասիրութիւնները:

Քահանան պիտի միշտ բացատրէ, միշտ քարոզէ, կենդանի խօսքով ազդէ: Ինքն էլ իւր կեանքի, իւր նիստի ու կացի մէջ պիտի աշխատէ միշտ բարի օրինակ դառնալու:

Պիտի վերացնել մատաղ անելու զանազան սովորութիւնները:

Առաջին՝ սովորութիւն է գիւղերում տարեկան երկու անգամ մատաղ են սարգում ժողովրդի հաշուով. - Զատկին և համբարձմանը:

Ի՞նչ օգուտ ունի այդ սովորութիւնը:

Ոչինչ:

Ժողովրդից հաւաքած փողերով հաց ու ոչխարներ են առնում, մօրթոտում, ուտում-խմում, ուրիշ ոչինչ: Աւելորդ բան: Մեծ բաժինն էլ իհարկէ հասնում է ճարպիկներին: Եւ էսպէս՝ ոչ մի օգուտ ունի, ոչ մի միտք ունի, ոչ կրօնական պարտաւորութիւն է, ոչ էլ հոգու շահ է: Բայց քանի որ ժողովրդի մէջ սովորութիւն է դարձած, քանի որ ժողովուրդը տարեկան երկու անգամ կարող է կոպէկներ հաւաքելով մատաղի համար օրինաւոր գումար շինել, թող հենց էդ մատաղի ժամանակները՝ Զատկին, համբարձմանը, մինչևանգամ Զրօրհնէքին փող հաւաքուի և գումարը յանձնուի գանձարանին:

Մատաղի մի ուրիշ սովորութիւնն էլ սուրբերի մատաղն է:

Համարեա ամեն մի գիւղացի ուխտաւոր է օր և է սուրբի: Էդպէս էլ ամեն մէկը պարտաւոր է համարում իրան ամեն տարի գոնէ մի անգամ մատաղ տանել իւր սուրբի համար:

Մատաղը լինում է ոչխար: Բայց մենակ ոչխարը բաւական չէ: Դրա հետ պիտի լինի զինի, արաղ, միրգ և ուրիշ զանազան ուտելու բաներ:

Մի խօսքով ամենայն տարի, ամեն մի գիւղացի իւր սուրբի համար մատաղ անելու ամենապակասը կճախսէ 4—5 մանէթ: Իսկ եթէ ամեն տարի 4—5 մանէթը մօտէ գիւղական զանձարանը, էն ժամանակ առատ եկամուտ կունենայ զանձարանը և շատ շուտով էլ կմեծանայ նրա հարստութիւնը:

Քահանան պարտաւորէ կամայ-կամայ վերայնել մեր եկեղեցում օտար տեղից եկած սովորութիւնները: Բացի օտարներից եկածները մենք մինչև անգամ աւելորդ ենք համարում մօմ վառելու սովորութիւնը:

Մօմ վառելու փոխարէն աւելի լաւ է եկեղեցու շէմքից կախել մի փողաման: Ամեն անգամ ժամաւորը եկեղեցի մտած ժամանակ, կամ զուրս գալիս կարող է փող զցել այդ ամանի մէջ: Այդ փողերն իհարկէ կմտնեն զանձարան: Եւ որովհետեւ զանձարանը միշտ պիտի օգնէ աղքատներին, ուրեմն կնշանակէ, որ գիւղացու մօմի փողը գնաց աղքատների օգտին: Իսկ էդ տեսակ տուրքը Աստուծուն աւելի հաճելի և ընդունելի է, քան զուր տեղից մօմ վառելը:

Աղքատների զրութեան համար պիտի սրտով մտածել Մանաւանդ պիտի մտածել որբերի տէր այրիների մասին, նաև էն կնանոց մասին, որոնց աշխատաւոր աղամարդիքը հիւանդ-ընկած են լինում:

Մեր գիւղական կանայք աշխատաւոր կանայք են, նրանց պիտի միջոց տալ, որ կարողանան երեխաներ պահել: Շտեմարանը նրանց պիտի տայ, ինչ որ հարկաւոր է, բուրդ, թել, ճախարակ, սանդեք, իլիկ ու կանանց համար ամեն տեսակ զործիքներ:

Իսկ գիւղական շտեմարանը իւր պահեստում միշտ

պիտի պահէ ամեն տեսակ երկրագործական և տընտեսական զործիքներ. գութան, արօր, խօփ, ձեւիչ, մանգաղ, գերանդի, ճախարակ, ոստան, ջուլհակ, խնոցի, բուրդ գլելու սանդեք, թել մանելու իլիկներ և այլն:

Այդ բոլորից կարելի է և ծախել կարելի է և քրեհով տալ: Աղքատներից կարելի է քրեհ չափել: Շատերն էլ կարող են տանել ապառիկ, կամ փողը կարող են վճարել քիչ-քիչ: Մինչևանգամ փողի դիմաց՝ կալի ժամանակ կարող են ցորեն տալ կամ բացի ցորենից ուրիշ ինչ բերք էլ, որ կունենան, էն կարող են տալ:

Տուրքեր պիտի հաւաքել և զանազան կալուածատերերից՝ և անղաւակ մեռնող հարուստներից:

Շատ գիւղեր կան, որոնք որոշ տուրք են տալիս իրանց կալուածատերերին: Առաջինը էդ տուրքի չափը պիտի որոշէ գիւղի ժողովուրդը՝ կալուածատիրոջ հետ միասին, յետոյ կալուածատէրը ինքն էլ իւր արդիւնքից առանձին արդիւնք պիտի տայ գիւղի զանձարանին և շտեմարանին:

Հայ է՝ թէ թուրք կալուածատէրը, միևնոյն է: Էս կամ էն ազգի պատկանելը՝ նշանակութիւն չունի: Հայը կարող է թուրքի գիւղում կալուածատէր լինել, թուրքն էլ հայի գիւղում, երկու դէպքումն էլ միևնոյն են:

Մեր միտքը շատ պարզ է:

Կալուածատէրը ստանում է գիւղից արդիւնք, նա էլ պարտաւոր է գիւղի հասարակութեան օգտին իւր կողմից, իւր ստացած արդիւնքից բաժին հանել: Ուրիշ ոչինչ:

Կան անղաւակ հարուստներ: Շատ անգամ էդպէսները մեռնում են և իրանցից յետոյ օրինական ժա-

ռանդ չեն թողնում: Էն ժամանակ դուրս են գալիս
զանազան ազգականներ և անտէր մնացած հարստու-
թիւնը ալան-թալան են դարձնում:

Էդպէս հարուստների վրայ պիտի օրինական պար-
տաւորութիւն զնել, որ իրանք իրանց կենդանութեան
ժամանակ օրինաւոր կտակ անեն զանձարանի օգտին,
կամ հենց զիւղի ուսումնարանի անունով:

Իհարկէ էդպէս մարդկանց անուններն էլ կմտնեն
բարեբարների ցուցակը: Նրանք անմահ կմնան իրանց
ժողովրդի մէջ: Եւ ինչքան լաւ է, կտակն անել
առողջ ժամանակ, կենդանի օրօք էլ կատարել էդ
կտակը և իւր աչքով տեսնել իւր արած բարութիւնը,
իւր ձեռքով քաղել իւր վարած սերմի պտուղները:

Էդպէս պիտի անեն և էն բազմաթիւ հարուստ-
ները, որոնք արու զաւակ չունենալով, իրանց մահից
յետոյ բոլոր ունեցածը բաժան-բաժան է դառնում
փեսաների մէջ և իրանց յիշատակն էլ աննշան կոր-
չում է:

Էդպէսները պիտի հետեւեն բարի յիշատակ թող-
նել ժողովրդի մէջ, պիտի մտնեն բարեբարների ցու-
ցակը, ուրեմն պիտի հենց կենդանութեան օրօք կա-
տարեն իրանց բարեգործութիւնը, պիտի, ինչպէս վե-
րեւ ասացինք, իրանց արածը իրանց աչքով տեսնեն
և հոգով էլ մխիթարուին, մարմնով էլ:

Առ հասարակ շատ յիմար սովորութիւն է, երբ
կտակը գրում են և կենդանութեան օրօք թողնում
են ընկած: Միայն մեռնելու ընդէն պատուիրում
են մէկին կամ միւսին, որ իրանց կտակը անկատար
չթողնեն:

Էդ ձևով շատ ու շատ կտակներ են կորել: Շա-
տերը կեղծել են, շատերն էլ կտակատարները հենց
իրանց բարեկամների օգտին են սարգել: Ուրեմն կտա-

կողի կամքը մնացել է միշտ անկատար, յիշատակը
կորել է և, ինչպէս ասում են, ինքն էլ կորել է
հոգով էլ, մարմնով էլ:

Կտակներ անողները պիտի չքաշուին իրանց ունե-
ցածիցն: Ով ինչքան էլ թողնէ իւր ժողովրդի, իւր
հասարակութեան համար, նա միշտ կկոչուի բարեբար,
նրա անունը որդոց-որդի կյիշուի իւր ժողովրդի
մէջ: Բարի դործը, երբ սրտանց է կատարւում, նա
միշտ զեղեցիկ է, միշտ անմահ է: Մեծ է արած բա-
րիքը, թէ փոքր, դրանք նշանակութիւն չունին: Մի
աղքատ կին իւր վերջին ունեցածը զցեց Քրիստոսի
զանձանակի մէջ: Դրա վրայ կեղծաւորները ծիծաղե-
ցին, բայց Քրիստոս էդ աղքատ կնոջ տուածը ամեն-
քից շատ համարեց և կնոջն էլ ամենքից շատ օրհ-
նութիւն հասաւ:

Ուրեմն ով ուզում է բարութիւն անելու համար
կտակ անել, նա պիտի չափին ու կշեռքին մտիկ չանէ:
Ամեն մի չափով տուածն էլ սիրելի է և յաւիտեան
արժանի օրհնութեան:

Ամեն մի զիւղը առանձին պիտի ունենայ իւր սեպ-
հական հոգը: Էդ հոգը կպատկանի ամբողջ զիւղի
հասարակութեան, ուրեմն նա կլինի բոլոր ժողովրդի
սեպհականութիւն: Նրանից ստացած արդիւնքը բոլո-
րովին կմտնի զիւղի շտեմարանն ու զանձարանը: Այդ
տեսակ հոգեր զիւղերը պիտի ստանան կալուածա-
տէրերից: Կպատահի, որ որ և է կալուածատէր կու-
ղենայ իւր հոգը ծախել է ժամանակ զիւղի զանձա-
րանը պիտի առնէ էդ հոգը և միացնէ իւր հոգի հետ:

Եթէ կալուածատիրոջ հոգը քիչ է, էն ժամանակ
զիւղացիք պիտի էդ քիչն առնեն, իսկ եթէ շատ-շատ
է, այնուհետեւ կալուածատէրը պիտի առանց փողի
ինքը բաժին հանէ զիւղի և զիւղացիների համար:

Առ հասարակ հողի տէրը պիտի լինի հողագործը:

Աստուծոյ հրամանն է, որ ամեն մարդ իւր ճակատի քրտինքով ապրէ, ուրեմն Աստուծոյ տուած օրէնքին հակառակ կ'լինի, եթէ մէկն արեւի, անձրեւի տակ հալուի, մաշուի, իսկ միւսն՝ իւր տեղը հանգիստ նստած, ուտէ, խմէ, քէֆ անէ, վերջն էլ դայ, ուրիշի աշխատանքը վերցնէ, տանէ:

Գիւղը բացի վարելահողից, ամեն ժամանակ պիտի ունենայ և արօտատեղեր և անտառներ:

Անտառների վրայ պիտի լաւ ուշադրութիւն դարձնել: Պիտի աշխատել ծառերի տեսակները շատացնել և թիւը մեծացնել: Փայտեղէնի համար հարկաւոր է խիստ կարգադրութիւն: Ամեն տարի պիտի յայտնի չափով փայտ հանել:

Գիւղացուն միշտ պիտի բացատրել անտառի առողջապահական նշանակութիւնը:

Անտառը մենակ փայտի համար չէ, գեղեցկութեան համար չէ:

Անտառին մօտիկ՝ օդը միշտ մաքուր և առողջարար է լինում: Դրա համար էլ պիտի հետեւել գիւղերի չորս կողմին անտառներ ունենալ:

Շատ պարզ հասկանալի է, եթէ մի ծայրից սկսես ծառերը կոտորել ու նրանց տեղը չհետեւես նորերը բուսցնել, էն ժամանակ անտառի տեղը ոչինչ չի մնալ: Ուրեմն գիւղը փայտից էլ կ'զրկուի, կանաչ անտառից էլ: Եդ պատճառով պիտի առանձին ուշադրութիւն դարձնել անտառների վրայ, որպէս զն նրանք չփչանան:

Շատ գիւղերի մօտ պիտի էլ կարելի է տեսնել գեղեցիկ, կանաչ թումբեր, սարերի լանջեր, բոլորովին տկլոր, ծածկուած մենակ խոտով:

Տեղ-տեղ տեսնում ես մէկ-մէկ ծառեր են կանգ-

նած: Դրանք իհարկէ անտառների մնացորդներ են և էդ լանջերն ու թումբերը անտառների տեղեր են, որ անխղճօրէն մնացել են ծառից զրկուած: Բայց որքան փառաւոր կ'լինէր գիւղի տեսքը, եթէ էդ անտառները մնացած լինէին իրանց տեղերում:

ԳԻՒՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Գիւղական կառավարութիւնները պիտի տեղաւորուին իւր մէջ:

Ամեն մի գիւղ պիտի իւր մէջ ունենայ իւր դատարանը, զանազան պայմաններ հաստատող կառավարութիւն: Մինչեւանգամ ամուսնական խնդիրներ, հողային վէճեր, քահանայական, դպրոցական և ուրիշ զանազան գործեր պիտի վճռուին գիւղի մէջ, իւր դատարանում:

Դատաւորները և ամեն տեսակ կառավարիչները պիտի ընտրուին իրանցից և պիտի ընտրուին միշտ իրանց մօտ ապրող մարդկանցից:

Հին ժամանակները հենց էդպէս է եղել: Գիւղի բոլոր գործերը ծերունիների ժողովն է վճռել: Թուրքերի տիրապետութեան ժամանակ էդ ժողովին ասում էին աղսախակալների ժողով: Աղսախակալներ այսինքն սիպտակ միրուքաւորներ, որ նշանակում է ծերունիներ:

Հին ժամանակներում էդպէս են հասկացել, այսինքն կարծի են թէ ծերունին շատ բան կարող է հասկանալ, որովհետեւ նա շատ է ապրել, շատ է տեսել, ուրեմն շատ էլ իմանում է:

Բայց հիմա էն ժամանակները փոխուել են: Հիմա երիտասարդների մէջ էլ շատ ու շատ խելօքներ կան: Մի խօսքով տարիքը նշանակութիւն չունի: Ամեն մի գործի համար պիտի ընտրել խելօք և արդարութիւնն ու ճշմարտութիւնը պահպանող մարդ:

Պատիժը հին ժամանակներում հիմիկուայ «բոյ-կոտն» է եղել:

Էսպէս՝ եթէ գիւղացիներից մէկը մի աններելի մեղք է արել, ծերունիների ժողովը վճռել է, որ գիւղացիները նրան բարե չտան, հետը չխօսեն, աղ ու հաց չկարեն և ոչ էլ առևտրական գործի մէջ մտնեն:

Էն ժամանակներում ամենամեծ մեղքը համարուել է անբարոյականութիւնը: Իսկ ամենասարսափելի անբարոյականը եղել է նա, ով որ անմաքուր է կացել կնանոց վերաբերմամբ: Վայը եկել ու տարել է նրան, ով որ անպսակ կին է պահել, կամ ուրիշ կնոջ վրայ խեթ աչքով է նայել: Էդպէս մարդը մեծ մեղաւոր է համարուել: Նրա պատիժը «բոյ կոտն» է եղել: Նրա հետ գիւղումը ոչոք չի խօսել, չի բարեկել, գործ չի ունեցել:

Էդ ձևով պատժուել են և էն կնանիքը, որոնք նոյնպէս անմաքուր են կացել:

Ժողովրդական կառավարչութիւնը պիտի մտցնել և հիմա:

Ամեն մի գիւղում պիտի ընտրուին երգուեալ դատաւորներ: Յանցանքների տեսակները պիտի դասաւորեն: Ճշմարիտ է, ամեն յանցանք էլ՝ յանցանք է, բայց էլի յանցանքների ծանր ու թեթեւն էլ պիտի նկատի առնել: Ամեն յանցանքի համեմատ էլ պիտի որոշել՝ պատժի ձևը: Պատիժը ծեծով կամ բանտարկելով չպիտի լինի: Դրանք թոյլ պատիժներ են: Ամենածանր պատիժը «բոյ կոտն» ձևն է, այսինքն բարե չտալ, չխօսել, մի խօսքով ոչ մի յարաբերութիւն չունենալ:

Էդպէս ծանր պատիժները պիտի կատարուին շատ քիչ դէպքերում:

Առաջին, որ մեղաւորի մահը չեն կամենալ: Կաշ-

խատեն, որ նա ինքն ուղղէ իւր մեղքը և հետեւէ, որ յիտ գայ դէպի ճշմարիտ կեանքը:

Պատժել կարելի է և տուգանքներով: Բայց միշտ պիտի նկատի առնել յանցանք գործող մարդը: Մարդ կայ, որ կարող է մի մեղք անէ, բայց զրա համար նրան կներեն, մարդ էլ կայ, որ էդ միևնոյն տեսակ մեղքը եթէ անէ, ներել չի կարելի: Ուրեմն մի տեսակ մեղքի համար էլ չի կարելի մի չափով տուգանք նշանակել: Ունեորից պիտի շատ առնել, չունեորից՝ քիչ:

Էդ տուգանքներն իհարկէ կմտնեն գիւղական գանձարան:

Ամեն մի պայմանագրութիւն, թէ առևտրական կամ թէ ընկերավարական գործի համար պիտի հաստատէ գիւղական կառավարութիւնը:

Կառավարութիւնը կունենայ օրինական կնիք և նրա վճիռն ու կնքած թղթերը կունենան էլի էնպէս զօրութիւն, ինչ զօրութիւն, որ ունին հիմիկուայ նօտարիուսները:

Եւ նօտարիուսների նման էլ գիւղական կառավարութիւնը ամեն մի պայմանագրութեան հաստատելու համար կստանայ իւր վարձը: Վարձի համար գիւղացին կարող է տալ կամ փող, կամ փողի գիմնոց ցորեն, գարի, ոչխար, հաւ, ձու, գինի, արագ և առհասարակ ինչ որ կարող է:

Էդ եկամուտներն էլ կմտնեն գիւղական գանձարան:

Ամեն մի գիւղ պիտի ունենայ հասարակական ախոռ, ուրեմն և անասուն՝ եղ, կով, ձի, ոչխար, էշ, ջորի և այլն:

Էդ բոլորն էլ գիւղի գանձարանի և շտեմարանի համար աշխատաւորներ կլինին: Բոլորն էլ վարձով

կարուին թէ տեղական զիւղացիներին և թէ հարեան զիւղացիներին: Վարձը կարելի է ստանալ էլի կամ փողով կամ ուրիշ բանով: Վարձատրութեան չափը կնշանակէ շտեմարանի կառավարութիւնը:

Շտեմարանի կառավարութիւնը պիտի մեծ խնայողութիւն անէ բոլոր եկամուտների վերաբերմամբ: Ամեն բան մանրամասն պիտի մտցնել գրքի մէջ, պիտի սարգ ու կարգով պահպանել և ամեն ինչն էլ պիտի պէտքական դարձնել:

Օրինակ՝ մեր զիւղերում ծառերի և առհասարակ այգիների պահպանելու ձևը չգիտեն: Բոլոր խնամքը թողնուած է Աստուծոյ վրայ: Իսկ Աստուած մարդու խելք է տուել, որ աշխարհի բաները կարողանայ հասկանալ: Իհարկէ խելքն էլ առանց ուսումի շատ բան չի անիլ:

Մեր զիւղերում տեսել ենք, որ մեր զիւղացին հողը պարարտացնելու միջոց չգիտէ: Իսկ քանի որ էդ միջոցն ունի և ինքը օգուտ քաղելու տեղ՝ դէն է ածում:

Մենք տեսել ենք, որ զիւղացին անասունների աղբը աւելորդ համարելով, դէն է ածում, շատերն էլ այրում են, որ մոխիր դառնայ, փչանայ: Բայց էն ինչ աղբը պարարտացնում է հողը: Ուրեմն աղբը մոխիր շինելու տեղ, պիտի ածեն այգին, որ ծառերի տակի հողը պարարտացնէ: Դեռ լաւ է, որ ուրիշ տեղերում աթար են պատրաստում: Դարաբաղում աթարի գործածութիւնը ընդունուած չէ:

Մէկ էլ պիտի ասենք, որ զիւղական դպրոցներում, որտեղ վարժապետը, ինչպէս ասացինք, քահանան պիտի լինի, նա անպատճառ պիտի իմանայ և զիւղատնտեսութիւն:

Իսկ եթէ վարժապետ քահանան իւր ուսումը պիտի

վերջացնէ թեմական դպրոցներում, էն ժամանակ էդ թեմական դպրոցներումն էլ պիտի սովորացնեն զիւղատնտեսութիւն: Քահանան, ի հարկէ, պիտի լաւ իմանայ և կեղեցոյ և կրօնի պատմութիւն, բայց մենակ զրանց իմանալը շատ քիչ ա: Քահանան մենակ օրէնք կատարող չէ. մկրտող, պսակող, թաղող և այլն: Նա վարժապետ ա: Նա պիտի շատ բան իմանայ: Եթէ նա քահանայ ա դառել ժողովրդին ծառայելու, այսինքն իբրեւ հովիւ՝ միշտ նրան պահպանելու, էն ժամանակ նա պիտի էնպէս զիտութիւն ունենայ, որ կարողանայ ժողովրդի ցաւին դարման անէ: Եւ եթէ նա զիւղում պիտի լինի և վարժապետ, պիտի ստանայ օրինաւոր ոռճիկ և պիտի ապրէ՝ էլ առաջուայ նման ոչ թէ մուրացկանութեամբ, այլ քաղաքավարի, ուրեմն նա էլ պիտի ամեն դէպքում օգնական լինի ժողովրդի համար:

Առ հասարակ քահանան պիտի էնպէս լինի, որ զիւղի մէջ ամենքն էլ նրան սիրեն: Երպէս լինելու համար նա քահանայ ձեռնադրուելուց առաջ դեռ պիտի լաւ ճանաչէ ժողովրդին, լաւ իմանայ նրա ցաւն ու դարդը, նրա ուրախութեան ու տրամուլեան պատճառները, իմանայ թէ ի՞նչ ա հարկաւոր էն զիւղին, որտեղ նա ուղում ա հովիւ լինել: Այնուհետեւ կարող ա յարմար լինել ժողովրդի համար, կարող ա միշտ նրա ցաւին օգնական լինել:

Քահանան պիտի լաւ ճանաչէ և բոլոր հարեան զիւղացիներին: Այսինքն տեղեկութիւն պիտի ունենայ նրանց ցաւ ու դարդիցն էլ: Յետոյ պիտի բարեկամութիւն հաստատէ ամենքի հետ: Ամենքին էլ պիտի քարոզէ սէր, կղբայրութիւն, որպէս զի բոլոր զիւղերը առաջ գնան մի ձանապարհով, ամենքն էլ ուսում

ստանան, ամենքն էլ իրար սիրտ հասկանան, իրար օգնեն, պահպանեն:

Գիւղերը պիտի հեշտ գնալ-գալ ունենան իրար հետ: Դրա համար հարկաւոր են յարմար ծանապարհներ: Ծանապարհները հէնց իրանք՝ գիւղացիք կշինեն: Գործից ազատուած ժամանակ՝ ամենքն էլ կգնան և էնպէս կշինեն ծանապարհները, որ գնալ-գալը շատ հեշտանայ: Ժամանակին կարելի ա խճուղի էլ շինել — (շօստէ):

Ծանապարհները շինելուց յետոյ, մեր գիւղացիք պիտի փոխեն իրանց հիմիկուայ սայլերի ձևերը: Հիմիկուայ սայլերը շատ ծանր են շարժուում, զրանցով շատ պործ չի շինուում: Պիտի ծանր սայլերը թեթեւացնել:

Ծանր սայլեր պահելու համար էլ, գիւղացին մինչև հիմա բանեցնում ա եղանն ու գոմշին: Երկուսն էլ ծանր շարժուող, թէպէտ երկուսն էլ համբերատար ու չարքաշ:

Ի հարկէ, հիմիկուայ քարքարոտ, վատ ծանապարհների համար դոմէշներին ու եղներին աւելի յարմար ա բանեցնել, բայց ծանապարհները շինելուց յետոյ գոմշի ու եղան փոխարէն պիտի բանեցնել ձիւն:

Առաջին՝ ձիւն աւելի արագ ա շարժուում, երկրորդ նա աւելի յարմար ա բանեցնելու համար:

Ձիւն կարելի ա և դուրանին լծել, կարելի ա և բեռն դնել վրան և նստել ու ծանապարհորդութիւն անել, բայց եղան ու գոմշի վրայ ծանապարհորդութիւն չի կարելի անել:

Պիտի փոփոխութիւն մտցնել վար ու ցանքսի և հունձի ձևերի մէջ: Մեր երկրում լուսաւորուած երկրների նման դեռ զանազան մեքենաներ չեն բանեցնում: Ամեն ինչ կատարւում ա հին, պատական ձև-

րով, որոնք ի հարկէ, շատ ծանր են և շատ քիչ օգուտ բերող:

Կարելի ա ասեն թէ՝ մեր երկիրը սարոտ ա, խորթ ու բուրդ ա, մեքենաներով չի կարելի գործ տեսնել: Էդպէսներին չպէտք ա լսել, որովհետեւ ժամանակն էնքան լուսաւորուել ա, մարդու միտքը էնքան առաջ ա գնացել, որ էլ սար, ձոր նրան արգելք չեն դառնում: Մարդը յաղթել ա ամենքին, և սար ու ձորում բանեցնելու համար էլ ուրիշ մեքենաներ ա հնարել:

Պիտի մեծ ուշադրութեամբ հետեւել լուսաւոր, առաջ գնացող ազգերին: Անպատճառ էն երկրներու ժրն էլ ժողովուրդը ամեն մի նոր բան տեսնելիս, կարծել ա դժուար, անհասկանալի բան ա, բայց հիմա լուսաւորուած երկրներում ամեն մի մեքենայ մի հեշտ բանեցնելու խաղաղք ա դառել:

Կար ժամանակ, որ կարի մեքենաները՝ մեր քաղաքներում մենակ հարուստների տներումն էին երևում: Էն ժամանակներն էլ մեր գիւղացի կինը՝ երբ որ տեսել ա էդ մեքենան, տեսել ա թէ՛ ինչպէս ա նա կարուժ զարմացել ա ու շատ մեծ զարմանքով պատմել ա իւր մարդուն: Մարդն էլ ասել ա, որ ֆռանգի գործ ա ֆռանգն երն էլ սատանաներ են: Ինչ սատանայութիւն ասես, նրանք են հնարում: Յետոյ էդ մարդն էլ իւր կողմից կնոջը զարմացրել ա, որ ինքն էլ տեսել ա գործիք, որ կախուած ա պատի վրայ, որ մարդու ձեռք նրան չի դիպչում, բայց ինքն անդադար ձայն ա հանում: Նրա երեսը ծածկուած ա մի նախշուն, փոքրիկ տախտակի կտորով, մի արկաթէ, մեծ ասեղ պըտրտում ա էդ տախտակի երեսին, յետոյ ամեն մի ժամը մի անգամ նրա միջից դուրս ա գալիս մի փոքրիկ բլբուլ և կենդանի ձայնով «կու-կու» կանչելով, հասկացնում ա մարդկանց,

որ օրուայ այս ինչ ժամանակն ա և այլն:

Այն, ըլէլ են էդպէս ժամանակներ և ոչ շատ վաղուց, որ երկու ամուսինները սարսափած՝ իրար պատմել են իրանց աչքով տեսած հրաշքների մասին:

Բայց էդ ժամանակներն անցել են և շատ շուտ են անցել:

Հիմա էն զարմացող գիւղացու պատին կարելի ա տեսնել ժամացոյցը, իսկ նրա կնոջ թախտի վրայ՝ կարի մեքենան:

Էսպէս էլ ամեն մի նորութիւն, կարելի ա, որ առաջին անգամ զարմանք թուայ գիւղացու համար, բայց երբ նա հասկանում ա նրա ինչ լինելը, էլ զարմանքը անցնում ա:

Ամեն մի նորութիւն, եթէ հարկաւոր կլինի գիւղացուն և օգուտ կրերէ նրան, պիտի շուտ ցոյց տալ պիտի հասկացնել:

Հայ գիւղացին էլ, որքան չարքաշ ա էնքան էլ շնորհքով: Հիմա ամեն մի նորութիւն շատ էլ չի դարմանում նրան: Մի նոր բան տեսնելիս, նա հիմա ուղղակի ասում ա թէ՝ աշխարհը քանի գնում ա լուսաւորուած ա, մարդու ձեռից ամեն բան դուրս ա դալիս, վայ նրան, որ յետ կմնայ:

Էսպէս ասելով, գիւղացին սրտիցը մի խոր հառաչ ա հանում:

Էդ վայր նա իւր գլխին ա տալիս: Զորս կողմն ա մտիկ անում, աղքատութիւն ա, խաւար ու անտէրութիւն: Սրտակից եղբայրական ձայն քիչ ա լսում, կամ ամենեին չի լսում: Կրծքի վրայ կարծես ծանր քար ա՛րճնկած: Վիզը ծուռ, ձեռները դռնին ծալած, դարդը հարցնող չկայ: Ելի խեղճ գիւղացին ա, որ գէմ ա կենում, որ հազար ու մի ցաւ ու կրակի կուրծք ա գէմ տալիս, հայրական օջաղի լոյսը չի հանգցնում:

Ե՛րբ պիտի նրա ունեւոր եղբայրը հասկանայ, որ ինքն էլ մարդ ա և մարդկային պարտականութիւն ունի կատարելու:

Ա՛խ, այ հարուստ եղբայր, ե՛րբ պիտի հասկանաս, որ մի օր ամենքից մեծ անբախտը դու ես դառնալու: Ախր ուրիշ տեղերում, սիրուն ու մեծ քաղաքներում քո ոտքի տակին քար չկայ: Ամեն մի սարդու ոտքի տակի քարը իւր օջաղն ա, իւր հայրական տունն ա:

Քաղաքների մէջ ապրող, գիւղացի հարուստներ, գոնէ դուք էլ ա նամուս ունեցէք, պատիւ ճանաչեցէք, ձեր ծնունդ տեղը յիշեցէք, ձեր ձօձկը միտներդ բերէք, ձեզանից յետոյ՝ արտասուքի մէջ թողած եղբայրներին, քոյրերին, ծերունի պապերին, պառաւ նաներին յիշեցէք:

Երբ որ գիւղական կառավարութեան բոլոր իրաւունքները կանցնի գիւղացիների ձեռը, այնուհետեւ պիտի ամեն մի օրէնք կազմեն իրանք: Օրէնքները, ինչպէս վերև յիշեցինք, պիտի յարմարուին գիւղի և գիւղացու դրութեան համեմատ:

Գիւղի լուսաւորութեան գլխաւոր միջոց տուողը գիւղական գանձարանն ու շտեմարանը պիտի լինին: Նրա համար էլ գիւղացիները պիտի մեծ ուշադրութեամբ հետեւեն, որ ամեն մի յարմար գէպքից օգուտ քաղեն գանձարանի կամ շտեմարանի համար:

Գիւղերը պիտի իրար լաւ ճանաչեն, պիտի իրար ցաւ ու պատուհասի միշտ հասնեն: Գիւղացիները պիտի հետեւն խնամութեան կապերը մեծացնել: Մի գիւղացի պիտի գնայ միւս գիւղից աղջիկ առնէ, էն միւսն էլ ուրիշ գիւղից պիտի առնէ: Էսպէս իրար

հետ շուտ կ'մտնենան, իրար լաւ կ'ձանաչեն և իրար համար խորթ չեն երևալ:

Բարեկամութիւն և ազգականութիւն հաստատելով, իրար շուտ կ'մտնենան, իրար ցաւ ու դարդ շուտ կ'հասկանան, ուրեմն իրար շուտ կ'օգնեն:

Ի հարկէ, բոլոր մարդիկ խնամի կամ ազգական չեղած էլ իրար եղբայր են. էլի պարտաւոր են՝ իրար սիրել, իրար օգնել. Բայց երբ որ մէջ տեղը կապ կայ, էն ժամանակ մահանան էլ միշտ լինում ա, որ իրար մօտ գնան ու իրար դուրսիւն հասկանան:

Հայն իւր հարեանին ազգականից չի ջոկել: Ընդհակառակը դեռ հարեանին աւել ա սիրել քան ազգականին: Հարեանը միշտ մօտիկ ա իրան, իւր դուրսիւնը նա ամենքից շուտ ա հասկացել և հարկաւոր ժամանակ ամենքից առաջ ա վրայ հասել:

Շատ տեղերում հայի հարեանը թուրք ա ըլլել և նա թուրքի հետ էլ միշտ սիրով ա ապրել, միշտ բարեկամի նման ա կացել: Օգնել ա ինչքան կարողացել ա: Ինքն մի ցաւ ու դարդ ունեցած ժամանակ ասել ա նրան: Չար սատանան էր, որ վերջերս մտաւ հայի ու թուրքի մէջ և իրար արանք խառնեց, իրար թշնամի շինեց: Ի հարկէ պիտի հետեւել առաջուայ սէրը հաստատել, հարեանութիւն անել: Իրար հետ թշնամութիւն անելով, օգուտ չի դուրս դալ, իրար տուն քանդելով, էրկուսն էլ անտուն կը մնան:

Հայը հիւրասէր ա: Մեր պապերն ու մեր հայրերն առանց զոնաղի հաց չեն կերել: Առնաղն Աստուծոյ ուղարկուած մարդն ա համարուել, զրա համար էլ ամեն մի հայ ուրախացել ա, երբոր տունը զոնաղ ա եկել: Առնաղ ունենալով, հայը համարել ա, որ Աստուծոյ աչքը քաղցր ա իւր վրայ և իւր հալալ

քրտինքով աշխատած հացից մի բաժին տալով զոնաղին, նա ընդունել ա, որ Աստուծոն ա տուել, էն օրը իւր սուփրան Աստուծոյ սեղան ա համարել, երբոր զոնաղ ա նստել նրա մօտ:

Հայի հիւրասիրութիւնը դժուար թէ էլ մի ուրիշ ազգի մէջ լինի:

Գոնէ առաջներում էդպէս ա ըլլել: Հիմա զիւղերում էլի էդպէս կ'լինի: Կարելի ա քաղաքներում փոխուել ա: Գրա պատճառն էլ էն ա, որ հայը զոնաղան ազգերի հետ, որ ապրում ա, նրանից էլ զանազան բնաւորութիւններ ա սովորում: Ի հարկէ լաւ բան ա սովորելը, վատ չէ, բայց անբախտաբար շատ անգամ լաւը մոռանում են և վատը սովորում:

Հիւրասիրութիւնը շատ լաւ բան ա: Էդ բնաւորութիւնը Աստուծոյ օրհնածն ա և հէնց Աստուծային ա: Նշանաւոր կրօններն էլ եղբայրասիրութիւն են քարոզում: Իսկ նա, ով որ հիւրասէր ա, նա անպատճառ եղբայրասէր էլ ա:

Մեր պապերն Աստուածափախ են ըլլել: Աստուծոյ օրհնքը ճշմարտութեամբ պահել են և միշտ էլ բախտաւոր են ապրել:

Հիւրասիրութիւնն էլ Աստուծոյ օրհնքն ա: Էդ օրհնքը հայի դամարի մէջ ա մտել:

Շատ անգամ Սահակ հօրս հետ, երբ որ արտի մէջ էինք լինում և երբ որ տեսնում էինք, որ երկու հասկ բարձր բըսած և իրար գրկած օրօրւում էին, նա պատմում ար, որ իմ լուսահոգի Լալայ պապը էդպէս հասկերն իրար գրկած տեսնելով, անչափ ուրախանում ար, փառք ար տալիս Աստուծուն, ասում ար թէ էս նշան ա, որ Աստուած իրան սիրում ա ու էդ օրն իրա համար զոնաղ ա

ղրկելու: Ուրեմն Աստուած օրհնում ա իրա արար,
իրա հալալ, մաքուր աշխատանքը:

Առանց զոնադի հաց ուտելը՝ Լալայ պապն իրա
համար մեծ դարդ ա համարել: Էդ օրը նա համա-
րել ա թէ Աստուած իրան պատժել ա: Նա զոնադն
էնքան ա սիրել, էնքան պաշտել, որ ամեն տարի
արտի մէջն ա մտիկ տուել, միշտ ուղեցել ա իմա-
նալ թէ հասկերն ինչ են ասում: Աոնաղ պիտի
դայ, թէ չէ:

Իսկ թէ հասկերն ինչպէս են յայտնել զոնաղ
գալու մասին, հայրս պատմում ա էսպէս.

— Մի մարդ չալթուկ ա վարում: Երբ որ հաս-
կերը ժամանակին հասնում են, նա տեսնում ա, ոմ
էրկու հասկ շատ բարձր են բըսել և զլուխներն էլ
կըռացրել են ու մօտեցրել են իրար: Երբ որ քա-
մին փչում ա, էդ էրկու հասկերն իրար զրկում
են իրար համբուրում ու խօսում:

Մէկն ասում ա. ես մաղըութից—այսինքն արեւել-
քից եկած մի մարդի զսմաթ եմ: Միւսն էլ ասում
ա. ես մաշրութից—այսինքն արեւմուտքից եկած, մի
մարդի զսմաթ եմ:

Արաատէրն էդ էրկու հասկերը պոկում ա ու
մի փունջ հասկերի հետ կապում, բերում տուն և
կախում պատին:

Էդ օրից բաւական ժամանակ ա անցնում: Հաս-
կերը չորանում են:

Մի օր տան տէրն իւր կնոջն ասում ա.

— Ս. կնիկ, էդ հասկերը փչանում են, բեր մաք-
րենք, սերմը հանենք, կերակուր պատրաստիր, ու-
տենք:

Կինն, ի հարկէ, լսում ա մարդուն: Հասկերը
մաքրում են և հէնց որ կերակուրը սկսում ա եփ-

ուել, մին էլ տեսնում են, որ էրկու ձիաւոր են
գալիս դէպի իրանց տուն:

Գիւղացին ուրախանում ա, վազում ա գիմաւո-
րում ձիաւորներին ու ներս տանում:

Ճաշն ուրախ-ուրախ ուտում են, կշտանում: Ճա-
շից յետոյ տան աէրը հարցնում ա հիւրերին՝ թէ
որ կողմից են եկել, որ երկրից:

Հիւրերից մէկն ասում ա.

— Ես մաղըութից եմ գալիս:

Միւսն ասում ա.

— Ես էլ մաշրութից եմ գալիս:

Ուրախանում ա տան տէրը, օրհնում ա Աստը-
ծուն ու էրկու հասկերի մասին պատմում իւր հիւ-
րերին: Նրանք էլ էդ պատմութիւնը տարածում են
ամեն տեղ:

Սա, ի հարկէ, զրոյց ա: Բայց էս տեսակ զրոյցները
շատ գեղեցիկ կերպով վկայում են թէ՛ հայ ժողո-
վուրդը՝ որքան հիւրասէր ա, որքան ա ուրախանում,
երբ իւր տանը հիւր ա տեսնում, իւր սուփրին հիւր
ա մասնակցում:

Ինչպէս ամեն մարդ, էնպէս էլ ամեն մի ազգ իւր
բնաւորութիւնի համեմատ էլ զրոյցներն ա սար-
գում: Ասած ա, մարդ ինչ որ սիրի, միշտ էն բանի
մասին կխօսի: Հայը զոնաղը սիրում ա, դրա հա-
մար էլ զոնաղի մասին ա զրոյց սարգում:

Ահա էլի մի զրոյց հիւրասիրութեան մասին: Սա
էլ ինչպէս երևում ա հայ կնանիքն են սարգել: Սա
էլ պատմել ա իմ՝ զոնաղասէր Մարիամ մայրս:

Յայտնի ա, որ մեր գիւղերում հացը հունցում
ու թխում են կնանիքը: Ամեն անգամ հայ թխե-
լիս, զեռ նոր հանած հացերից, մի-մի թափայ հայ
բաժանում են հարեաններին և բաժանում են էն

բոլորին, որոնց որ հայի հօտը հասել ա: Իսկ զոնաղի համար էսպէս են իմանում:

Խմորն երբ որ հունցում են, յետոյ սկսում են պիւլը—(գունտեր) պատրաստել, պատահում ա, որ պիւլը կտրուած՝ մի կտոր խմոր ձեռքից դուրս ա ընկնում ու թռչում մի կողմը, էն ժամանակ ուրախանում են, որովհետեւ էդ համարում են զոնաղ գալու նշան:

Էսպէս շատ զրոյցներ, որոնք ամենքն էլ վկայում են թէ ուրախութիւն ա համարում հայը, երբ որ իւր հացից զոնաղն էլ ա կտրում: Էս սովորութիւնը հայի համար շատ հին սովորութիւն ա: Հայը հին ազգ ա և միշտ էլ Աստուծոյ պատուիրանքովն ա գնացել, Աստուծաշնչի ամենալաւ օրինակներն ա վերցրել:

Աստուծաշնչումն էլ յայտնի ա, որ հիւրասիրութեան լաւ օրինակն Աբրահամին ա բերած: Մեր գիւղերումն էլ, համարեա մի հայ չեա գտնիլ, որ Աբրահամի անունը չյիշի և չհետեի, որ իւր տունն էլ Աբրահամի տուն գառնայ,

Էդպէս էլ, որ հայի գիւղ մտնէք, կտեսնէք, որ ամեն մի հայ գիւղացի պակաս չէ հայր Աբրահամից:

Հայի տան դուռն էլ միշտ բաց ա, սեղանն էլ: Է, Աստուած ինչ որ տուել ա, նրանով պատիւ կանէ, և հիւրասիրէ: Ասած ա, սոխ ու հաց, սիրտը բաց: Բաց ա միշտ հայ գիւղացու սիրտը: Աստուած տայ, հայ քաղաքացու սիրտն էլ էնքան բաց լինի նրա համար:

Գիւղերում պիտի հիւրասներ շինել:

Շատ անգամ գիւղացին մի հեռաւոր զոնաղ յար-

գելու համար մնում ա ծանր մտածմունքի մէջ: Պատահում ա էսպէս զոնաղ, որ նրան համեմատ տեղ չի լինում քնելու: Ինչքան էլ գիւղացու սիրտը բաց ա, ինչքան էլ ամեն կերպ հետեւում ա զոնաղի սիրտը շահել, բայց էլ չի գիշերը մնալու համար նեղութիւն լինում ա: Ի հարկէ, զոնաղն էլ չի ցանկանալ գիւղացուն նեղ դրութեան մէջ զցել: Ահա էդ պատճառով՝ ամեն մի գիւղում՝ գիւղական գանձարանի հաշուով պիտի հիւրասներ շինել:

Երբոր հիւրատուն լինի, այնուհետեւ ամեն մի պատուաւոր հիւր, կամ մի որ և է ճանապարհորդ, մի չինովնիկ, մի առեւտրական, երբ որ գիւղ կգան, կարող են իջևանել հիւրատանը, որքան էլ ուզեն, կարող են մնալ: Հիւրատան սենեակները, ի հարկէ, պիտի շինուին յարմարութիւններով: Սենեակներում պիտի լինին համեստ կարասիքներ, այսինքն թախտի՝ քնելու համար, հասարակ փայտէ աթոռներ, սեղաններ, էլ ուրիշ ոչինչ: Հիւրատան համար մարդ կնշանակուի, որ հիւրերին հարկաւոր բաները հասցնէ, այսինքն ուտելիքն կամ անկողին, ճրագ, ջուր և այլն:

Իջևանողները, եթէ աղքատ չեն՝ պիտի վճարեն: Վճարի թիւը կգրեն հիւրատան զրքի մէջ, իսկ փողը կյանձնեն գանձապահին:

Կպատահին և էսպէս հիւրեր, որոնցից վճար պահանջիլը, ի հարկէ, ամօթ կլինի: Օրինակ՝ դիցուք մի առաջնորդ, մի հեղինակ, մի վարժապետ, մի ուսանող: Բայց էդպէսներն էլ եթէ ուզենան գիւղական գանձարանի օգտին մի բան տալ, էդ էլ իրանք գիտեն, կամքից կլինի կախուած:

Էդ մասին էլ առանձին օրինաթուղթ պիտի շինուի ու կախուի պատիցը:

Գիւղերում պիտի գրադարաններ հիմնել:

Գիւղական գանձարանի հաշուով գրադարանները կանգաւորուին ուսումնարաններում:

Նոյն գանձարանի հաշուով գրադարաններում կստացուին զանազան լրագրեր, և նոր-նոր արտուած գրքեր: Ով որ ուղենայ գրադարանից օգուտ քաղել, նրանից վճար չպիտի պահանջուի: Մուտքը պիտի լինի ձրի:

Ձրի պիտի լինի և ուսումը: Մինչեւանգամ ուսումը պիտի պարտադիր անել: Ամեն մի երեխայ՝ տղայ թէ աղջիկ՝ եօթը տարեկան դառնալուց, պիտի անպաճառ ուսումնարան ուղարկուի:

Ուսումնարանում երեխան կսովորի ձրիարար: Դասական աւարկաներն էլ, գիրք, թուղթ, մատիտ, զրիչ թանաք, ուրիշ էլ ինչ որ հարկաւոր լինի երեխաներին, էլի պիտի ձրի տալ: Եւ բոլորը պիտի առնէ գանձարանը:

Գիւղերը պիտի ունենան շրջիկ բժիշկներ: Այդ բժիշկներին ուժիկ կտան զիւղական գանձարանները:

Մի բժիշկը պիտի հսկէ մի քանի գիւղի վրայ: Գոնէ էնքան գիւղ, որ ամենքից հաւաքած աւուրքը լրացնէ նրա ուժիկը:

Բժիշկը շարունակ պիտի շրջէ գիւղերը և՛ միշտ պցելէ զիւղական աները: Նրա գործը մենակ հիւանդներին բժշկելը չպիտի լինի, նա առողջների հետ էլ պիտի միշտ բժշկութեան մասին խօսէ: Նա միշտ պիտի բժշկական զոյցներ անէ, պիտի բացադրէ թէ այս ինչ հիւանդութիւնը ինչից ա առաջ գալիս, կամ ինչ պիտի անել, որ նրա առաջն առնուի: Մասունակ հարկաւոր ա զիւղացուն լաւ հասկացնել

վարակիչ հիւանդութիւնների մասին: Գիւղի առողջութեան ամենամեծ թշնամիքը վարակիչ հիւանդութիւններն են: Իսկ թէ էս ինչ հիւանդութիւնը ինչու ա տարածւում, կամ ինչպէս ա տարածւում և կամ ինչպէս պիտի կենալ, որ նա չտարածուի, ահա էս բոլորի մասին զիւղացին հասկացողութիւն չունի, ուրեմն էս բոլորի մասին պիտի միշտ նրա հետ խօսել:

Բժիշկները պիտի լինին բարեխիղճ, անկեղծ և ազնիւ սրտով:

Նրանք պիտի եղբօր նման մանեն ժողովրդի դրութեան մէջ և շատ անկեղծ սրտով մտածեն նրա հիւանդութիւնների առաջն առնելու համար: Ամեն մի հիւանդին պիտի բացադրեն իւր հիւանդութեան պատճառը, առողջներին էլ պիտի կանչեն, հէնց էն հիւանդի մօտ և բացադրեն թէ ինչ բան է նրա հիւանդութիւնը և ինչ պիտի անել, որ միւսնոյն հիւանդութիւնը ուրիշն էլ չստանայ:

Դժբախտաբար մենք գիւղերում բժիշկներ ենք տեսել, որոնք հիւանդի մօտ մենակ ծրար-պրար ձեւականութիւններ են բանեցրել և գնացել: Հիւանդն էլ էլի մնացել ա հիւանդ:

Շատ բժիշկներ էլ տեսել ենք զոռոգաբար վարուելիս: Դէպի իսկական ցաւն ու հարան անտարբեր, սառն: Յաւալին էն ա, որ էդպէս վարուելուց յետոյ էլ չեն ամաչել, վճար են պահանջել: Պահանջն էլ մի քանի անգամ աւելի, քան սովորական արժողութիւնը:

Էս տեսակ բժիշկները չեն կարող մարդկութեան անդամ համարուիլ: Եղբայր, ընկեր բառերը մեղք են էդպէսների համար ասելը:

Շատ անգամ խեղճ զիւղացին կորչում ա զուր տեղից: Կորչում ա մի հասարակ հիւանդութիւնով:

Այսինքն սկսում ա հասարակից: Եղ հասարակ հիւանդութիւնը ծանրանում ա, երբոր բժիշկը անկեղծ չի վերաբերում: Յետոյ էլ զօրեղանում ա և հիւանդը մեռնում ա: Շատ անգամ էսպէս մեռնողները լինում են մի ամբողջ ընտանիքի կերակրող հայրը կամ մայրը, վերջապէս մի տղայ, մի տղջիկ, մանուկ, պառաւ, ծեր:

Այո, գիւղացիների մեծ մասը կորչում ա աննշան հիւանդութիւններով: Կորչում ա անկեղծ բժիշկ չունենալու պատճառով:

Գոռոզ և անպիտան բժիշկները շատ անգամ յուսահատեցնում են գիւղացուն: Եւ շատ ա պատահում, որ գիւղացին ինչքան ծանր հիւանդ ա լինում, չի գիտնում բժշկի:

Վերջին ժամանակները մեր գիւղերումը տարածուել են զանազան տեսակ վարակիչ հիւանդութիւններ և մանաւանդ զաղտնի համարուած հիւանդութիւններից: Այս տեսակ հիւանդութիւնների տարածման գլխաւոր պատճառն օտարութիւն գնալն ա: Օտարութեան մէջ մեր երիտասարդներից շատ քչերն են մաքուր ու ազնիւ կեանք անցկացնում: Մեծ մասը փչանում ա: Երիտասարդներ են՝ սեն ու սպիտակը չեն ջոկում: Ձէրը փող ընկած ժամանակ՝ իրանց զցում են ամեն տեսակ ճանապարհ և համառողջութիւնն են կորցնում, համ էլ հիւանդ տուն դալիս, տանեցների մէջ էլ իրանց հիւանդութիւնը տարածում:

Դրա համար պիտի օրէնք դնել, որ օտարութիւնից եկողներին՝ թէ կին թէ տղամարդ, հէնց առաջին օրը բժիշկը տեսնէ, քննէ, հիւանդին արգելէ բարեկամացների կամ ազգականների հետ յարաբերութիւն ունենալը, և հետեւ նրան առողջացնել:

Այն երիտասարդն, որ ուզում ա պսակուել պի-

տի քահանային բժշկական վկայական ցոյց տայ. այսինքն, թէ՛ բժիշկը վկայում ա, որ նա հիւանդ չէ, առողջ ա, կարող ա պսակուել:

Քահանան իրաւունք չպիտի ունենայ առանց վկայականի պսակելու:

Կարող ա պատահել, որ քահանան կաշառ կուտէ, կխաբէ ժողովրդին և հիւանդին մէկի վրայ կը պսակէ, էդպէս քահանային էլ ուրիշ պատիժ չկայ, էդպէսին պիտի միանգամայն գիւղեց դուրս գցել և լրագրի մէջ էլ յայտարարել թէ այս ինչ քահանային այս ինչ գիւղեց դուրս արին իւր կաշառակերութեան և խաբեբայութեան համար:

Բժիշկն էլ կարող ա կաշառ ուտել և հիւանդին առողջի վկայական տալ: Եդպէս բժշկին էլ պիտի գիւղում անպատուել և էլի լրագրերի մէջ նրա խաբեբայութիւնը յայտարարել:

Քահանայ, բժիշկ, վարժապետ, մի խօսքով ով որ ժողովրդի փողովն ա սպրկուել և նրա համար ա իւր գիտութիւնը գործ դնելու, նա պիտի ժողովրդի հետ անկեղծ վարուի: Ժողովուրդն էլ իւր համար անկեղծ ցաւողին և մտածողին իսկի քաղցած չի թողնի: Ընդհակառակը մեծ պատուով ու փառքով կպահի:

Հիւանդները կարող են բժշկուել: Բժշկուելուց յետոյ էլ կարող են և պսակուել և ժողովրդի մէջ ազատ նիստ ու կաց անել:

Գիւղական բժիշկները պիտի երբեմն գիւղացիներին հաւաքեն մի տեղ և նրանց հետ բժշկական զրոյցներ անեն:

Գիւղացին պիտի շատից քիչ հասկացողութիւն ունենայ, մանաւանդ վարակիչ հիւանդութիւնների մասին: Շատ անգամ գիւղացին աչքը բաց, բայց

միտքը փակ՝ էս ու էն հիւանդութիւնը գցում ա իւր ջանին: Դա, ինչպէս ասացի, միտքը փակ լինելունցն ա, խաւար մնալունցը: Երբեմն վնասակար բաներ ա ուտում, անմաքուր ջուր ա խմում, կեղտոտ ա պահում իրան, կեղտոտ էլ շորը, տունն ու տնամէջը, ամանը, պղինձը և էն ժամանակ ըստեղից-ընտեղից մի որեւէ հիւանդութիւն բռնում ա նրա ետից: Բայց նա ինքը չգիտէ ընչեցն ա, չի կարողանում լաւն ու վատը հասկանալ: Ահա հէնց զրա համար հարկաւոր են բժշկական զրոյցներ: Խելօք զրոյցներով բժիշկը շատ օգուտ կբերէ, փակ աչքերը բաց կանէ և էս ու էն հիւանդութիւնների առաջը կառնէ ու էլ չի սպասի, որ առաջ հիւանդանան, յետոյ իրան կանչեն:

Հիւանդն իւր կարգով: Հիւանդը հէնց առաջին օրը պիտի բժիշկին յայտնէ, բայց առողջն էլ կարող ա շուտ-շուտ հիւանդանալ, եթէ իմանայ թէ էս ու էն հիւանդութիւնն ընչից ա առաջ գալիս և ինչ պիտի անէ, որ նրան չպատահի կամ հէնց պատահած ժամանակ ինքն էլ կարողանայ շուտ առաջը կտրել:

Երբ որ սրտակից բժիշկ կլինի, այնուհետեւ էլ ամեն մի գիւղի շտեմարանում պիտի զանազան դեղորայք պահուի: Ամեն մի գիւղ ամեն տեսակ դեղ չի կարող պահել: Առաջին՝ որ ամեն գիւղ չի կարող դեղեր բանեցնող պահել, երկրորդ՝ կարող ա պատահել, որ երկար ժամանակ դեղորայք հարկաւոր չի գալ, կհանան, ուրեմն և կանախտքանան: Փոքրիկ գիւղերի շտեմարաններում պիտի պահել շուտ-շուտ պատահող հիւանդութիւնների դեղեր, էն էլ քիչ-քիչ Օրինակ փորացաւի, կապութիւնի, մրսելոց, ջերմի, զանազան հարի և այլն: Իսկ թէ մեծ գիւ-

ղերումն առանձին և փոքրիկ 4—5 գիւղերից մէկում կարելի ա հէնց կանոնաւոր դեղատուն (սպասէք) հիմնել: Դեղորայքը պիտի ձրի տալ:

Գիւղերում դեղատուն ունենալը շատ հարկաւոր ա: Օգուտ չկայ, որ հիմիկուայ նման բժիշկը տեսնէ հիւանդին, դեղ նշանակէ և էդ դեղը գնան՝ քաղաքից բերեն: Շատ անգամ պատահում ա, որ մինչև դեղի ետից քաղաք գնացողը կգայ՝ հիւանդը ոյժից ընկնում ա և մեռնում:

Գիւղերում հարկաւոր են և կին բժիշկներ և տառապյալներ:

Յայտնի ա, որ մեր գիւղացի կիներ շատ ամաչկոտ ա: Ուրիշ տղամարդի առաջ երես չի բաց անում, իրանից հասակաւորի մօտ ձեն ու ծպտուն չի հանում, սուս ու փուս առաւօտը՝ դեռ արեւ չլուսե եկած՝ կտնուի վեր ա կենում և ամբողջ օրը՝ մինչև կէս գիշեր՝ ոտի վրայ չարչարում, ատնու զանազան դործեր կատարում, դեռ լուսընկայ գիշերներին էլ լուսնի շողերի տակ ճախարակ մանում, բայց եթէ պատահում ա, որ մարմնու մի տեղը ցաւում ա չի սսում տանեցիներին: Եթէ ասում ա էն էլ էն ժամանակ, երբ հիւանդութիւնը օրէցօր ուժեղանում ա և յաղթում ա իրան: Էն էլ յայտնում ա իւր մօրը, քրոջը կամ իւր նման մի ընկերուհու:

Վերջապէս յայտնի էլ՝ մի օգուտ չի տեսիլ: Եթէ բժիշկը գիւղումն էլ գտնուի, նրան չեն յայտնիլ: Ախր, ո՞նց յայտնեն. բժիշկն օտար տղամարդ. ո՞նց կարող ա նրա ջանը տեսնել ու քննել: Աւելի լաւն էն ա մեռնի, քան թէ մի տղամարդ նրա մարմինն ձեռք տայ:

Էսպէս են առում մեր զիւղացիները և ճշմարիտ, Հէնց էդպէս վարուելով էլ, շատ ջահիլ-ջիւան հարսներ ու աղջիկներ են կորչում: Շատ էլ որբեր են մնում անաէր:

Գիւղերումը մանուկներին մայրերն իւր ծրծի կաթից են տալիս: Եթէ էդ մայրերը հիւանդոտ լինին, երեխաներն էլ հիւանդի կաթ ծծելով, կմեծանան, բայց, ի հարկէ, իրանք էլ հիւանդոտ կլինին:

Ուրեմն պիտի հետեւի, որ զիւղի կանայք ու աղջկերք մի հիւանդութիւն ստացած ժամանակ շուտ բժշկուին և լաւ բժշկուին, էնպէս որ ցաւազար չմնան:

Առողջ երեխաները առողջ ծնողներից են առաջ գալիս: Դրա համար էլ պիտի ուշադրութիւն դարձնել, որ բոլոր ծնողները առողջ լինին:

Եւ եթէ տղամարդկանց համար հարկաւոր են տղամարդ բժիշկներ, կանանց համար էլ անպատճառ պիտի լինին կին բժիշկներ և տատմայրներ:

Գիւղացի կիներ ինչքան էլ ամաչկոտ ա և ինչքան էլ իւր մեծերը արդելում են ուրիշ տղամարդկանց առաջ երես բաց անել, կամ հետները խօսել, բայց ուրիշ կանանց մօտ չեն դժուարանալ: Ինչ էլ լինի կին է: Կինը կնոջ մօտ ազատ կլինի, իւր ցաւը, իւր հիւանդութիւնը նրան հեշտ կաւի, մարմինը նրան հեշտութիւնով ցոյց կտայ: Դրա համար անպատճառ հարկաւոր ա կին բժիշկներ ունենալ:

Հարկաւոր ա ունենալ և մասնագէտ տատմայր:

Մինչև օրս տատմայրները Հէնց զիւղի կանանցից են ըլել, հիմա էլ նրանք են:

Մեզ կարող են ասել, ախր Հէնց էդ զիւղի տատմայրներից մի անբախտութիւն չենք տեսել ինչ՞ու պիտի նրանց ընդունենք, պահենք:

Բայց մենք կասենք, որ անբախտութիւն չաւ շատ ա պատահել, միայն թէ ծածկուել են: Խորամանկ են զիւղի տատմայրները: Նրանք լաւ զիտեն իրանց արածը և ամեն մի սխալմունք շատ լաւ թաղցնում են: Շատ անգամ որ ևէ անբախտութիւն պատահած ժամանակ մեղաւորը Հէնց ծննդկանին են հռչակում:

Կրկնում ենք, ինչպէս հարկաւոր են կին բժիշկներ, հարկաւոր են նոյնպէս և մասնագէտ տատմայրներ:

Ամուսնական կռիւները պիտի քննեն, դատեն և վճիռ դնեն զիւղական ընտրուած դատաւորները:

Ինչպէս քաղաքներում, էնպէս էլ զիւղերում շատ անգամ ա պատահում ամուսնական կռիւներ: Ի հարկէ, լինում ա, որ տղամարդն ա մեղաւոր, լինում ա, որ կինն ա մեղաւոր, բայց զիւղերի մէջ՝ սխալ չենք լինիլ, եթէ ասենք, որ մեղաւորների շատը տղամարդիկն են:

Մեր զիւղացի կանանց հաւատարմութիւնը զոված ա ամենքից, զոված ա և շատ օտարազգիներից: Գիւղացի կիներ իւր մարդուց աւելի չարքաշ ա: Տանը բոլոր հոգսերը նրա վրայ ա: Նրա բոլոր էշն ու հաւէսը իւր երեխաներն են, իւր տունն ա, իւր մարդն ա: Ի հարկէ, մէկ-մէկ կապը կտրածներ պատահում են: Բայց շատ քիչ է, երուսաղէմ էլ հօ շուն կայ:

Ասինք մեր զիւղացի տղամարդիկ էլ եթէ քաղաքացոյ հետ, կեանքի մաքրութեան կողմից համեմատենք, զիւղացիք շատ բարձր են: Դէ, կրկնում ենք, որ երուսաղէմ էլ շուն կայ: Թէ տղամարդ, թէ կին, զիւղերումն էլ պատահում են, որ կապերը կտրում են, իրար մօի են ընկնում: Ահա, էդպէս ժամանակները նրանց դատերը պիտի զիւղումը կատարուին:

Դատաւորները այն զիւղացիք պիտի լինին, որոնց մէջ կռուողները ապրում են:

Առ հասարակ էղպէս կռիւները պատահած ժամանակ, զանգաւանները բռնարկում են հոգեւոր իշխանութեան, կամ կոնսիստորին, կամ սինոդին:

Էդ կոնսիստորում և սինոդում նստած դատաւորներն էլ կամ տէրաւորներն են լինում, կամ վարդապետներն ու եպիսկոպոսներ:

Առաջին՝ վարդապետն ու եպիսկոպոսը պսակուած մարդիկ չեն, կին չունին, երեխայ չունին, նրանց դժուար ա պսակուածների զրուծիւնը հասկանալ նրանց մէջ մեղաւորներն ու արդարը ջոկել: Երկրորդ՝ ինչքան էլ կարողանան հասկանալ, էլի դժուար ա հեռուից հեռու դատաստան սարգել: Եւ շատ անգամ մէկին եղում են, միւսին դադում: Միշտ էլ նրան են իւզում, ով որ հարուստ ա: Հարուստը միշտ իւր բանը տեսնում ա: Կաշառքը մեղաւորին արգարացնում ա, արդարին մեղաւորացնում: Ինչքան ուղես վիաներ տար, ինչքան ուղես ճշմարիտ օրէնքով ցոյց տուր, որ մեղաւորը էս ինչն ա, ոչինչ չի դուրս գալ: Ով որ, ինչքան էլ մեղաւոր ա, բայց եթէ հարուստ ա, նա արգարանում ա: Կաշառքը զօրեղ ա:

Դրա համար՝ ինչպէս ամեն մի դատ, նոյնպէս և ամուսնական դատեր, պիտի վճռուին զիւղե մէջ, զիւղական դատաւորների ձեռով:

Կռուողները, ինչ զիւղում որ գտնւում են, նրանց ի հարկէ, լաւ են ճանաչում նոյն զիւղե բոլոր բնակիչները: Դատաւորներն էլ ինչպէս էն զիւղե մարդիկ և էն զիւղացոյց ձեռով էլ ընտրուած, նոյնպէս լաւ կճանաչեն իրանց մարդկանցը, լաւ էլ կհասկանան նրանց զրուծիւնը, նրանց կռիւների պատճառ-

ները, ուրեմն և ճշմարիտ էլ դատ կվճռեն: Վկաներն էլ միեւնոյն զիւղեց, — միեւնոյն զիւղումն էլ ապրելիս:

Եթէ էսպէս լինի, եթէ դատաւորները ընտրուած լինին հէնց ժողովուրդի միջից և դատաւորներն էլ միշտ ապրում լինին ժողովուրդի մէջ, կարելի ա ասել, որ էղպէս լինելուց յետոյ՝ կռիւներն ու զանազան յանցանքներ քիչ կպատահեն:

Մի մարդ, որ միշտ ապրում ա դատաւորների հետ, նշանակում ա թէ նա միշտ ապրում ա հսկողութեան տակ: Դա բարոյական հսկողութիւն ա: Իսկ ամեն ինչ, որ բարոյական օրէնքի տակ ա, էն միշտ զեղեցիկ ա, միշտ բարի ա, միշտ բախաւորութիւն բերող:

Ամուսնական դատերի համար հասարակաց դատաւորներն ինչ վճիռ էլ, որ դնեն, հոգեւոր իշխանութիւնը պիտի ընդունէ: Կինն արգարանայ թէ մարդը, նրան ա հարկաւոր նորից պսակուելու իրաւունք տալ, թէ միւսին, էդ կվճռէ հասարակաց դատարանը և սինոդը կամ կոնսիստորը էդ վճռի հիման վրայ էլ արձակումն կտան:

Էս մասին խօսելուց՝ էս էլ պիտի ասենք, որ պիտի հետեւել էս տեսակ կռիւներին վերջ դնել: Անուաւորութիւնը պատիժներով չի վերանալ: Պիտի հետեւել մանկութիւնից լաւ կրթել: Մենակ ուսումը և կրթութիւնը կարող են պակասացնել անուաւորութիւնը: Դրա համար էլ մենք անարմար ենք համարում, որ զիւղե վարժապետները եկող-գնացող ջահէլներ լինին:

Մի անձանօթ երիտասարդ դայ, մի տարի մնայ, ձանձրանայ, զիւղացոյց հետ չյարմարուի, թողի-գնայ, յետոյ մի ուրիշը դայ, էլի նրա նման մի տարուց

յիտոյ թողի-զնայ և էսպէս շարունակ, ոչ մի օգուտ կրերուի, ոչ էլ մի բան կսովորացնուի: Դրա համար էլ մէկ էլ կրկնում ենք, որ զիւղի վարժապետը ինքը-քահանան պիտի լինի: Քահանան միշտ զիւղումն աւարելու, ժողովուրդի մեծ ու փոքրն էլ, կին ու տղամարդն էլ նրան լաւ են ճանաչելու: Նա էլ մենակ հօ ուսումը չէ տալու: Ուսման հետ նա հօրնը-ման կրթելու ա սերունդներին, ազնիւ ծարդ դառնալու ճանապարհն ա ցոյց տալու: Ինքն էլ շարունակ իւր՝ ուսում առած, կրթած ժողովուրդի պըտողը վայելելու ա: Ուրեմն նրա պարտքն էլ կլինի, որ երեսներէ մէջ՝ տղայ թէ աղջիկ՝ ազնիւ և բարի հոգի մտցնէ: Հասարակութեան հիմնադիրը ինքն ա լինելու, ինքն էլ պիտի հետեւի հիմքը լաւ դնել և պինտ դնել:

Գիւղը պիտի ունենայ հասարակաց խանութ:

Հասարակաց խանութը բաց կանի զիւղական գանձարանը:

Յայտնի ա, որ զիւղացին իրան ինչ որ հարկաւոր ա լինում արնամիջի բաներ, հագուստեղէնի կտորներ և ամեն մի մանգրութներ բոլորն էլ ձեռք ա բերում քաղաքներում: Իսկ քաղաքի վաճառականները թէ ինչքան անխիղճ կերպով թալանում են միամիտ զիւղացիներին, էգ էլ յայտնի ա:

Շատերն էլ հէնց զիւղում խանութ են բաց աւում և էգ խանութը դառնում ա թալանատեղի:

Ամեն բանի համար էլ քաղաք դնալու յարմարութիւն չկայ: Իսկ շատ անգամ պատահում ա, որ մի հասարակ բան էլ շատ ա հարկաւոր լինում: Օրինակ՝ պատահում ա, որ մի ասեղի, մի թիւի հա-

մար կարը մնում ա կիսատ: Է՛, մի ասեղի համար հօ չպիտի քաղաք դնալ: Կարելի ա էգպէս դէպքերում հարեանից ուղել, իսկ եթէ հարեանն էլ չունենայ, էն ժամանակ ի՞նչ պիտի անես: Զուր գործը կիսատ պիտի մնայ:

Մենք մենակ թելն ու ասեղը օրինակ բերինք, բայց տան մէջ ի՞նչքան էգպէս մանգրութներ են հարկաւոր լինում և ի՞նչքան գործ մնում ա կիսատ: Էգ պատճառով հասարակաց խանութը ամենահարկաւորն ա:

Առաջին՝ եթէ խանութը զիւղումը լինի, զիւղացու, մանաւանդ զիւղացի կանանց առուտուրը միանգամայն կհշտանայ: Երկրորդ՝ նրանց էգ խանութում իսկի չեն խաբիլ, որովհետեւ խանութը մի մասնաւոր մարդու չէ, խանութը ամենքինն ա, խանութի օգուտն ու վնասն էլ ամենքինն ա, ուրեմն էլ ո՞ւմ խաբես և ինչո՞ւ համար խաբես: Երրորդ՝ եթէ էգ ասեղի խանութը զիւղումն ա, էն ժամանակ տան մէջ ամեն հարկաւոր բաներ կնանիքը իրանք կառնեն, էն էլ շատ անգամ, փող չեղած ժամանակ, կարելի ա փողի փոխարէն ցորեն տալ, ձու, հաւ, ձուտ և այլն:

Դիցուք հարկաւոր ա մի ասեղ, բայց կոպէկ չկայ, մի ձու տուր, — մի ասեղը ստացիր: Ի՞նչքան հեշտ և ի՞նչքան լաւ:

Մի ասեղի համար կնոջ կարը թերատ չի մնալ, մի ձու էլ առնել քաղաք դնալ չի լինիլ: Խանութըն էլ էգպէս մի-մի ձուեր հաւաքելով կշտացնէ, յետոյ երբոր կդառնայ մի հարիւր, կամ մի քանի հարիւր, կուղարկէ քաղաք և մի յայտնի գումարի կծախէ ու փող կշինէ:

Խանութի համար կպահուի փոքր ինչ կարգաւորել իմացող մի գործակատար: Էգ գործակա-

տարը պարտաւոր կլինի շաբաթը մի անգամ հաշիւ ցոյց տալ զանձարանի կառավարիչներին:

Գործակատարի պաշտօն կարող են վարել և հասակաւոր օրիորդներ և այրի կանայք:

Շաբաթը մի անգամ կամ երկու շաբաթը մի անգամ, գործակատարը և զանձարանի կառավարութեան անդամներից մէկը կգնան քաղաք, զիւղումը հաւաքած ապրանքը հետները կտանեն, կծախեն, էնտեղից էլ խանութի համար ամեն տեսակ հարկաւոր ապրանքը մէկ տեղ կառնեն ու կբերեն զիւղ:

Գիւղը պիտի ունենայ իւր բաղանիքը:

Ամենքին էլ յայտնի ա, որ մարդու առողջութեան համար մաքրութիւնը մեծ նշանակութիւն ունի: Մաքրութեան համար զխաւոր միջոցներից մէկը բաղանիքն ա, բայց մեր մէջ չկայ մի զիւղ, որ բաղանիք ունենայ:

Գիւղի մէջ բաղանիք շինելու համար ոչ մեծ ծախք ա հարկաւոր, ոչ էլ մեծ կարողութիւն:

Գիւղական բաղանիքը բաւական ա շինել երկու-երեք սենեակից, աղամարդկանց համար և կանանց համար: Մի աւելորդ մեծ սենեակ էլ պիտի շինել՝ լուսոյք անելու: Կանայք պիտի էլ իրանց աներում լուսոյք չանեն, որովհետեւ զիւղերում ջրանոցներ չկան և դեռ զժուար էլ ա շինել: Լուսոյքի կեղտոտ ջրերը սապոնի փրփուրների հետ՝ զիւղերի մէջ, ցրում են աների առաջ: Էդ կեղտոտ ջրերը ծծում ա հողը, իսկ ամառուայ տաք օրերին էդ կեղտերից և սապոնի փրփուրներից բարձրանում ա զօլորչի և ապականում օդը:

Էդ պատճառով աւելի յարմարն ա ընդհանուր

լուսոյարան ունենալ: Էդ լուսոյարանը կամ բաղանիքը կշինուի զիւղի ծայրին: Նրա ջրերի համար կարելի ա մի խողովակ (լաղում) շինել: Էդ խողովակի ծայրը պիտի տանուի դէպի մի ձոր: Էն ժամանակ կեղտոտ ջրերը կթափուին զիւղից հեռու՝ ձորի մէջ և զիւղի օդը աղտոտ կմնայ ապականութիւններից:

Բաղանիքն էլ հօ իւր լաւութիւններն ունի: Առաջին՝ միշտ կարելի ա մաքուր մնալ կեղտոտութիւնից, երկրորդ՝ որ հէնց մաքուր կենալով էլ մարդ աղտոտ կլինի շատ տեսակ հիւանդութիւններից: Բաղանիքի համար էլ, ի հարկէ, կնշանակուի տուրք: Տուրքի չափը պէտք ա նշանակուի էնպէս, որ ամենքի համար էլ ձեռնտու լինի: Աղքատներից պիտի ոչինչ չառնել: Էդ տուրքը էլի կմանի զանձարան:

Գիւղը պիտի ունենայ իւր սեպհական պահապանները:

Հօտն ու նախիրը կյանձնուին հովիւներին, իսկ զիւղի կարգուկանոնին էլ պիտի մօտիկ տուողներ նշանակել: Միւսնոյն ժամանակ կարող են չար մարդիկ պատահել: Դրսից կգան կամ, ով զիտէ, ինչ տեղից դուրս կգան: Էսպէս թէ էնպէս պիտի միշտ պահապաններ ունենալ:

Հսկող պահապանների թիւը պիտի նշանակել զիւղի մեծութեան ու ժողովրդի թուին համեմատ:

Պահապանները վարձու չեն լինիլ: Նրանք կնշանակուին զիւղի երիտասարդներից և կհսկեն հերթով:

Գիւղը պիտի ունենայ իւր փոստատարը:

Էդ փոստատարը կլինի Հէնց հասարակաց խա-
նութի գործակատարը:

Գիւղացիք նամակները կ'յանձնեն գործակատարին:
Գործակատարն էլ շաբաթը մի անգամ պիտի քա-
ղաք գնայ: Ամեն գնալիս՝ նա հետը կտանէ իւր մօտ
հաւաքուած նամակները: Քաղաքում նա բոլորը կը-
յանձնէ փոստատան, փոստատնիցն էլ կստանայ գիւ-
ղացիներին պատկանեալ ամեն տեսակ ծրարներ՝
նամակներ ու լրագիրներ և հետը կբերէ գիւղ ու
էնտեղ կբաժանէ իրանց տէրերին:

Տօն և կիւրակի օրերին գիւղացիք պիտի հաւա-
քուին մի տեղ, իրար հետ զբաղուին զանազան
զրոյցներով, խօսեն իրանց կեանքի և իրանց գործե-
րի մասին և, ինչպէս ասուած է, խելք խելքի տան
ու իրանց համար նոր բան մտածեն, մի նոր լաւ
բան մտցնեն երանց կեանքի կարգ ու կանոնի մէջ:

Էդպէս տեղը պիտի լինի ուսումնարանի դահլիճը:
Էդտեղ կհաւաքուին բոլորը, ամեն հասակի գիւղա-
ցի՝ թէ կին և թէ տղամարդ:

Վարժապետ քահանան կկարգայ լրագրեր և զա-
նազան գրքեր: Աշակերտները կկարդան իրանց զրո-
քերից, կերգեն զանազան երգեր՝ ազգային՝ բանուո-
րական ու գիւղական երգեր: Ծերունիները կպատմեն
անցեալից, կնկարագրեն իրանց տեսածները և հա-
մեմատութիւններ կանեն ներկայի, այսինքն նոր ժա-
մանակի հետ: Երիտասարդներն էլ կխօսեն ինչ բա-
նից, որ հասկացողութիւն ունենան: Նոր տարին,
բարեկենդանին, զատկին կամ մի ուրիշ նշանաւոր
օր կարելի ա հասարակաց հաշուին քաղցրեղէնների
սեղան սարգել, բիրան քաղցրացնել և ամենքն էլ

մի սիրտ ու մի հոգի դառած՝ ասել, խօսել, վար-
ժապետի լուրերից նորութիւններ լսել, լսածներից
մի բան սովորել և տօն ու կիւրակի օրն էլ էդպէս
անցկացնել:

Ամառ ժամանակ կարելի ա հաւաքուել և էդպէս
ուրախ անցկացնել Հէնց մի այգու մէջ, կամ Հէնց
մօտակայ անտառում կանաչ ծառերի տակ, կանաչ
խոտերի վրայ:

Երբեմն կարելի ա հրաւիրել քաղաքի, կամ մի
ուրիշ գիւղի վարժապետ, որ նրանք էլ խօսեն ի-
րանց հասկացածից:

Առհասարակ գիւղերի վարժապետները պիտի փո-
խարինաբար՝ տօն ու կիւրակի օրերին գնան մէկն ու
միւս գիւղերը և դասախօսեն:

Մի լրագրում մենք կարգացինք հետեւեալ գեղե-
ցիկ տեղեկութիւնը.

Գերմանիայում, Կեօլն քաղաքի շրջանում հիմ-
նուած ա մի նոր պաշտօն վարժուհիների համար:

Դրանք խոհարարական (կերակուրներ եփելու) և
անային գիտութիւնների վարժուհիներ են: Այդ վար-
ժուհիները ման են դալիս գիւղերը և ամեն տեղ՝
դասախօսութիւններ սարգում գիւղացի աղջկերանց
համար. այսինքն հաւաքում են նրանց մի տեղ և
սովորացնում են թէ էս ինչ կերակուրը ինչպէս
պիտի պատրաստել, կամ էս ինչ բոյսն ու կանաչին
ինչպէս պիտի պահել: Ո՛րը պիտի չորացնել, ո՛րը
պիտի աղում կամ թթւում դնել և չորացնելին
ինչպէս պիտի չորացնել կամ աղ դնելին ո՞նց պիտի
աղ դնել:

Շատ բոյսեր կան, որոնք հարկաւոր են դալիս թել
կամ որ և է կտոր ներկելու համար: Եւ ուրիշ էդ-
պէս բաներ, որոնք բոլորն էլ հարկաւոր են իմանալ

օրինաւոր տուն պահելու անտեսութիւն անելու:

Ահա էգ օրինակին պիտի հետեւն և մեր հայ վարժուհիները:

Գերմանիայի էգ տեսակ վարժուհիներն ստանում են օրինաւոր ուսում: Մեր վարժուհիներն էլ ի հարկէ, պիտի ստանան:

Ամենքից շատ ցանկալի ա, որ հմուտ գիւղատնտեսներ շրջէին գիւղերի մէջ և խօսէին գիւղատնտեսութեան բոլոր ձիւղերի վերաբերեալ: Եւ, կրկնում ենք, որ շատ կարեւոր ա իմանալ կաթնամանսութիւն, մեղուաբուծութիւն, շերամապահութիւն, այգեպահութիւն, բանջարանոցներ, ծաղիկներ, ջերմոցներ, ծառերի պատուաստումն, (ջլղելը)՝ զինեպործութիւն, օղէհանութիւն, մինչև անգամ միրգ ու բուսեղէն չորացնելու ու պահելու ձևը:

Մեր հայրենիքի բնութիւնը, փառք Աստուծոյ, հարուստ ա: Ամեն ինչ առատութեամբ զտնւում են: Մինչև անգամ մեր անտառներումն էլ պակաս չեն վայրի պտուղներն ու զանազան համով բոյսերը:

Բայց մեր գիւղացին նրանց լաւ չէ հասկանում, լաւ չէ պահպանում և զրա համար մի մեծ օգուտ էլ չի վերցնում:

Իսկ կեանքի ապահովութեան համար հարուստ և հիանալի արդիւնքներ են զրանք: Հիմիկուայ գրութեան մէջ օգուտը քիչ ա, որովհետեւ օգուտը քաղելու ձևը չգիտէ ժողովուրդը:

Կան լուսաւորուած ազգեր, որոնց երկիրը մեր երկրի նման գեղեցիկ չէ, ոչ բերքով հարուստ ա, բայց նրանք լուսաւորութիւնով էնքան առաջ են գնացել, որ իրանց աղքատ երկիրն էլ էնպէս են մշակում, էնպէս աշխատում, որ մէկին՝ մի քանի հարիւր են վերցնում:

Օրինակի համար վերցնենք Եպոնը:

Եպոնական երկրում գիւղացիների հողը սակաւ ա, բայց էգ սակաւ հողն էնպէս են անուծ, որ բերքը ստացւում ա մէկին վեց հարիւր:

Ահա թէ ինչպէս:

Եպոնացիք հողը առաջուց փխրունացնում են, հաճարը, ցորեն, կամ բրինձ բոլորն էլ մէկ մէկ ջուկում են: Յետոյ մէկ-մէկ թաղում են փխրունացած հողը մէջ՝ իրարից ամեն մէկը չորս վերջով հաւաքութեամբ: Այնուհետեւ ամեն մի հատիկը տալիս ա տասից մինչև երեսուն ցողուններ (ինչպէս մեր կորեկի նման ձղները), ուրեմն էգքան էլ հասկեր: Ամեն մի հասկն էլ տալիս ա երեսուն—քառասուն հատիկ: Նշանակում ա միջին բերքը ստացւում ա մէկին վեց հարիւր:

Էս ձևը եթէ բանեցնեն մեր երկրի մէջ, մեր հողից դեռ կարելի ա աւելի ստացուի: Էս մասին պիտի լաւ մտածել, պիտի էս բոլորը սովորել:

Գիւղական աների հին ձևը պիտի փոխել: Պիտի բարեկարգ ապրել, աներն էլ պիտի յարմարեցնել օրինաւոր ապրելու համար:

Հիմիկուայ խրճիթների համար էլ գիւղացին բաւական չափով քարեղէն ու փայտեղէն ա բանեցնում, բայց ամենքին էլ յայտնի ա, թէ ինչքան անյարմար են նրանք ապրելու համար և ինչքան զուրկ են առողջապահական կողմից:

Դրա համար էլ պիտի ցոյց տալ և հասկացնել գիւղացուն, որ միեւնոյն փայտեղէնից և միեւնոյն քարեղէնից կարելի ա սիրուն սենեակներ շինել, կարելի ա նրանց մէջ շինել աղիւսէ վառարաններ, յետոյ

էդ սենեակները կարելի ա զարդարել համեստ տախտակէ թախտերով, նստարաններով ու սեղաններով: Պիտի սովորացնել, որ առողջութեան համար աւելի յարմար ա ճաշելու ժամանակ՝ նստարանների վրայ նստել և սեղանների երեսից ճաշ անել, ընթրել, թէյ խմել: Պիտի քնել թախտերի վրայ և ոչ գետնին: Ամեն բան պիտի պահել ծաքուր: Մաքրութիւնը պիտի սուրբ օրէնք համարուի: Մաքուր պիտի պահել ծարմիները, հագուստները, անկողինները, սենեակի բոլոր անկիւնները և ամեն բան, ինչ որ գտնուում ա տան մէջ: Մաքուր պիտի պահել տան առաջ ընկած բակը, պարտէզը, թոնրատունը, մառանը և ամեն տեղ:

Պիտի անների կողքին հիմիկուայ նման գոմեր չէին: Ամեն մի գիւղ կարող ա մի ընդհանուր գոմ պահել: Ամառ ժամանակն էլ պիտի ուղիղ գիւղի կողքին, բոլոր անասունների համար ընդհանուր տեղ շինել: Նրանց հսկողները կլինեն հովիւները:

Կանայք իրանց հիմիկուայ հագուստները պիտի փոխեն: Հիմիկուայ հագուստները շատ ազեղ և շատ անյարմար հագուստներ են: Պիտի կամ եւրոպական ձևը վերցնեն կամ մի ուրիշ յարմար ձև: Միայն պիտի զգոյշ ու խելօք կենան, շուայլութիւններ չունեն:

Քաղաքներում մեր հարսներն ու աղջկերքն էլ հագնւում են եւրոպական ձևով: Եւրոպացիք թէ մինչև անգամ ռուսները եւրոպական ձևով հագնելիս հետեւում են իրանց կարողութեան համեմատ կենալ: Մեզ մօտ ընդհակառակն իրանց եկամուտի համեմատ չեն ապրում:

Հասարակ օրինակներից մէկն ասենք:

Թէ եւրոպացիք և թէ ռուսները իրանց հագուստներով միշտ զանազանւում են: Նկատւում ա, որ ամեն մէկը իւր կարողութեան համեմատ ա հագնուած: Մի համեստ արհեստաւորի, կամ համեստ վաճառականի, կամ մի գրագրի, մի հասարակ չինովնիկի կիներ երբէք չի հետեւում գլխարկ (շլեպա) ծածկելու, այլ գլուխը ծածկում ա մի սիրուն թաշկինակով, դրա համեմատ էլ համեստ ա լինում հագուստները: Մեր մէջ էդպէս չէ: Մեր մէջ կարծում են թէ գլխի փալանները զբաղ գնելուց յետոյ, պիտի շլեպով ման դալ, քն էլ ծաղիկներով ու փետուրներով զարդարած: Գլխարկ ա ուղում և մի խեղճ դամբրչու կինը, խեղճ դուրգարի, քարտաշի, ջուր կրողի բայց ամենքն էլ խայտառակ են դուրս դալիս: Դամուրչին չի կարող նոր գլխարկ առնել: Նա առնում ա հինը: Հինն էլ յայտնի ա, որ սաղ չի գալիս, ուրեմն դուրս ա դալիս ծաղր: Բայց մի սիրուն թաշկինակը մեր աղջկերանց և հարսների համար աւելի գեղեցիկ կլինի քան թէ ձևը փոխուած, մի հնացած շլեպա:

Էսպէս բաները, որքան էլ հասարակ երևան, բայց տնաքանդ բաներ են: Պիտի փոփոխութիւններ ծրացնել բայց էնպէս փոփոխութիւններ, որ ծանր բեռը թեթեւացի և ոչ թէ աւելի ծանրանայ:

Գիւղական կեանքի մէջ մի որեւէ փոփոխութիւն մտցնելիս պիտի մեծ զգուշութեամբ անել, թէ չի յօնքը շինելու տեղ, աչքն էլ կքանդին:

Մի մարդու եթէ հարկաւոր ա մի բարի բան սովորացնել առաջ պիտի նրան հասկացնել էդ լաւ բանի նշանանակութիւնը:

Եթէ հարկաւոր ա մի տան հին ձևը փոխել և

նոր կերպարանք տալ, առաջ պիտի տան տիրոջ հասկացնես՝ հին ձևի փնտսակարութիւնը, նոր ձևի էլ օգտակարութիւնը և պնուհետե տունը նորոգես: Թէ չէ փակ աչքերով հինը քանդես և նրա տեղը դնես մի էնպէս նոր բան, որ ինքդ չհասկանաս թէ ինչ ա այդ նոր դրած բանը, էդ կնշանակէ կապիկութիւն (մէյֆնութիւն) անել:

Ինչպէս եւրոպացոյ մէջ, էնպէս էլ մեր մէջ կան լաւ ու վատ սովորութիւններ: Բայց եւրոպացիք լուսաւորուած են և ունին շատ օգտաւէտ սովորութիւններ, ուրեմն մենք էլ պիտի հետեւնք նրանցից լաւ բաները սովորել:

Եւրոպացիներից պիտի սովորենք ուսում և զանազան դիտութիւն, նոյնպէս և օրինաւոր ապրելու ձևերը: Բայց եթէ դրանք թողած՝ մենք պիտի վերջընենք նրանց հաղուսաները, նրանց ուտելիքներն ու խմելիքները, մինչև անգամ լեզուն, էն ժամանակը մեր արածը միմիայն կլինի «քեօսադեալութիւն»:

Մեր օրդիներից շատերը գնում են արտասահման: Որը ուսում ա ստանում, որն էլ հէնց ման ա դալիս՝ երկիրներ ու ժողովուրդներ ա տեսնում, նրանց նստել—վերկենալը սովորում, գիտութիւնը շատացնում, վերջը վերադառնում են գալիս:

Նրանց ճանապարհ գցելիս մենք ի հարկէ ուրախանում ենք: Եւ հասկանալի ա մեր ուրախութիւնը: Էդ գնացողներից շատերը հէնց գիւղի օրդիք են, և մենք մտածում ենք թէ՛ ահա մեր օրդիքը կգնան հեռու երկիրներ, էն երկիրները լուսաւորուած երկիրներ են: Նրանք էնտեղ շատ բան կտեսնեն, շատ բան կսովորեն ու յետ կգան դէպի իրանց օջաղները, դէպի մեր խաւար երկիրները և իրանց

ստացած լուսով մեզ էլ կլուսաւորեն, մեր օրդոյն էր:

Անբախտաբար մեր յոյսերի մեծ մասը դարդակ են անցնում:

Տարիներից յետոյ մեր օրդիքը գալիս են արտասահմանից և, ի հարկէ, լուսաւորուած, բայց բերած լոյսի շողքը իրանցից մի թիղ հեռու չի գնում: Էն էլ ոչ գիւղն են գալիս, ոչ էլ իրանց տունը, այլ մնում են մի օրեւէ քաղաքում:

Մենք Նրանց պատահում ենք հէնց քաղաքների մէջ: Ինչ լաւ զրոյցներ են անում նրանք, ինչպէս լաւ են նկարադրում իրանց տեսած տեղերը.—Շուեցարիա, Փրանսիա, Գերմանիա, Իտալիա ևայլն:

Նրանց ասելով, շատ բախտաւոր դրութեան մէջ են նրանց գիւղերը:

Բայց մեր խեղճ գիւղերը... մեր խեղճ ժողովուրդը...

Կարող եմ ասել, որ էդ գոված երկրներից պակաս չէ մեր հայրենիքը: Մեր սարերից բարձր չեն նրանց սարերը, մեր դաշտերից գեղեցիկ չեն նրանց դաշտերը, մեր ձորերից խոր չեն նրանց ձորերը: Նրանց նրման մենք էլ ունինք ծաղիւնքով զարդարած սարալանջեր, ունինք խիա, մթին ծմակներ, դգչան՝ արծաթի նման մաքուր աղբիւրներ, կառաղի առուներ, գետեր, լճեր, բայց, ի հարկէ, բոլորը բնական, այսինքն այն դրութեան մէջ, ինչպէս նրանք բուսել են:

Մենք սպասում էինք, որ էդ Շուեցարիայից, կամ միւս տեղերից եկողները մի առանձին էշիով, հաւէտով կձշակեն մեր երկիրը, կգեղեցկացնեն, բայց կան նրա հարստութիւնը, իրանք էլ օգուտ կբաղեն էդ հարստութիւնից, մեր ժողովուրդն էլ օգուտ կը

տեսներ, բայց չտեսանք: Նրանք գնացին, էլ գիւղը չեկան: Դառան Նոյի ազգաւոր, ոսկորներ դտան և ոսկրներով մնացին:

Նրանք գիւղացիների հետ էլ չապրեցին, իրանց իմացածիցն էլ մի բան չսովորացրին նրանց: Լուսաւորուած երկրներից յետոյ եկան և մնացին մեր քաղաքներում: Երանի քաղաքումն էլ պատահէին մեր գիւղացիների հետ և գոնէ հեռուից հեռու մի բան սովորացնէին:

Մենք զեռ յոյսներս չենք կարում: Դեռ կարծում ենք, որ մեր ուսում առած որդիքը վերջապէս կժտաբերեն խաւարի մէջ մնացած եղբայրներին և կզան ու նրանց հետ կապրեն, կսովորացնեն էն բոլոր լաւ բաները, ինչ որ նրանք տեսել են Շուէցարիա կամ Փրանսիա:

Էդ բարձր ուսում առածները եթէ լայեղ չեն աւում գիւղերը դալ և իրանց գիւղացի եղբայրների հետ ապրել, գոնէ թող քաղաքներում հետեւն և գիւղացի աղերանց վրայ մեծ ուշադրութիւն դարձնելով, լաւ վարժապետներ պատրաստեն: Գոնէ էդ լաւ վարժապետները քահանայ ձեռնադրուէին, դային գիւղերը և ապրէին գիւղացոյց հետ այն ձեով, ինչպէս մենք ասացինք այս գլխի սկզբներում:

Այո, մեր միակ յոյսը էդ անսակ վարժապետ — քահանաներն են: Ուրեմն մեծ ուշադրութիւն պիտի դարձնել էդ վարժապետ — քահանայացուների վրայ: Նրանց պիտի ոչ թէ մենակ ուսում տալ, դանազան գիտութիւններ սովորացնել, ոչ թէ մենակ միտքը լուսաւորել, այլ նրանց սրտերի մէջ էլ պիտի ճրագ վառել, պիտի սէր մտցնել: Էնպէս սէր պիտի մտցնել, որ նրանք գիւղերը մենակ ապրուստի համար չզան, մենակ իրանց կեանքը լաւ անցկացնելու

համար չմտածեն, այլ գիւղ դան մեծ սիրով, փափագով, մի առանձին ուրախութիւնով: Նրանք ուխտ պիտի անեն, որ միշտ մինչև մահ գիւղումը մնան, գիւղացու հետ ապրեն, որ գիւղացու տրամութիւնը իրանց տրամութիւն համարեն, ուրախութիւնն էլ իրանց ուրախութիւն: Վարժապետ քահանան ամեն մի գիւղացի իւր հարազատ եղբայրը պիտի համարէ, ամեն մի գիւղացի կինը՝ իւր քոյրը պիտի հաշուէ: Նրանց անբախտութիւնն էլ, բախտաւորութիւնն էլ նոյնպէս իրան համար պիտի ընդունէ:

Նոյնք հայրը ժողովրդի հոգին պիտի դառնայ, որ ժողովուրդն էլ նրան իւր աչքի լուսի նման սիրէ, նրա ամեն մի խօսքը օրէնք համարէ, նրա ցոյց տուած ճանապարհով գնայ:

Ինչպէս ասացինք աօն և կիւրակի օրերը գիւղացիների հետ պիտի զըոյցներ սարգել: Յիմա էլ աւելացնենք, որ էդ զըոյցների ժամանակ հարկաւոր ա գիւղացիներին մի քիչ ծանօթացնել պետական օրէնքների հետ:

Կան շատ գլխաւոր օրէնքներ, որ ամեն մի մարդ անպատճառ պիտի իմանայ և որ ամեն մէկին էլ համարեա միշտ հարկաւոր են դալիս: Էդքանը գիւղացիներին հասկացնելը զժուար չէ:

Օրէնք չիմանալով, գիւղացին սարուկ ա դառնում տանտուէրին, զգիւղին, իսկ երբ մուշկիւրը հագած մի պրիստաւ ա տեսնում, նրա առաջին գիւղացին ձուտ ա դառնում:

— Ախր ինչո՞ւ:

Հայ գիւղացին ահ ու երկիւղ չունի, նա միշտ քաջ ա ընդունուած, նա ամենքի առաջ էլ իւր ծա-

կատր բայ ա պահում, ուրեմն ինչ ա պատճառը, որ մի պրիստաւի առաջ նա ձուտ ա դառնում:

Պատճառը միայն օրէնք չիմանալն ա, այո, միայն հասարակ օրէնք չիմանալը: Նա չգիտէ թէ ինչ իրաւունքների տէր ա էդ պրիստաւը: Նա տեսնում ա նրան՝ փայլուն կոճակներով, դառերով, շաշկան կողքիցը կախ արած, երկու-երեք ձիաւոր եասաւուլները ետեիցը գալիս և խեղճ զիւղացին կարծում ա թէ էդ պրիստաւն ա, որ ամեն իրաւունք ունի, որ նա կանէ, ինչ էլ որ ինքը կամենայ: Էդ բանը շատ լաւ են հասկանում իրանք պրիստաւները: Գիւղը մտած ժամանակ՝ նրանք դեռ մի քիչ էլ աւելի են զարդարւում, իրանց աւելի բարձր են պահում, ձայները բարձր են հանում: Եւ ամեն մի զիւղ մանելիս մենակ մեծ-մեծ հրամաններ են, որ լսւում են: Ինքըն էլ առանց քաշուելու, համարձակ յայտնում ա, որ ամենքից զօրեղն ինքն ա, որ ոչ ոք չի համարձակուիլ իրան ասելու թէ աչքիցդ վերեւ յօնք էլ կայ:

Անպատճառ ասող կլենի թէ զիւղացու անբախտութիւնը օրէնք չիմանալու մէջ չէ, նրա անբախտութիւնը նրա մէջն ա, որ պետական լիզուն չը գիտէ:

Էսպէս ասողները շատ թունդ կտխալուին: Լեզու չիմանալը անբախտութիւն չէ: Կրկնում ենք, որ օրէնքն ա հարկաւոր իմանալ: Մեր երկրի պրիստաւների մեծ մասը հայեր են և թուրքեր, մանաւանդ թուրքեր: Իսկ մեր զիւղացիք հայերէն էլ զիտեն, թուրքերէն էլ: Նրանք մենակ օրէնքը չգիտեն: Եթէ օրէնքից տեղեկութիւն ունենան, ձուտ չեն դառնալ խաբէրայ պրիստաւների առաջ, նրանց կհասկացնեն, որ իրանց իրաւունքի չափը ծանաչեն:

Շատ անգամ պրիստաւները, իմանալով, որ զիւղացին օրէնքի հոտն էլ չի առել, էնպէս դատեր են վճռում, որ ամենեւին իւր իրաւունքից չեն կախուած: Շատ անգամ աններելի պատիժներ են տալիս: Գիւղացին չգիտէ, որ նրանք իրաւունք չունին պատժելու և ճարը կտրած՝ լռում ա: Եւ միշտ տանջւում ա զիւղացին՝ էդպէս հասարակ օրէնքներն էլ չիմանալով:

Եթէ ասում ենք զիւղացին պիտի օրէնք իմանայ, էդ հօ չի նշանակում թէ զիւղացին ա դւալի ա տ դառնայ: Ոչ: Մեր ասելիքը հասարակ օրէնքների մասին ա: Էն օրէնքները, որ միշտ հարկաւոր ա զիւղացոյ համար, էն էլ մեր զիւղացոյ համար:

Մի քաղաքացի տալիս ա մի տանուտէրի մի հնացած վեքսել: Գաղաքացուն էդ վեքսելը վաղուց տուած ա լինում մի զիւղացի:

Տանուտէրն էդ առնում ա ու գալիս ա զիւղ: Նրա հետ գալիս ա զղերը, մի երկու էլ եասաւուլներ: Բարձրը, բարկացած ձայնով կանչում ա տանուտէրը զիւղացուն և տեղն ու տեղը պահանջում ա, որ էդ վեքսելը համեմատ զիւղացին վճարէ իւր պարտքը:

Գիւղացին յայտնում ա, որ էդ փողն ինքը վաղուց ա վճարել, որ աղա պարտքատէրը էն ժամանակն ասել ա, որ ինքը վեքսելը կորցրել ա որ էդ միւսնոյն ա, ինքն իւր աղայութիւնը ցետը չի կոխելու, որ մէկ էլ փող պահանջէ: Գիւղացին էլ աղայի խօսքերին հաւատալով, վեքսելը թողել ա և իսկի մտքովը չի անցկացրել թէ՛ աղան իրան կխաբէ: Ախր, ճնց կխաբի, քանի որ նրա տնունը մեծ ա, ինքն էլ, ասում են, շատ լաւութիւններ ա անում, եկեղեցիներ ա շինում, առաջնորդն ու նաչալնիկը միշտ նրա տանը հաց են ուտում:

Ի հարկէ, խեղճ զիւղացին չի իմանում, որ աղանե-

րը եկեղեցիները շինում են հէնց իւր նման գիւղացիների արիւն-քրտինքով աշխատած փողերով: Զի խմանում, որ աղան առաջնորդին, նաչալնիկին ուտացնում ա, խմացնում ա հէնց գիւղացու աշխատանքից: Զի խմանում, որ էդ վեքսելն նմանը մէկը չէ, երկուսը չէ, նա միշտ էդպէս յետ ա քաշում, փափուկ բարձ զնում գլխոտակին, խաբում, վերջը յանձնում տանուտէրին:

Տանուտէրն էլ հայհոյելով, ծեծելով, փողն առնում ա: Փող, որ չի լինում, եզն ու ձին ա դուրս քաշում դովից:

Միամիտ ա գիւղացին: Նա միշտ հաւատում ա, ծանաւանդ էն մարդկանց, որոնք քաղաքի մէջ («աղա») են համարւում: Իսկ յայտնի ա թէ ինչ ճանապարհով են նրանք հարստացել, աղա դառել:

Գիւղացին պարտքը երկու անգամ ա տալիս, բայց պիտի իմանայ, որ երկու անգամ տալը նշանակում ա իւր ստացած փողը տասն անգամ աւելացնել և տալ պարտքատիրոջ:

Էսպէս շատ անգամ ա պատահում:

Գիւղացին տասը մանէթ պարտք ա վերցնում, վեքսելն մէջ երեսուն կամ քառասուն տոկոս ա դրում: Էդ վեքսելն էլ դրում ա վեց ամիս ժամանակի, որպէսզի վեց ամսից յետոյ վեքսելը փոխուի, տոկոսը աւելացնուի, այսինքն տոկոսի վրայ էլ տոկոս դրուի և էդպէս քանի զնայ՝ տոկոսներն աւելանան ու աւելանան:

Պատահում ա մի համարձակ գիւղացի, որ աղային խնդրում ա՝ տոկոսը քիչ զրել:

Աղան պատասխանում ա.

— Թող էդքան դրուի, օրհնած, թուղթ ա, թող դրուի, վերջը հեշտ ա:

Վէջն էն ա լինում, որ աղան գրուած տոկոսից մի կօպէկ էլ չի պակասեցնում և ուղիղ առնում ա որքան գրուած ա լինում:

Շատ անգամ ես հարցրել եմ գիւղացուն.

— Ի՞նչու համար էդքան տոկոս ես տալիս վաշխառուին:

Նա պատասխանում ա.

— Ծար չկայ. պարտք անելու էլ ուրիշ տեղ չունենք: Փող ա հարկաւոր: Ծարահատեալ նրա ուղածը տալիս ենք:

Ես մի անգամ ականատես եմ ըլլել էսպէս մի անօրէն դէպքի:

Մի գիւղացի մի անգամ մէկի ձեռքով թուղթ ա ուղարկում իւր հարեանին և խնդրում ա, որ իրան յիսուն մանէթ փող ուղարկի:

Հարեանն ուղարկում ա, յետոյ էլ գալիս ա վեքսել ուղում:

Վեքսելն էլ ստանում ա: Յետոյ էնպէս ա պատահում, որ յիսուն մանէթ ստացողը տնտեսանում ա (կտոր ընկնում): Այնուհետեւ պարտքատէրը իւր յիսուն մանէթը պահանջում ա էն թուղթ բերողից:

Թուղթ բերողը յայտնում ա, որ ինքը պարտական չէ, ինքը մենակ հարեանի խնդիրն ա կատարել, նրա թուղթը բերել, փողն էլ տարել նրան տուել: Բայց անխղճմտանք և անօրէն պարտքատէրը զանգաւում ա քեօխին, քեօխան էլ սրա կողմն ա պահում և ծեծելով ու պատժելով* յիսուն

*) Քեօխան էսպէս ա պատժում: Էն թուղթ բերողին կանգնեցնում ա, յետոյ նրա չորս կողմը, հողի վրայ մի շրջանածև գիծ քաշում (ջրգ) և պահանջում փողը: Մինչև փողը չտայ, էն

մանէթն առնում են անմեղ թուղթ բերողից: Վեքսելն էլ դեռ պահում աւ և մի օր էլ էդ վեքսելով իսկական պարտականիցն ա փող պահանջում:

Ուրիշ շատ էսպէս դէպքեր:

Ահա հէնց էսպէս դէպքերի համար ա հարկաւոր, որ գիւղացին փողը ինչ օրէնքից հասկացողութիւն ունենայ:

Պատահում ա էսպէս էլ:

Գիւղացին փողը բերել աւ և ուզում ա իւր պարտքը տալ ու վեքսելը յետ առնել աղայից: Էնպէս ա լինում, որ աղայի միտքը ծուռ ա ըլում, փողն առնում ա բայց չի ուզում վեքսելը յետ տալ: Մէկ էլ տեսնում ես քաղցր ձայնով ա խօսում գիւղացու հետ, քաղցր խօսքերով ա փափուկ բարձ դնում նրա զխատակին և ասում.

—Ախր, վեքսելը կորել ա, է, լաւ, միթէ դու ինձ չե՞ս հաւատում, միթէ ես Աստուած չունիմ: Կամ միթէ լայեղ կանեմ մէկէլ քեզանից փող պահանջեմ:

Գիւղացին հաւատում ա: Փողը տալիս ա, անցնում-գնում:

Բայց երբ որ մի քանի ամիս անց ա կենում, աղան վեքսելը հանում աւ և մին էլ պարտքը պահանջում:

Որքան էլ գիւղացին երգում ա, լաց ա լինում, ասում ա, որ փողը տուել եմ, բան չի դուրս գալիս: Աղան էլ երգում ա մարդկանց առաջ, որ մի կօպէկ էլ չի ստացել և վերջապէս ասում ա.

մարդն իրաւունք չունի շրջանից (ջրհից) դուրս գալ: Յետոյ քեօխան Յիպոտն առնում ա, ծնծում խեղճի ոտները, փողը պահանջում և էսպէս երկար տանջում նրան, մինչև որ ազգակաները բերում են վճարում:

—Ախր, հէնց կլինի փողն ստանամ ու վեքսելը յետ չտամ:

Էդպէս ա ասում աղան և քեօխի հետ մէկ տեղ գալիս են փողն ուզում: Փող որ չի լինում եղն ու կոլմ են դուրս քաշում, տան մէջը, պղինձը, խալին և ինչ էլ որ պատահում ա: Երեխաների լացն ու արտասուքն էլ իսկի նշանակութիւն չունի աղայի համար:

Ուրեմն եթէ գիւղացին օրէնք հասկանար, իւր պարտքը տալու ժամանակ՝ աղայից վեքսելը կպահանջէր:

Ասենք կարող ա պատահել, վեքսելը կկորչի, գիւղացին էլ ուզում ա անպատճառ իւր պարտքը վճարէ, ուրեմն ի՞նչ անել:

Ահա էլի հարկաւոր ա, որ գիւղացին էստեղ հասկանայ մի շատ հասարակ բան:

Էսպէս դէպքում նա աղայից մի ստորագրութեան թուղթ առնէ. թէ՛ աղան փողն ստացել աւ և, որ, եթէ բան ա, վեքսելը գտնուեց, էլ նա իրաւունք չունի էդ վեքսելով փող պահանջել:

Գիւղացին չգիտէ ամենահասարակ իրաւունքների մասին: Էդ պատճառով քեօխէքը ինչ որ ուզում են, անում են, ինչ օրէնք էլ լինի նրանց ձեռին ա, նրանք էլ միշտ հարուստի կողմն են, որովհետև հարուստից մի բան են դուրս քաշում:

Խեղճ գիւղացին խաւար ու ագէտ մնալով, օրէնքից բոլորովին տեղեկութիւն չունենալով, մնում ա գերի թէ՛ դաղանասիրտ աղայի ձեռին, թէ՛ անիրաւ քեօխայի ձեռին:

Կիրակնօրեայ ուսումնարանները հասակաւորների

Համար ամենքից շատ հարկաւոր են զիւղերի համար:

Ամեն բան չի կարելի պահանջել վարժապետ-քահանայից: Նրա անելիքների մասին մենք խօսեցինք էս գրքի սկզբի երեսներում: Նրան շատ ժամանակ պիտի օգնեն ուրիշ քահանաներ, վարժապետներ և վարժուհիներ:

Օրինակ՝ կիրակնօրեայ դասերի համար կարող են զիւղը դալ հէնց քաղաքի վարժապետներից ու վարժուհիներից: Բայց էն զիւղերը, որոնք գտնուում են քաղաքներից շատ հեռու, էդ տեսակ տեղերը պիտի գնան մեծ զիւղերի կամ մեր յիշած չորս դասարան ունեցող ուսումնարանների վարժապետները:

Իսկ քաղաքում ապրող վարժուհիները, կամ քաղաքացի ուսում առած կանայք—էն կանայքը, որոնք միշտ կանանց իրաւունքների մասին են խօսում, կամ շատ ուրիշ բարձր մտքեր են յայտնում, աւելի անկեղծ կլինին և աւելի մեծ գործ կանեն, որ մտնեն զիւղերը, ման դան ամեն տեղ և զիւղացի կանանց մէջ լաւ-լաւ քարոզներ ասեն: Այսինքն ոչ թէ մեծ-մեծ խօսեն, ճշմարտ ու անց կենան, գնան: Այլ օրերով միան և մեր բերած օրինակով՝ գերմանացի կանանց նման՝ տնտեսութեան վերաբերեալ բաներ սովորացնեն՝ զանազան տեսակ կերակուրներ պատրաստել, կար, ձև, ասեղնագործութիւն, դեռ որ կարողանան՝ բժշկութիւնից էլ խօսեն, քիչ հասկացնեն շուտ-շուտ պատահող հիւանդութիւնների մասին, ցոյց տան բժշկելու ձևերը, պատմեն լուսաւոր երկրների կանանց մասին, թէ ինչպէս են երեսայ մեծացնում, կամ ինչպէս են իրանք իրանց երեխաներին պահում, պահպանում, ուսում տալիս, կրթում, զաստիարակում: Եւ էդպէս կամայ—կամայ

բաց անեն հայ զիւղացի կանանց միտքը, որ դեռ խաւար է: Բայց, ի հարկէ, ամեն բան նրանց պիտի բացադրել մեծ զգուշութեամբ: Էնպէս պիտի հասկացնել ամեն բան էնպէս պարզ պիտի բացադրել, որ զիւղացի հայ կինը միտքը բաց անելով, ծրարի-պրտի բաների ետեւից չընկնի: Կարողանայ տուն պահել, տան հոգսերը կարողանայ լաւ հասկանալ, կարողանայ երեսայ պահել, կրթիւ և ուղիղ ճանապարհով մեծացնել, վերջապէս զիւղացի կինը էնքան աչքաբաց և խելահաս պիտի լինի, որ իւր մարդուն մի անբախտութիւն պատահած ժամանակ նա կարողանայ գործը շարունակել: Աչքաբաց լինելուց յետոյ կինն էլ կարող ա հասարակաց գործերի մէջ խառնուիլ, նա էլ կարող ա քիչ օրէնք սովորել, զիւղի ընդհանուր ցաւն ու դարդը հասկանալ և յետոյ ինքն էլ կարող ա շատ ու շատ օգուտներ տալ:

Ճին ժամանակները մեր կանայք ստրուկ չեն ըլէլ, ոչ էլ էնպէս փակուած են սպրել, ինչպէս որ հիմա է:

Զուր չէ ասուած մեր ժողովրդական առածը թէ՛ մարդն ու կինը մի ջուխտ լծկաններ են, տունն էլ իրանց արան ա: Երկուսն էլ միասին գութանը պիտի քաշեն, երկուսն էլ միասին արտը պիտի հերկեն, սերմ գցեն, որ յետոյ կանաչի, պտուղ տայ:

Մեր զիւղական աների մէջ պառաւ նաները մի-մի քիօխայ են ըլէլ: Նրանք են կարգադրել ամեն բան: Տանը մէջ՝ ամենքն էլ թէ հասակաւոր տղամարդիկ, թէ հարսներ, փեսաներ, աղջիկներ, թոռներ լսել են նրան, խոնարհ ու հնազանդ կատարել են նրա բոլոր հրամանները: Ոչ-ոք նրա խօսքը չի կոտրել: Ոչ-ոք չի համարձակուել նրան մի հակառակ պատասխան տալու:

Նանն էսպէս ա ուղում, նանն էնպէս ա ուղում:

Ամեն բան էնպէս պիտի լինի, ինչպէս նանն ա կարգադրում: Ամենքից մեծն ա, ուրիմն ամենքից էլ խելօքն ա համարում: Նա ինքն էլ ամենքին սիրում ա հաւասար, ինքն էլ ամենքի տեղն ու պատիւը ճանաչում ա և չի լինիլ, որ նա մէկին զուր տեղից նեղացնի, կամ մի ուրիշին զուր տեղից առաւել սէր ու պատիւ ցոյց տայ: Նանը խելքի ծով ա, նա ամեն բան շատ լաւ ա հասկանում և շատ լաւ ա կարգադրում:

Էդպէս էլ մեր գիւղական տներում կարգ ու կանոն ա ըլլէ: Տան մէջ ամեն մէկը ունեցալ ա իւր յայտնի տեղը, ամեն մէկը իմացել ա թէ ինչ ա իւր անելիքը և սուս-փուս իւր գործին ա կայցել: Ամենքն էլ իրանց գործն արել են նանի հսկողութեամբ, նանի օրհնութեամբ:

Թուրքերի տիրապետութիւնից առաջ հայ կանայքն երեսները փակուած չեն պահել: Երեսների փակելը և հիմիկուայ անշնորհք հագուստները, հին ժամանակուայ թուրքերից ա մնացած: Դժուար ժամանակներ են ըլլէ: Հայ կինն ու աղջիկը վախեցիլ են երես բաց անել: Խանի Փարրաշները իսկոյն բռնել են—տարել: Դրա համար էլ հայ կնանիքն ու աղջիկները երեսները պինդ ծածկել են և էնպէս էլ հագուստ են հնարել որ պինդ ծածկուած լինին: Ի հարկէ, էդ բոլորն արել են ճարահատեալ, ոչ թէ սիրելով կամ հէնց յարմար ու գեղեցիկ համարելով:

Երբ որ գիւղի կանանցը կսովորացնեն նոր ժամանակի ձեռագործեր, այսինքն էնպէս բաներ, որոնք հարկաւոր են զալիս զանազան հագուստներ զարդարելու համար և էլի էնպէս բաներ, որոնք հարկաւոր են լինում սենեակներ սարգելու համար, այնու-

հետե զիւղի մէջ պիտի կանանց արհեստանոց էլ շինել:

Ի հարկէ, էդ տեսակ արհեստանոցի համար յարմարացրած տները կշինուին զանաքանի հաշուով:

Արհեստանոցի մէջ պիտի տեղաւորել ամեն տեսակ մեքենաներ ու գործիքներ:

Երբ էդ տեսակ արհեստանոցը շինուի, երբ որ նրա մէջ ամեն հարկաւոր գործիքներն ու մեքենաները տեղաւորուին, այնուհետե գիւղի կանայք, որոնք որ կուզեն փող աշխատել, կգնան էդ արհեստանոցում կգործեն և համ զանազան ձեռագործեր կսովորեն, համ էլ իրանց ապրուստի համար փող կաշխատեն:

Առաջինը փող կաշխատեն, երկրորդն էլ՝ մի արհեստի փոխարէն մի քանի տեսակ արհեստ կսովորեն: Սովորելուց յետոյ էլ աշխատելը շատ հեշտ կլինի, որովհետե ամեն արհեստի համեմատ էլ մեքենաներ ու զանազան գործիքներ կգտնուին արհեստանոցում և էլ որեւէ գործ անելու դժուարութիւններ չեն լինիլ:

Ճշմարիտ է, ամեն մի կին էլ, ախր չե կարող ամեն իմացած արհեստի համար հարկաւոր մեքենան ու գործիքներն ունենալ:

Բայց կգտնուին կանայք, որոնք զանազան պատճառներով չեն ուզենալ արհեստանոց գնալ, այլ կուզենան հէնց իրանց աների մէջ աշխատել, էն ժամանակ, ինչպէս վերե էլ ասացինք, շտեմարանը պիտի էդպէսներին հարկաւոր գործիքները տայ: Ի հարկէ, էդ գործիքները շատ բանեցնելով, կհնանան, վերջ էլ կփչանան և շտեմարանը կգրկուի իւր ապրանքից: Դրա համար էն կնանիքը, որոնք գործիքները տանելու են իրանց տները, աների մէջ են

բանեցնելու և նրանցով փող աշխատելու, նրանք պարտաւոր են իրանց ստացած եկամբաւի համեմատ քրեհ տալ զանձարանին:

Իսկ ով որ շատ ա աղքատ, կամ այրի ա և մի շաքք որբերի տէր ա, պիտի նրանցից ամենեկին քրեհ չառնել:

Կանանց արհեստանոցի վերակացուն պիտի կին լինի: Եւ աւելի լաւ ու աւելի յարմար կլինի, որ էդ վերակացուները հէնց Նիրանց գիւղերից լինին: Էն էլ պիտի գիւղի կանայքը իրանք ընտրեն իրանց ծիջից, որին իրանք աւելի յարմար և աւելի արժանաւոր են համարում վերակացու լինելու համար:

Գիւղերի արհեստանոցներում երբ որ կանայքն ու աղջկերքն ամեն բան կտովորեն պատրաստել, էն ժամանակ մեր քաղաքների փոքրիկ վաճառականներն էլ նեղութիւն չեն քաշել՝ Մոսկով, կամ ուրիշ քաղաքներ գնալու և էնտեղից ապրանքներ բերելու:

Մոսկովից բերած ապրանքների մեծ մասն էլ, էլի գիւղերումն են պատրաստում, մեծ մասը հէնց Մոսկովին մօտիկ գիւղերում, էն էլ գիւղական կանանց ձեռքով են պատրաստում: Ուրեմն մեր կանայքն էլ երբ որ սովորեն, միենոյն բաները կպատրաստեն և այնուհետեւ, ի հարկէ, ամեն տեսակ ապրանք իւր տեղումը շատ ու շատ էժան կնստի, վաճառականի համար էլ շատ ձեռնտու կլինի:

Ապրանքներն երբ որ էժանան, երբ որ գիւղի կանայքն էլ կտովորեն ամեն տեսակ կար, ձե և զանազան ասեղնագործեր, իրանք էլ քիչ-քիչ հասկացողութիւն կունենան եւրոպական հագուստի մասին և գիւղի արհեստանոցումն էլ ամեն բան կկարուի, այնուհետեւ էլ մեր գիւղերի մէջ սովորութիւն կը դառնայ եւրոպական ձեով հագնուիլը: Էդ ձեով

կհագնեն թէ կանայքը և թէ աղամարդիկը: Միայն պիտի էդ հագուստների էն տեսակ ձեերն ընտրել, որ յարմար լինի մեր գիւղացուն, համ էլ սաղական լինի թէ կնոջ համար թէ աղամարդու համար:

Մեր երկրներից մեծ քանակութեամբ շերամ, բամբակ, բուրդ, տանում են Մոսկով, արտասահման, ծախում օտարների վրայ: Նրանք էլ էնտեղ՝ շերամից տրեւելումեղան են պատրաստում, բամբակից՝ տեսակ—տեսակ չթեղան, բրդից՝ մահուղեղան: Յետոյ մեր վաճառականները գնում են էդ ապրանքները թանկ գներով վերցնում, բերում մեր երկիրը, ըստէլ իրանք ահագին տոկոսներ աւելացնում և մեր շերամից, մեր բրդից ու բամբակից շինած ապրանքները՝ տասը-քսան անգամ թանկ գնով ծախում մեզ վրայ:

Մեր վաճառականները պիտի համ շնորհք ունենան համ էլ պիտի սիրտ անեն, ընկերութիւն ներ կաղմեն, մեր գիւղերի մէջ գործարաններ սարգեն և մեր երկրի մէջ հաւաքած բարիքներից իրանք ապրանքներ պատրաստեն և պատրաստի ապրանքն ուղարկեն Մոսկով և ուրիշ զանազան տեղեր ծախելու: Էն ժամանակ օգուտը մէկիւտեղ մի քանի անգամ աւել կստացուի և մեր ժողովրդի համար աւելի էժան կնստի:

Անբախտաբար մեր երկրումը շատ թէ քիչ ուսում առած վաճառական չկայ, արհեստների տեղեակն էլ չկայ: Իրա համար էլ մեր երկրի բարիքը հում ա զուրս գալիս և օգուտը քիչ ա ստացւում:

Տեսնում ես, որ մեր երկրում շատ քիչ զաւօղներ կան, շատ ու շատ քիչ էլ գործարաններ: Շատ շատ, մի քանի արաղի ու կոնեակի զաւօղներ են,

մի քանի էլ աբրեշում մաքրելու կամ թիւ շինելու գործարաններ:

Բայց խիստ տեսել էք էդ աբրեշումի գործարանները, որոնց զիւղերում «մանջըլըղ» են ասում, տեսել էք մեր խեղճ աղջկերանց և կանանց տանջանքները, կամ կոպիտ, անտաշ վերակացունների վարժունքները: Կամ գիտէք, ինչքան են ստանում էդ խեղճ, ողորմելի կնանիքը, էդ անբախտ ջահիլ-ջիւան աղջկերքը:

Անասունների ախոռները հազար անգամ աւելի մաքուր են քան էդ գործարանները—մանջըլըղները: Անբախտաբար մինչև օրս բժիշկներ չեն դնացել էդ գործարանները տեսնելու, որ հասկացնեն ում հարկն է, որ էն զարշիւհ հոտերը, էն սարսափելի կեղտոտութիւնները շատ ու շատ վնասակար են: Այո, անբախտաբար մինչև օրս ոչ-ոք ուշադրութիւն չէ դարձրել, ոչ-ոք ձայն չէ բարձրացրել: Ախր ո՞վ պիտի խօսէ,—էն խեղճ անձարացած կանայք ու աղջկերքը: Ախր նրանք խիստ կկարան խօսել: Կամ գիտեն ում ասեն, ում զանգառեն, ում առաջ հանեն իրանց ձայնը:

Խեղճ կնանիքն ու աղջկերքը էդ դժոխք գործարաններում, առաւօտից մինչև երեկոյ նստած, մէջքները կռացրած, էն հոտած ու ապականուած օդումը, տանջւում են, չարչարւում և ինչ են ստանում. օրական օմենաշատը քսան կօպէկ:

Էդ քսան կօպէկով նա պիտի հաց էլ առնէ, հացի հետ մի բան էլ ու դեռ պիտի գրանով շորի հոգս էլ քաշէ, իսկ շատ խեղճերն էլ պիտի որր երեխաներ ու պառաւած, հիւանդացած ծնողներ կերակրեն:

Ախր էս սարսափելի դրութիւն ա, էս դժոխքի

տանջանք ա, բայց ի՞նչ անէ խեղճ կինը, ո՞ւր դնայ գլուխը ո՞ր քարին տայ: Եւ էդ խեղճ անբախտ կանայքը շատ քիչ անգամ են տաք կերակրի երես տեսնում: Նրանց կերածը միշտ ցամաք հացն ա: Էդ պատճառով էլ էդ անձարացած խեղճերի աներից զանազան ցաւերն ու հիւանդութիւնները միշտ անպակաս են լինում:

Գործարանների տէրերից խղճմտանք սպասելը երազ ա: Նրանք էն տեսակ մարդիկ են, որոնց համար օրէնքն էն ա թէ՛ հազարը պիտի մեռնի, որ մինն ապրի: Նրանց մեծ մասը վաշխառուներ են և սարսափելի վաշխառուներ: Իրանք էլ զիւղացիներ են, իրանց ծնողներն էլ կամ աղքատ ու մութացկաններ են ըլլել, կամ դեղաներ, բայց երբ որ քիչ քիչ մէկն ու միւսին խաբելով, մի քանի կօպէկի տէր են դառնի, վերջն էդ կօպէկները վաշխառութիւնով շահեցրել են ու գործարանի տէր են դառնել: Հիմա էլ ի հարկէ, իրանց համար օրէնք են շինել թէ՛ հազարին արիւնը ծծիր, մէկի արիւնը շատացրու: Եւ ծծում են իրանց խեղճ ու սղէտ զիւղացու արիւնը, ծծում են իրանցը շատացնում: Եւ խեղճ զիւղացու արիւնից: քրտինքից զուրս եկած հարստութիւնն ա, որ վաշխառուների աղերքը բերում են Մոսկով և ուրիշ քաղաքներ և փուչ ու կեղտոտ ձանապարհներում փչացնում:

Թէպէտ վերջն իրանք էլ կեղտոտ հիւանդութիւնների տէր են դառնում և Աստուծոյ պատժին դալիս:

Էդ անիրաւ վաշխառուներն են, որ աղէտ զիւղացուն անասուն են շինում, նրա արիւնն ու քրտինքը թափ առլիս, նրանով էլ հարստանում: Իրանք, որ էսօր իսկի չեն ուղում, որ զիւղացին ու

սում առնի, աչք բաց անի, կարդալ-գրել սովորի: Ախր, չէ՞ որ կարդացողին դժուար ա խաբել, դժուար ա անասունի տեղ բանեցնել:

Շատ գիւղերում էլ անիրաւ վաշխառուներն, որոնք միշտ հետեւում են գիւղացին խաւարում մնայ և միշտ էլ աղքատ մնայ, նրանք ամեն կերպ էլ հետեւում են գիւղացին իրանց ճորտը շինել: Օրինակ՝ հէնց մեր գիւղում տեսել եմ վաշխառուներ, որոնք ոյժ ու կարողութիւն չունին ճանջելու սարգելու, բայց եթէ ուրիշներն ուղում են սարգել, էն ժամանակն արգելք են լինում, չին թողնում: Նրա համար, որ գիւղացին իրա ճորտութիւնից դուրս կգայ և կգնայ ուրիշի ճորտ կգառնայ: Այսինքն գիւղացին կգնայ ճանջելու և էլ չի գալ, իրա համար մշակութիւն անել կամ մի մեօհաաճ ու հօտաղ դառնալ:

Էսպէսներն ուրիշ տեսակ վաշխառուներ են, բայց զրանք էլ գիւղի մէջ «աղա» են համարւում, որովհետեւ քիչ փող էլ ունին վարելահող էլ, տաւար էլ, գութանն էլ: Էսպէսներն, իհարկէ, իսկի չեն թողնիլ, որ գիւղումն ուսումնարան լինի, որ գիւղացին կարդալ-գրել սովորի: Ախր իրանք էլ լաւ գիտեն, որ ուսում առածը և կարդալ-գրել իմացողըն, աշխարհի չարն ու բարին կհասկանայ և վաշխառուի ձեռքն գրի չի դառնալ:

Իրա համար էլ նրանք ամեն մի ուսումնարանի թշնամի են և ամեն կերպ էլ հետեւում են, որ երբէք գիւղն ուսում չմտնի: Մենք էլ ենք զրանց թթուն ծծել, զրանց անէծքն ու հայհոյանքը լսել:

1902 թին մեր հայրենի—Քոասնի գիւղում, մեր նոր շինած տունն առաջարկեցինք ուսումնարանական վարչութեան, որ մեր տանը ուսումնարան

տեղաւորուի, առանց քրեհի: Բացի էն, որ մենք քրեհ չուզեցինք, դեռ խոստացինք ամեն տեսակ օգնութիւն էլ անել, միայն գիւղն ուսումնարան ունենայ և գիւղացին շատ թէ քիչ ուսման տէր դառնայ: Քոասնին էլ կենարոն ա: Նրա շուրջը շատ գիւղեր կան: Քոասնում երբ ուսումնարան ունենանք, շրջակայ գիւղի երեխաներն էլ կգան ու պատեղ ուսում կստանան: Այդ փափագին մենք հասանք: Ուսումնարանական վարչութիւնը մեր առաջարկութիւնն ընդունեց մեծ սիրով և ամեն բան պատրաստեցինք ու մի օր փառաւոր հանդիսով օծեցինք ուսումնարանը և փառաւոր էլ հացկերոյթ սարգեցինք:

Էդ օրը Քոասնի հաւաքուէլ էին չորս գիւղի ժողովուրդ և ես տեսնում էի, որ թէ շրջակայ և թէ Քոասնի գիւղացիների ուրախութիւնը շատ մեծ էր:

Ճաշի ժամանակ ես մի համառօտ ծառ ասացի և բացադրեցի գիւղացիներին ուսման նշանակութիւնը: Ինքս էլ գիւղացի եմ, ինքս էլ չունիմ բարձր ուսում, բայց հասկանում եմ, որ ուսումից վեր՝ էլ լաւ բան չկայ: Ուսումը լոյս ա, ուրեմն մարդ եթէ ուղում ա խաւարում չմնայ, պիտի ուսում ստանայ:

Ճառից յետոյ ես լսեցի խեղճ գիւղացիների քաղցրը ու անկեղծ շնորհակալութիւնները: Ես տեսնում էի նրանց դէմքի ուրախութիւնները և ես էլ էի ուրախանում: Էստեղ եկել էին և մի քանի վաշխառուներ, բայց ինչպէս էին նրանք մեզ հայհոյում: Ինչ անէծքներ ու հայհոյանքներ էին թափում ամբողջ տոհմի վրայ: Մինչևանգամ անամօթաբար նրանք մօտենում էին մեզ ու ասում.

— Էս ինչ յիմար բան բռնեցիք դուք: Ախր ո՞նց կլինի, որ զիւղացին էլ ուսում առնէ, ախր աղքատի երեսան, որ ձրի ուսում առնէ ո՞վ պիտի հօտաղ դառնայ, ո՞վ պիտի մշակութիւն անէ, ախր ի՞նչի համար տունը տուիք, ի՞նչի համար ա էս ուսումնարանը, ի՞նչ պիտի անենք մենք:

Ես ասում էի, որ խեղճ զիւղացին էլ մարդ ա, ինչպէս և մենք, որ նա էլ պիտի մարդու նման ապրէ, որ նա չպիտի միշտ հօտաղ մնայ կամ մշակ դառնայ: Վերջապէս մշակութիւնն էլ, որ անէ իւր տանը համար պիտի անէ, ոչ թէ ուրիշների համար:

Բայց, ի հարկէ, վաշխառուն էսպէս խօսք լսել չի ուզում: Նա աշխատում ա մի որ և է կերպ ուսումնարանը փակել:

Ախ, հարուստներ, վաշխառուներ, ի՞նչ անուն տալ ձեզ: Ձկայ մի էնպէս անուն, որ սաղ զայ ձեր զղուելի արարմունքներին, ձեր դժոխային գործերին:

Ախր գայլն ի՞նչ կուզի.— թխպած օր: Ձկնորան ի՞նչ ջուր ա փնտռում.— պղտոր ջուր: Աւազակը լուսնակ գիշեր չի ուզում, այլ մթին, խաւար գիշեր: Խաւար գործի տէրը, ի հարկէ, խաւար գիշեր ա ուզում:

Վաշխառուն ո՞նց կուզի զիւղացին միտքը բաց անէ, աշխարհի չարն ու բարին հասկանայ, ո՞նց կուզի, որ խեղճ, աղքատ զիւղացին ուսում ստանայ, հաշիւ պահելն էլ հասկանայ: Ախր զրանից յետոյ էլ նրան ոնց խաբեն, էլ ո՞նց անեն, որ մի մանէթ պարտք տան և տարուայ վերջումը երկուերեք մանէթ պահանջեն: Ձէ՞, որ երբ որ զիւղացին ուսում առաւ, երբ կարգաւ-զրեւ սովորեց, շատ թէ քիչ հաշիւ հասկացաւ, այնուհետեւ նա մի մանէթի փոխարէն երեք մանէթ չի տալ: Նա կհասկանայ

տոկոսի չափը: Նա կհասկանայ, որ օրէնք կայ և վաշխառուն իրաւունք չունի օրէնքից վեր տոկոս պահանջել: Նա մի մանէթի տեղ՝ մի տարուայ ընթացքում ոչ երկու մանէթ կտայ, ոչ երեք, այլ հինգ կօպէկ կտայ կամ եօթը կօպէկ:

Ով որ պատահել ա և մօտիկ ծանօթացել ա զիւղերում ապրող կամ նոյն իսկ քաղաքներում վաշխառուների հետ և տեսել ա նրանց վարմունքը, կամ տեղեկութիւն ա առել նրանց արարմունքների մասին, նա անպատճառ սարսափել ա: Նա մարդ ա տեսել, բայց միմիայն պատկերը մարդու նման, բայց սիրտը, արարմունքը, ցանկութիւնները և ամեն մի գործը դադանի նման:

Վաշխառուները ինչ որ անում են, մնում են անպատիժ: Առաջինը, որ նրանց պէճ գանգատուող չկայ, զիւղացին ասում ա չեմ կարող գանգատուել, որովհետեւ էլ պարտք վերցնելու տեղ չունեմ, երկրորդը՝ իշխանաւորները այսինքն քեօխան, գզիւրը, պրիստաւը և ամեն մի մեծ ու փոքրիկ չինով-նիկը նրա հետ լաւ բարեկամ են: Ինչո՞ւ: Նրա համար, որ վաշխառուն միշտ իւղ ա քսում նրանց պռօշները, միշտ ուտացնում ա, փող ա տալիս: Նրանք էլ վաշխառուին միշտ պատիւ են տալիս, նրա խօսքին մեծ զին են դնում, դեռ ուրիշի մօտ խօսելիս նրա մասին շատ մեծ բաներ են յայտնում. իբր թէ նա շատ ազնիւ մարդ ա, շատ ճշմարիտ, դեռ շատ անգամ էլ նրան բարեւար են յայտնում, աղքատասէր, ժողովրդասէր: Վաշխառուն էլ, ի հարկէ, քեօխին ա միշտ զովում, գզիւրին լաւ մարդ ասում, իսկ պրիստաւի ոտները համբուրում ա, չինովնիկներին իրանց համեմատ զովասանքներ ա ասում: Մի խօսքով՝ իրար ոտք չեն կոխում:

Ի հարկէ, պրիստաւն էլ քեօխան էլ զղերն էլ շատ ու շատ լաւ գիտեն, որ վաշխառուն մի անիրաւ մարդ ա, որ նրա բոլոր հարստութիւնը խեղճ գիւղացու մէջքիցն ա դուրս եկել... գիտեն, որ նա ստոր ա, խաբերայ ա և էն փողերն ու ընծաները, որ տալիս ա իրանց՝ հազար խեղճի արնից ու քրտինքից ա դուրս եկել, բայց ի՞նչ կասեն, ի՞նչ կխօսեն:

Շատ անգամ էլ հէնց քեօխան ու պրիստաւն ա վաշխառուին թե տալիս, ճանապարհ ցոյց տալիս, որ աւելի շատ թալանէ, աւելի շատ խեղճերի մէջք կոտրէ, տուն քանդէ, որովհետեւ ինչքան շատ ա լինում վաշխառուի եկամուտը, ինչքան նա շատ ա հարստանում, էնքան աւելի շատ բաժին ա հասնում՝ թէ քեօխին, թէ պրիստաւին, թէ գղերին և թէ ուրիշ մեծ ու պստիկ չինովիկներին և մինչև անգամ զանազան «միրզաներին»:

Մի մանէթ տուր քեօխին և որ մարդու ուզես փառաւոր կերպով ծեծել կտաս:

Բայց, ի հարկէ, եթէ նա էլ ուսում ունենար, էդպէս բան չէր անիլ, մարդկանց անասունի տեղ չէր դնիլ, կիմանար, որ ինքն էլ մարդ ա, էն ծեծուողն էլ: Մի խօսքով էդ բոլորն էլ տգիտութիւնից ու խաւարիցն ա:

Ուրեմն որքան պիտի տանջուի խեղճ գիւղացին, որքան պիտի չարչարուի, աղի քրտինք թափէ, որ էդ քրտինքովը հարստացնէ համ վաշխառուին, համ քեօխին ու պրիստաւին, համ էլ զանազան չինովիկներին ու գղերներին:

Ամեն կողմով և ամենքից զրկուած ա գիւղացին: Մէկ էլ կրկնում ենք, որ անասունը նրանից բախ-

տաւոր ա: Շատ խօսեցինք վաշխառուների մասին, բայց էլի բոլորը չասացինք: Դիւղացու ցաւը շատ շատ ա: Նրա տանջանքին ու նեղութեանը չափ չկայ: Նա միշտ խոնարհ, միշտ հնազանդ, իւր պարտքը ճանաչող, իւր ստացածիցն էլ միշտ չմխիթարուող, կարծես հէնց ապրում ա ուրիշի համար, հէնց աշխատում ա, որ ուրիշն ուտէ:

Ամեն դառն տանջանք քաշում ա, ամենքին հարկըն ու պարտքը տալիս ա, դեռ շուտ-շուտ Բեգեւան էլ ամենքի վրայ ա աւելանում: Բեգեւանի նման էլ ցաւ ու տանջանք չկայ: Արեւի-անձրեւի տակ, առանց վարձի, մաշուի, չարչարուի կամ էս էն ճանապարհների վրայ, կամ մորեխ կոտորելով կամ ուրիշ էլ էդպէս ծանր նեղութիւններ ու տանջանքներ քաշելով:

Դեռ լաւ ա, որ գիւղացին Բեգեւան ա գնում իւր ցաւերի համար, իւր սեպհական պարտքն ա կատարում կամ տէրունական պարտք ա կատարում, բայց շատ ու շատ անգամ պատահում ա, որ ուրիշ տեղեր էլ բեգեւան ա նշանակւում և նա գնում ա:

Պատահում ա, որ ուրիշ գիւղերում, մանաւանդ հեռու, թուրքի գիւղերում անբախտութիւն ա պատահում, մորեխ կամ մկներ են երևում, ուրեմն և հարկաւոր ա դրանց կոտորել, առաջն առնել:

Տէրութեան կողմից նշանակւում են մարդիկ: Էդ մարդիկը մանում են հայի գիւղերը և գիւղացիներին հաւաքում, տանում՝ մկներն ու մորեխը կոտորելու:

Հայ գիւղացիներն էլ՝ հազարաւոր հողի գնում են և պատահում ա, որ մի ամբողջ ամիս տանջւում են, մորեխ են կոտորում:

Էդ մի ամսուայ ընթացքում նրանք պիտի հայ

ստանային տէրութեան հաշուից: Շատ անգամ հացի հետ քիչ վարձ էլ ա նշանակում: Բայց մի ամբողջ ամիս չարչարում են խեղճ գիւղացիները, մի ամբողջ ամիս իրանց բան ու գործը թողած, ուրիշ ցաւով են զբաղւում և ամսուայ ընթացքում ոչինչ չեն ստանում.— ոչ հաց, ոչ փող: Միայն կոտորուածքը երբ վերջանալուն մօտենում ա ու մի երկու օրուայ գործ ա մնում, պրիստաւը երկու օրուայ համար ամենքին էլ հաց ա բաժանում և ամենքիցն էլ ստորագրութիւն ա առնում, որ իրանց ստանալիքը ստացել են:

Խորամանկ պրիստաւը թղթի վրայ գրում ա իբրբը թէ գիւղացին ստացել ա էն բոլորը ինչ, որ նա պիտի ստանայ: Բայց գիւղացին ստանում ա մենակ երկու օրուայ հաց: Պրիստաւն երկու օրուայ հացը տալիս ա ու ասում. «գէ, ստորագրեցէք, որ ստացել էք»: Ախր ի՞նչ են ստացել.—բոլոր ստանալիքը, թէ երկու օրուանը գիւղացին ոչինչ չի հասկանում, ստորագրում ա և մնում խորում:

Լաւ, խարուել ա, հիմա ո՞ւր գնայ, ո՞ւմ ասէ: Ոչ օրէնք գիտէ, ոչ էլ իշխանաւորի տեղն ա իմանում: Կամ ի՞նչ նշանակութիւն ունի նրա զանգատը: Նա միանգամից ստորագրել ա, որ բոլորն ստացել ա: Ուրեմն էլ ի՞նչ կարայ անել: Էլ ո՞ր օրէնքով կարող ա պահանջել: Ահա էսպէս էլ միշտ, էսպէս էլ ամեն ժամանակ, գիւղացին անուսում մնալով, միշտ էլ իւր հալալ աշխատանքից զուրկ ա մնում:

Էլի կրկնում ենք, որ ուսումն ա գիւղացուն օգնելու և ազատելու էգ նեղ զրութիւնից: Ուսումն ա գիւղացուն հարկաւոր:

Ուսումնարան և գիւղական—ժողովրդական շտե-

մարան: Սրանք են շատ հարկաւոր: Շտեմարանը նրան կազատէ ամեն տեսակ գազան վաշխառուի ձեռից, ուսումնարանն էլ հօ, ասացինք թէ լոյս կտայ նրան, աչքը բաց կանէ և նա էլ ոչ գերի կմնայ, ոչ ստրուկ կդառնայ և էլ իւր հալալ քրտինքի պտուղը, իւր դառն տանջանքների արդիւնքը, ոչ խորամանկ-խաբեայ պրիստաւները կուտեն, ոչ էլ անխղճմտանք ու անսիրտ քեօխաներն ու գզերները կկլանեն:

Հայոց ժողովուրդը՝ թէ գիւղացի, թէ քաղաքացի՝ առաջուայ ժամանակները մեծ սէր ա ունեցել գէպի եկեղեցին:

Մեր երկրի որ կողմը գնաս, հէնց կտեսնես մի փառաւոր վանք մի սարի գլխին, մի քանի հազար դեսեատին հող էլ ընծայած էգ վանքին: Յետոյ էս ու էն քաղաքներում, էս ու էն գիւղերում փառաւոր եկեղեցիներ, հարուստ տէրտէրներ, վարդապետներ, եպիսկոպոսներ: Մինչև անգամ էգ վարդապետների ու եպիսկոպոսների ազգականներն էլ հարուստ և ապահով: Եւ էգ բոլոր ժողովրդի փողովը, ժողովրդի զրպանիցը:

Ժողովուրդը ոչ մի ժամանակ փող չի խնայել՝ ոչ եկեղեցու համար, ոչ տէրտերի ու վարդապետի համար: Հայ ժողովուրդը առատ ձեռով տուել ա ամենքին, առատ ձեռով շինել ա վանքերն ու եկեղեցիները, փառաւոր կերպով զարդարել ա նրան և լաւ էլ հարստացրել ա:

Ի հարկէ, ժողովրդի հաւատն անկեղծ ա ըլէ: Նա կարծել ա, որ ինչպէս ինքն ա սիրում ժամերն ու վանքերը, տէրտէրն ու վարդապետներն՝ էն-

պէս էլ էդ տէրաէրն ու վարդապետներն են սիրելու իրան: Ժողովուրդը նրանց հարստացրել ա, հաւատալով, որ նրանք էլ իրա համար են անելու, իրա որդոց համար են մտածելու:

Հին ժամանակներն անցել են: Ժամերն ու վանքերն էլ ուսում ու հաց չեն տալիս: Ճշմարիտ ա, հին ժամանակները մեր վանքերումն էլ ուսումնարաններ են ըլլել և զանազան գիտութիւն վանքերիցըն ա դուրս եկել, բայց հիմա ժամանակը փոխուել ա: Հիմա էլ ոչ վանքերում կարելի ա ուսումնարան պահել, ոչ էն ժամանակուայ գիտութիւններն են մի բանի պէտք:

Հիմա ժամանակը փոխուել ա:

Մարդը ժամանակի համեմատ պիտի գնայ:

Հին ժամանակներում սխալներ շատ ենք ունեցել: Դրա համար էլ մեր ժողովուրդը խեղճ ա մնացել: Գոնէ էսօր պիտի մտածել, էսօր պիտի ժողովրդին մի էնպէս ճանապարհով տանել, որ նա ոտնատակ չի դառնայ: Ահա դրա համար ա հարկաւոր նոր ձևի ուսումնարան շինելը և նոր-նոր գիտութիւններ սովորացնելը: Դրա համար ա հարկաւոր, որ մեր տէրտէրներն ու վարդապետներն իրանց ազնիւ պարտքը ճանաչեն և, ինչպէս Աւետարանն ա ասում, Աստըծունը՝ Աստըծուն տան, կայսրինը՝ կայսրին, պէտք ա ժողովրդինն էլ ժողովրդին տան:

Եթէ հայ ժողովուրդը իւր հոգեւորականի համար ոչինչ չի խնայել, հոգեւորականն էլ պարտաւոր ա՝ ժողովրդի համար չինայէ: Հոգեւորականը դեռ աւելի պիտի անէ, ինչպէս ասած ա. «Հովիւ քաջ զանձըն դնէ ի վերայ ոչխարաց»: Եթէ մեր տէրտէրներն ու վարդապետները ճշմարիտ և անկեղծ հովիւներ են կամ Քրիստոսի ճշմարիտ և անկեղծ աշակերտ-

ներ են, պիտի նրա խօսքն էլ ճշմարտութեամբ կատարեն, պիտի անկեղծօրէն իրանց հօտի, իրանց ոչխարների համար մտածեն: Անբախտաբար մեր հովիւների մեծ մասն էդպէս չէ մտածում: Նրանցից շատերը հէնց ոչխարի բուրդը խուզում են, կաթը ծրծում, դեռ սպասում, որ միան էլ ուտեն: Էդպէսներն, ի հարկէ, ինչ կմտածեն ժողովրդի ուսման համար: Եւ ոչ թէ չեն մտածիլ, այլ դեռ կաշխատեն, որ ուսում չլինի, գիւղացու կամ առհասարակ խաւար ժողովրդի միտքը չբացուի: Էդպէսները ուսման մի փոքրիկ լոյս, որ տեսնեն, իսկոյն կխափանեն, որովհետեւ իրանց համար էլ ձեռնտու չէ ժողովրդի լուսաւորութիւնը, որովհետեւ լուսաւորուած ժողովուրդին դժուար ա մաշկելը: Էդպէս անարժան հովիւները՝ քեօխանների ու գղերների նման միշտ հարուստի հետ են բարեկամ դառնում և սրանք էլ միշտ վաշխառուների կողմն են պահում ու նրանց աւելի շատ յարգանք ու սէր ցոյց տալիս:

Շատ հոգեւորականներ կան, որոնք, երբ որ ժողովրդի ուսման մասին խօսք ա լինում, հարուստների հետ մէկ տեղ սկսում են հին խաղը կանչել: Սկսում են ասել թէ՛ գիւղական ժողովրդին ուսումը հարկաւոր չի, գիւղականն, որ ուսում առնի, էլ արտին մտիկ չի տալ, էլ մշակութիւն չի անիլ: Բայց, ի հարկէ, իրանք ազուաւի կռուոցներ են:

Հիմա էլ լուսաւորուած երկրներում, ոչ թէ գիւղականն, այլ մէջքին բեռը տանող մշակն էլ ուսում ա առնում, գիրք ա կարդում, օրէնքից ա խօսում և ոտնատակ չի դառնում: Նրանք իրանց հալալ քրտինքի պտուղն ուրիշի ձեռք չեն զցում, միշտ իրանց համար են պահում, իրանք են ուտում:

Ուրիշ երկրներում՝ կտեսնէք գիւղականներն ար-

տերի միջին՝ կամ վարի ժամանակ, կամ հունձի ժամանակ, երկու երեք լրագիր ձեռներին կարգում են:

Երբ որ գալիս ա ճաշի ժամանակը՝ եզները բաց են թողնում արածելու և հանգստանալու, իրանք էլ ճաշում են ու մի կէս ժամ, մի ժամ էլ կարգում են, աշխարհի գործերի հետ ծանոթանում, դանազան երկրների մասին տեղեկութիւն ստանում և էլի իրանց վարը կամ հունձը շարունակում: Էդպէս էլ ամեն օր: Համ իրանց գործն են կատարում, համ էլ աշխարհի ամեն բաների մասին տեղեկութիւն ստանում իրանց միտքն էլ բաց անում և ամեն տեսակ չարն էլ հասկանում բարին էլ:

Կնանիքն էլ յետ չեն մնում իրանց մարդկանցից: Նրանք էլ են կարգում լրագիրները, նրանք էլ աչքաբաց դառնում և աւելի լաւ հասկանում իրանց գործը, իրանց անելիքը:

Էդպէս լրագիր են կարգում և քաղաքի մշակը՝ թէկուզ բնօր մէջքին տանելիս, և արաբաչին, և ամեն մի արհեստաւորը: Մի խօսքով ուսումը և լուսաւորութիւնը տարածուած են ամեն տեղ, ամենքն էլ աշխարհի հետ լաւ ծանօթ են, զրա համար է ամենքն էլ լաւ են ապրում և աղքատութիւն էլ չկայ:

Մեր հարուստները մինչև հիմա մեր գիւղացուն ու մշակին մի մի անասուն են համարել, լայաղ չեն արել նրանց հետ մարդավարի վարուել, նրանց մարդու տեղ չեն զրել: Եթէ էդպէս հաշուենք իրանք էլ մի-մի անասուն են ըլել, ամեն մէկը մի խեղճ ագէտ մշակի որդի ա ըլել, կարողացել ա զանազան ճանապարհներով հարստանալ, հիմա էլ ինչ տեսակ էլ լինի հետեւում են, որ խեղճ գիւղացին ու

մշակը միշտ խաւար մնան, որպէս զի իրանց ստրուկը շինեն և նրանց աղի քրտինքովը իրանց հարստութիւնը մեծացնեն: Դրա համար միշտ հետեւում են ուսում չլինի, գիւղերումն էլ ուսումնարաններ չհիմնուին:

Հիմա մեր ուսում առած տղերանց աններելի կլինի, որ էդ բոլորը տեսնեն և սուս կենան: Նրանք պիտի մանեն գիւղերը և ժողովրդի աչքը բաց անեն, ուսում քարոզեն, ուսումնարաններ հիմնեն:

Մեր ժողովրդի սէրը մեծ ա գէպի ուսումը: Նա շատ լաւ ա հասկանում նրա նշանակութիւնը և շատ մեծ սիրով էլ ուղում ա ուսում ստանալ, բայց ճանապարհը չգլխէ, տեղը չգիտէ: Նրան ճանապարհ ցոյց տուող ա հարկաւոր:

Կրկնում ենք, որ մեր քահանաները, մանաւանդ քաղաքի քահանաները՝ եթէ իրանք ժողովրդի համար ճշմարիտ հայր են, եթէ հովիւ են, եթէ մինչև անգամ ուղում են, որ եկեղեցին էլի կանգուն մնայ և իրանք էլի եկեղեցու շուքի տակ շարունակեն ժողովրդի հացով ապրել, թող ուրեմն ցոյց տան, որ իրանք սրաակից հովիւ են: Թող ցոյց տան գործով և ոչ խօսքով, թող երբեմն դուրս գան քաղաքից և գնան գիւղերը շրջեն, մանեն խաւար ու տղէտ ժողովրդի մէջ և ուսում քարոզեն, էս ու էն լուսաւոր բաների մասին խօսեն և քիչ ուսման լոյս մացնեն:

Իսկ եթէ էս ցաւ ու կրակի արանքում, էս հաղար պատուհասի տակ տնքալիս ժամանակ՝ տէրտէրներն՝ իրանց երկրորդ, երրորդ պսակի դարդն են քաշում կամ առարկի տալով, գոռգոռում են թէ՛ ժամաստցութիւնը պիտի կարճացնել, էս ու էն օրէնքը պիտի փոխել, էս ու էն խորհուրդը պիտի

Ծէս համարել, կամ էս չենք ուզում, էն չենք ուզում, և ամենքից շատը փողն ենք ուզում, էդպէս բաները ուղղակի անսամթութիւն ա: Էդ նշանակում ա, որ նրանք ոչ ժողովրդի համար են տէրտէր դառել, իսկի ոչ էլ եկեղեցու համար, այլ տէրտէր են դառել մենակ իրանց փողը սողցնելու և իրանց աղջկերանց ու տղերանց դարգարելու և աղայի նման պահելու համար: Յիմա էլ երեւի նրանք աւելի շատ պիտի պահանջեն և ժողովրդի ջէքերը աւելի շուտ-շուտ պիտի թափ տան, որովհետեւ երկրորդ, երրորդ կին էլ են առնելու, դեռ Աստուած տայ, որ մի օր էլ մովսէսական օրէնք չքարոզեն և եօթը կին չպահանջեն:

Բայց էս ողորմելի տէրտէրները պիտի հասկանան, որ հայոց ժողովուրդը նամուսով ժողովուրդ ա և համբերատար ա: Պիտի գգոյշ կենալ: Ամեն համբերութիւն վերջ ունի: Մի օր էլ հայ ժողովրդի համբերութիւնը կվերջանայ և այնուհետեւ հայ տէրտէրներին, մանաւանդ քաղաքի տէրտէրներին, էն էլ նոր զուռնա փչող, նոր զուռնայով պար եկող տէրտէրներին ուրիշ տեսակ կհասնի:

Էլի թէ քիչ հաւատ ու հոգեւորականի շնորհք մնացել ա, էլ էլ գիւղի տէրտէրների մէջն ա:

Գիւղի տէրտէրների մեծ մասը թէպէտ տգէտ ա, բայց սիրտն աղնիւ ա, պահանջը քիչ ա: Առաջինը գիւղի տէրտէրները, շատ քիչ արդիւնք ունին, ստացածները կօպէկներ են լինում, երկրորդն էլ գիւղական ժողովուրդն ոյժ չունի տէրտէրին շատ վճարելու: Էդ պատճառով գիւղի տէրտէրները իրանց ապրուստը ուրիշ գործով են աշխատում: Նրանք էլ հոստարակ գիւղացու նման երկրագործութեամբ են պարսպում.— վարում են, հնձում են, դաշան ու

հանդն են դնում և էլի տրտունջ չեն յայանում, իրանց հաւատիցն էլ մի մաղի չափ չեն ծուռում: Միշտ իրանց օրէնքը կատարում են, միշտ ժամն ասում են և էնքան մաքուր ա նրանց հաւատը ու էնքան սէր ունին զէպի եկեղեցին, որ եթէ չեն կարողանում ամեն օր ժամ ասել, վար ու ցանքսի ժամանակ, կամ կալի ժամանակ էլի գործի գնալիս, բաց են անում եկեղեցու դուռը, մի («Ճայր մեր») ասում ու դուրս գալիս:

Մի գիւղական քահանայ գիտէինք, որ առաւօտեան վաղ՝ հունձ գնալուց առաջ վաղ կանգնում էր եկեղեցու շէմքում, խաչ հանում երեսին ու ասում.

— Տրաժարիմքից սկսած մինչև «վառք հօրը» մէջդ:

Սյսինքն ժամի սկզբից մինչև վերջը թող ասած համարուի:

Էս թէպէտ ծիծաղելի ա, բայց էս իւր անկեղծ հաւատիցն ա առաջ դալիս: Էս նշանակում ա, որ սրտանց ուզում ա ժամ ասել, բայց ժամանակ չունի և ճարը կտրում ա, էդպէս ա ասում:

Առաջուայ ժամանակներում՝ տէրտէրների կնանիքը իրանց հագուստներով, երեսաներն իրանց ապրուստներով չեն ջոկուել ժողովրդից, միշտ ամենքն էլ մի տեսակ են ըլէլ: Յիմա, ընդհակառակն՝ տէրտէրը խան ա դառել, տէրտէրակինը խանում, տղերքն ու աղջկերքն էլ խանղաղէք, ժողովուրդն էլ աւհա՛ն (հպատակ): Դէ, արի, խեղճ ժողովուրդ տանջուի, քրտինք թափի, օրը մաշի և ուտցրու աշխարհական խաներին, հոգեւորական խաներին ու հազար էլ մի ճըռ.— խաներին:

Ձէ, ամեն ինչին վերջ ա լինում և պիտի, որ լինի:

ճաւատացէք, այ հոգեւոր հայրեր, եթէ էդպէս շա-
րունակէք և միշտ ժողովրդի գլխին խանութիւն ա-
նէք, իմացէք, որ ձեր վերջը հասել ա:

Քահանան խան չէ: Քահանան առաքեալի փոխա-
նորդ ա: Առաքեալները ձեզ նման փարթամ չեն
ապրել: Նրանք իսկի ապրուստի համար էլ չեն մտա-
ծել: Նրանք Յիսուսի հրաշալի խօսքերն են քարոզել,
հիւանդներ են բժշկել, անտէր-անօգնականներին մխի-
թարել, խաւարի մէջ լոյս սփռել և էդ բոլորի հա-
մար ոչ մի ժամանակ վարձատրութիւն չեն պահանջ-
ել: Նրանք չեն ասել թէ «ես Յիսուսի առաքեալն
եմ, ես քարոզիչ եմ, խելօք եմ և ձեզանից լուս պի-
տի ապրեմ»: Կամ չեն ասել թէ՝ «պիտի պսակուինք,
էն էլ ոչ մի անգամ, այլ մի քանի անգամ»: Նրանք
ապրել են՝ ինչպես որ պատահել ա և նրանք երբէք
դժգոհութիւն չեն յայտնել:

Բայց կարելի ա, որ դուք ասէք թէ՝ առաքեալ-
ների ժամանակներն ուրիշ ժամանակներ են ըլլել,
հիմա էլ ուրիշ ժամանակներ են, հիմա մարդիկ լու-
սաւորուել են, ուրեմն աւերաէրն էլ լուսաւոր պիտի
ապրէ, պատուով պիտի լինի:

Եթէ էդպէս ա, թող ամօթ չլինի հարցնելը.
դուք որ ուզում էք լուսաւոր ապրել, պատուով,
ապահով, էդ ում փողով պիտի էդպէս ապրէք:

Թէ ժողովրդի փողովն էք ապրելու, ժողովուրդն ա ձեզ
պահողն, ձեր որդոց ու աղջկերանց կերակրողը, ին-
չու, հապա նրա համար հոգս չէք անում: Ձէ որ
ժողովուրդը դեռ լուսաւոր չէ, դեռ նա խաւարումն
ա, ինչու քեզ համար հոգս անել գիտես, իսկ ժո-
ղովրդի համար՝ ոչ:

Բայց աւելի ճշմարիտն էն ա, որ դու էլ հարուս-

տի նման ուզում ես ժողովուրդը միշտ խաւար մը-
նայ, որ նա միշտ քո հօտաղը դառնայ, քո բեգեա-
ռը քաշի:

Իսկ դրա համար մենք կ'ասենք. էլ ոչ տեսնէք
եզիպտոս:

Ժողովուրդը զարթել ա: Վայ ձեզ. զարթած ժո-
ղովրդի դատաստանն ամենազօրեղն ա: Նրա տուած
պատիժը մեծ ա և շատ ու շատ խիստ ա:

«Վայ ձեզ՝ առաջնորդք կոյրք, որ զմժղուկս քա-
մէք և զուղտս կլանէք»:

Ժամանակը հասել ա: Ժամանակի հետ զնացէք:
Զարթած ժողովուրդը ձեզանից պահանջելու ա էն
բոլորը, ինչ որ նրանից խլել էք, ինչ նրան է պատ-
կանում: Շատ դէպքեր եղան, ժողովուրդը շատ ու
շատ տառապանքի մէջ ընկաւ և դուք, այ հովիւ-
ներ, ոչինչ չարիք, դուք իսկի չցաւեցէք: Եթէ մէկ-
մէկ էլ ցաւել էք, էն էլ պիտաւորապէս ձեր շահերի
համար ա ըլլել, ձեր ջէքի համար էք վախեցել: Սե-
օրը կանցնի: Ժողովուրդը ուշքի կգայ և ձեր արա-
ծի փոխարէնը կհասցնի ձեզ: Երեք կնկայ մտածելու
ժամանակ չէ: Էդ տեսակ վարմունքներից յետոյ ժո-
ղովուրդն իւր երեսը շուռ կտայ ոչ թէ մենակ ձե-
զանից, այլ և եկեղեցուց, և իւր հաւատից ու կրօ-
նից: Ուրեմն եթէ փոքր ի շատէ զգացմունք ունիք
և ապաղայ պատմութիւնից էլ վախում էք՝ մը-
տածեցէք զոնէ եկեղեցու համար: Եկեղեցին ժողո-
վրդովն կենդանի ա, ոչ թէ հոգեւորականութիւնովը:

Ինչպէս վերև յիշեցինք պիտի առանձին ուշա-
դրութիւն դարձնել գիւղացու առողջութեան վրայ:
Մանաւանդ նրա մարմնու կողմուածքի վրայ:

Կարող ենք ասել, որ էդ կողմից առաջուայ գիւղացիների և հիմիկուայ գիւղացիների մէջ զանազանութիւնը շատ ա:

Առաջուայ գիւղացիների մէջ հիւանդոտը կամ հէնց մաշուածը քիչ են պատահել: Առաջուաններն առողջ են ըլել՝ բարձր բոյով, գեղեցիկ զէմքով, կարմիր թշերով և միշտ ուրախ: Էդպէս են ըլել և կնանիքը և աղամարդիկը: Եթէ մանրամասն հաշուի մէջ մտնենք, կանանիք, որ հին ժամանակներումն՝ երիտասարդ հասակում մեռնող գիւղացիների թիւը շատ քիչ ա ըլել, քան թէ հիմա: Նրանք ապրել են ուրախ, միշտ զոհ են ըլել իրանց ունեցածով: Կեանքը միշտ սիրել են: Էն կեանքը անց են կացրել արտերում, սարերում, ձորերում ու դաշտերում, մաքուր աղբիւրների ու գետերի մօտ: Ուտելէքը պարզ ա ըլել, խմելէքը աճաճակաճ ջրեր:

Հիմիկուայ փոփոխութեան պատճառը հօդի սակաւութիւնն ա և դրա պատճառով էլ օտարութիւն գնալը:

Հօդի սակաւութիւնը գիւղացուն դից պարտքերի տակ, նրան գերի շինեց դադան վաշխառուների ձեռքին: Հէնց օտարութիւն էլ որ գնում են, շատ անգամ՝ ճարր կտրած՝ փախչում են վաշխառուների ձեռքից: Եւ էն օրուանից, երբ գիւղացին թողնց իւր ալւան-ալւան դաշտերն ու ձորերը, գնաց, ընկաւ զարիպութիւն, նա փոխուեց:

Մեր Կովկասումը՝ Ղարաբաղի, Զանգեզուրի, նաև Շամախու և ուրիշ շատ տեղերի գիւղացիների դարիպութեան տեղը Բագուն ա:

Բագու գնացին ամենքն էլ: Գնացին առողջ կալ-մուածքով, վառ-վառ զէմքերով:

Նրանց պապերը առողջ են ըլել, զոչադ: Շատերը

70 կամ 80 տարեկան են դառել և տարիների ընթացքում իսկի չեն հիւանդացել: Բայց այժմ գնացին օտարութիւն ու մի քանի տարուց յետոյ էնտեղից վերադարձան մաշուած, ոսկորները դուրս պրծած, զէմքերը սեւացած, մարմինները բարակած, իսկ շատերն էլ զանազան հիւանդութիւններով վարակուած:

Օտարութեան մէջ գիւղացին անտանելի նեղութիւններ է քաշում: Էդ նեղութիւնների արդիւնքն էլ հէնց էդ սարսափելի հիւանդութիւնն ա, հետը բերում ա գիւղ և տարածում գիւղացիների մէջ:

Ի՞նչ էին շինում նրանք Բագու, ի՞նչ էին տեսնում քաղաք տեղում՝ և ի՞նչքան հիւսմուտ էին ստանում:

Բագու կոչուած քաղաքում գիւղացին դառնում ա կատարեալ ստրուկ, տաժանակիր աշխատանքի տակ ընկած:

Նրանք բոլորն էլ գործում են Բալխանում և ի՞նչպէս են գործում այդ դժոխքի նման Բալխանում:

Վաղ առաւօտից սկսած մինչև ուշ գիշերը դժոխքի տանջանք են քաշում: Սև մուրի ու ծուխի մէջ, սև նաւթի ցեխերի մէջ տեղը՝ մինչև ծնկներից վերև խրուած, միշտ ոտքի վրայ մշակութիւն են անում: Բայց ի՞նչ մշակութիւն, ի՞նչ դառն, դժոխային չարչարանք:

Էդ անտանելի հոտերի մէջ, բերանն ու քթածակերը սև մուրով լիքը, մի նաւթոտ հալաւ մարմին կպած, ամառը կրակի նման էրող արևի տակ, ձմեռը թողով լիքը քամիների բերանում, գիշեր-ցերեկ ոտի վրայ, բահը ձեռին, նաւթի ցեխի մէջ տանջւում ա, հա տանջւում:

Ի՞նչ ա նրա կերածը, ցամաք հաց, էն էլ ան-

Համ, անհոտ հաց: Որտեղ ա նրա քնելու տեղը: Մի նեղ, պատերը նախով սեպած սենեակի նը ման բան ա: Սյգ սենեակ համարուած տեղում, որտեղ երկու հոգու համար էլ օդ չկայ, քնում են տասը—սասնուհինգ հոգի:

Էսպէս երկար տարիներ տանջուելուց ու չարչարուելուց յետոյ վերադառնում են տուն: Եւ ի՞նչ են տուն բերում: Փող, հարստութիւն: Ամենէին նրանք տուն են գալիս դարդակ: Պատահում ա բերող լինում ա. շատ, շատ մի քանի մանէթ, բայց քանի տարուայ առողջութիւն են կորցնում, քանի տեսակ ցաւ ու պատուհաս են բերում տուն և քանի տեսակ հիւանդութիւններ են տարածում:

Հայ զիւղացին պիտի իսկի զարիպութիւն չգնայ: Ղարիպութիւնը տուն չէ շինում: Իւր տան մէջ, իւր կանաչ զիւղում, իւր ծաղկոտ դաշտերում, ծրմակներում մի կտոր հաց ունենալը հազար անգամ լաւ ա, քան զարիպութեան մէջ («փաւը»): Փլան էլ հօ ամենքը չեն տեսնում: Ղարիպութեան մէջ ամենքի դործը աջող չի լինում: Ընդհակառակը՝ զարիպութեան մէջ զիւղացին դառնում ա սարուկ, միշտ վիզը ծռած էս ու էն աղայի առաջ: Շատերը չարչարում են, տանջւում են և էլի փողի տէր չեն դառնում:

Կան շատ զիւղացիներ էլ, որ զարիպութեան մէջ մի քիչ փողի տէր դառնալով, աւելի փչանում են: Մարդութիւնը կորցնում են: Մոռանում են հայրական տունը, ծնողների նամուսը:

Մենք շատ օրինակներ ենք տեսել:

Մենք տեսել ենք զիւղացի երիտասարդի, Բագուի կամ Ասխաբադի մէջ մի քիչ փողի տէր դառած, և իրա հէրն ու մէրը մոռացած: Մենք տեսել ենք, որ հայ-

րը ճարահատեալ քարէ քար ա ընկել ու եկել ա, որդուն գտել: Բայց որդին բարկացել ա, նեղացել թէ ինչու հայրը եկել ա իրա մօտ: Վերջն էլ հրամայել ա հօրը, որ տանից դուրս չգայ, իրա հետ ման չգայ, որ ուրիշները չիմանան թէ ինքը զիւղացու աղայ ա: Վերջապէս հայրը չէ՞ որ տրեխով ա ըլէլ և որդին ամօթ ա համարել տրեխաւոր հօր հետ մէյրան դուրս գալ:

Է, սրան ի՞նչ կասէք: Միթէ սա փչանալ չէ: Միթէ հօրն ուրացող որդին կարող ա պատուաւոր մարդ կոչուիլ: Վերջապէս եթէ այդ տեսակ որդիքը ամաչում են հայրական տրեխներից, ինչո՞ւ իրանք հօրը եւրոպական կօշիկներ չեն հագնում, իրանց նման չեն զարդարում, որ էլ չամաչեն հետները ման դալով:

Եթէ զարիպութիւն զնալու պատճառը հողի սակաւութիւնն ա, ուրեմն էդ մասին պէտք ա լաւ մտածել:

Ինչպէս ասացինք, հողը պիտի հոգու վրայ բաժանել: Սյո, այդ մասին պիտի լաւ մտածեն և կանոնաւորեն զիւղական հասարակութիւնները:

Մի զիւղացին միւս զիւղացու մօտ մշակ չպիտի դառնայ, ամենքն էլ իրանց հողը պիտի ունենան, ամենքին էլ պիտի հնար տրուի, որ գութան ու եզ ունենան, որ պետական հարկի համար նեղութիւն չքաշեն: Հարուստի և աղքատի հողը հաւասար պիտի լինի: Ել հարուստը փողի ուժով հողեր չպիտի կլանէ:

Մինչև հիմա հարուստ զիւղացին իւր հարկը կանոնաւոր տալիս ա, ապահով ու սիրտը ուրախ ա պրում ա: Աղքատ զիւղացին ամեն անգամ չի կարողանում: Եթէ մի տարի բերք չունեցաւ, վայր և

կել — տարել ա նրան: Տես այնուհետեւ ինչ տան-
ջանքներ ա քաշուծ, հարկի ու վճարի համար:

Ահա էդպիսի ժամանակ զիւղական զանձարանը
պիտի օգնութեան հասնէ: Եւ, ինչպէս վերեւ յիշե-
ցինք, զանձարանն ինքը պիտի հարկերը հաւաքէ,
ինքն էլ պիտի ամեն պահանջի պատասխանը տայ:

Մի խօսքով զիւղացին էլ չինովնիկի կամ քեօխ-
վի ու զգլրի հետ գործ չպիտի ունենայ, նրա գոր-
ծը զանձարանի մարդիկն են, էդ մարդիկն էլ իրա-
ւնաւորածներն են և ոչ ուրիշի կողմից նշանակած:
Էս գէպքում էլ պիտի յիշել, որ ընտրուած մար-
դիկը պիտի ազնիւ մարդիկ լինին, խղճատանքով,
սրտի մարդիկ, եղբօր նման մարդիկ, որ հարուստին
և աղքատին հաւասար աչքով նայեն, հոգերն էլ
հաւասար չափով պահպանեն: Վաշխառուն, կամ
զանազան չարչիներ ու հարուստներ, էլ առաջ չպի-
տի ընկնեն, էլ չպիտի ասեն. «փողաւորը մենք ենք,
ամեն բանի կառավարողն էլ մենք պիտի լինենք»:
Զէ, էդպէսների ժամանակը պիտի կորած համարել:
Ժամանակը ազնիւ և ճշմարիտ մարդկանցն ա:

Գիւղերը բարեկարգելու ժամանակ կարելի ա մեծ
գիւղերի մէջ զիւղական բանկեր սարգել: Յէնց էդ
զիւղական բանկերումն էլ կպահուի բոլոր գիւղերի
զանձարանները, նոյնպէս և ամեն մի զիւղացու յետ
զցած փողերը: Բանկերը պիտի հիմնել փոխառու
խնայողական զանձարանների ձեռով: Նրա անդամնե-
րն ու կառավարիչները կընտրուին զիւղացիներից:
Ի հարկէ, գործին տեղեակ զիւղացիներից:

Բանկերը կարող են կենտրոնական լինել: Այսինքն
մի քսան կամ երեսուն զիւղ կընտրեն իրանց մէջ
տեղն ընկած մի մեծ զիւղ և բանկն էլ կտեղաու-
րին Էնտեղ: Էդ քսան-երեսուն զիւղի բնակիչները

կհամարուին բանկի անդամներ: Ուրեմն երբ որ մի
զիւղացու փող հարկաւոր կլինի նա կզիմէ բանկին
և բանկը նրան ժամանակաւոր պարտք կտայ:

Գիւղացին բանկին կզիմէ էն ժամանակ, երբ զիւ-
ղն զանձարանում փող չի լինիլ: Երբ որ զիւղացին
բանկին անգամ կգառնայ, էլ նրա համար երաշ-
խաւորութիւն հարկաւոր չէ:

Գիւղական բանկերում հաւաքուած գումարը պի-
տի պետական բանկերում պահուի: Գիւղումը մի-
այն բանկի կառավարիչները կլինին: Էնպէս որ զիւ-
ղացին կզիմէ զիւղական բանկին, երբ որ զիւղական
բանկը կվճռէ նրան պարտքը տալ, այնուհետեւ կամ
զիւղական բանկի զանձապահը կգնայ քաղաք, փո-
ղը կրերէ ու կտայ զիւղացուն, կամ զիւղացին մի
թուղթ (չէք) կստանայ իրանց բանկից և ինքը կը-
գնայ քաղաք ու պետական բանկից կստանայ փողը:

Նայութիւնն աշխարհ եկած օրից ծնուել ա մի
հողի վրայ և մինչև օրս էլ ապրում ա իւր հողի
վրայ: Մերը մեզանից չպիտի խլեն, մենք էլ չպիտի
աչք դնենք ուրիշների վրայ: Մենք շարունակենք մեր
գութանի ծէրից բռնել, մեր ալման-ալման սարերում
ու դաշտերում ապրել: Պիտի հետեւենք՝ մեր մա-
քուր, անարատ կեանքը չփչացնենք զարիպութեան
մէջ:

Հարուստ եղբայրներ, զուք ապրում էք քաղաք-
ներում, բայց մի մոռանաք, որ ձեր օջաղը վառ պա-
հօղը ձեր զիւղացի եղբայրն ա, մի մոռանաք, որ
ձեզ հաց տուողը, ձեր սեղանը զարդարողը զիւղա-
ցու ձեռներն են: Գիւղացին ա իւր ճակատի քրը-
տինքով վարում, ջրում, մեծացնում, հասցնում և

բերում քեզ տալիս: Նրա արածի փոխարէն քո տուածը շատ քիչ ա: Վերջապէս գիւղացին ա կուրծքը դէմ տալիս քո թշնամու գցած գնդակներին, գիւղացին ա պապերի նամուսը պատուով ու պարծանքով պահում:

Հարուստ քոյրեր, յիշեցէք ձեր գիւղացի քոյրերին, լոյս վառեցէք նրանց համար, յետոյ տեսէք ինչքան սիրուն են նրանք, ինչքան խելօք են: Գիւղացի քոյրերն աշխատաւոր են, մեծերին ու ամուսիններին խոնարհ, առաւօտ-երեկոյ չարչարում են, տուն են պահում, երեխայ են մեծացնում, բայց ոյժերը քիչ են, երեխաները մնում են խաւար, տրդէտ: Դուք պիտի օգնէք նրանց: Նրանք ձեր արբէշումն ու ոսկին չեն ուզում, նրանց ուզածը քիչ ա: Էդ քիչն էլ մի խնայէք, բաժին հանեցէք ձեր քոյրերի համար: Ձեր խղճմտանքն աւելի շատ ա, դուք միշտ ասացէք ձեր հայրերին ու ամուսիններին, որ խեղճ, անբախտ քոյրեր ունեք: Նրանք գիւղերի մէջ անասունի հետ տանջւում են. ասացէք, որ հարկաւոր ա նրանց օգնել:

Գաղաքների մէջ դուք չէք կարողանում հասկանալ գիւղացու տանջանքը: Դուք չէք տեսնում նրա քրտինքը, նրա մատներէն կաթ-կաթիկի արիւնը:

Որքան մեծ ա աղքատութիւնը գիւղերի մէջ, լսեցէք ձեզ մի դէպք պատմեմ ե զրանից կարելի ա հասկանալ թէ՛ ճշմարիտ, ինչ աղքատութիւն կայ մեր անբախտ գիւղերի մէջ:

Շուշուց մի անգամ գնում էի Սղղամ գիւղը: Սայլի վճարը պայմանաւորուել էի քառասուն կօպէկ: Երբ որ հասայ գիւղ, սայլապանին մի մանէթ տուի, որ քառասուն կօպէկն ստանայ, մնացած մանրը յետ տայ: Սայլապանը, որ մանէթը տեսաւ, ա-

պշեց: Նա ինքը սայլի տէրը չէր, ինքը նրա ծառան էր, որ միշտ տանջւում—չարչարւում էր, հազիւ էր կարողանում իւր ընտանիքը պահել, դոնէ ցամաք հացը միշտ կանոնաւոր ունենալ: Էդ քառասուն կօպէկն էլ պիտի տանէ, ի հարկէ, սայլի տիրոջը տայ: Եւ ահա խեղճը, երբ որ մանէթանոցը տեսաւ, տխուր ձայնով ասաց.

— Ո՞րտեղից ես մանր տամ, փող ճրտեղից ա: Յետոյ մի թառանչ քաշեց ու խօսքը չարունակեց. որ ըզնեց ութ հատ մանէթ ունենայի, մի էլ կառնէի ե երեխաներիս հայրը միշտ կճարէի, ե էլ ուրիշ ծառայ—մեհտամ չէի դառնալ:

Ես նրան ութ մանէթը տուի, բայց հարուստ քոյրեր ու եղբայրներ, տեսնում էք՝ ինչ զրութեան մէջ են մեր անբախտ գիւղացիները: Ութ մանէթը մի մեծ բան չէ, բայց գիւղացին ութ մանէթով մի էլ ա առնում ու նրա հետ աշխատելով տուն պահում, երեխաներին սովից ու նեղութիւնից ազատում:

Սաղ աշխարհը զարթել ա: Լուսաւորութիւնը տարածւում ա ամեն տեղ ե ամեն մի խեղճն էլ աչք ա բաց անում: Հայ գիւղացին ա մոռացուած: Նա խաւարի մէջ ա, իսկ ով խաւարի մէջ ա, նա աղքատ կլինի, խեղճ, ողորմելի կմնայ:

Քարայած սիրտ պիտի լինի, որ գիւղացու զրութիւնը տեսնէ ու սուս կենայ: Նամուսը կորցրած պիտի լինի, որ ինքը լաւ ուտէ, խմէ, ուրախանայ, իսկ քոյրն ու եղբայրը սովից մեռնեն:

Իսկի լուսաւոր չէ էն մարդը, որի եղբայրներն ու քոյրէջը խաւարի մէջ լաց են լինում ե ինքը ձեռք չի մեկնում նրանց: Իսկի բախտաւոր չի նա, ով որ ապրում ա լաւ աներում, ոսկու, արբէշումի մէջ,

բայց իւր հարազատները հիւանդ, մերկ, սառած խրո-
ճիթներում զողզողում են ու ծնուած օրն անի-
ծում: Էդ անէծքն ամեն օր կհասնի նրանց ականջ-
ներին և նրանք հանգստութիւն չեն տեսնիլ:

Երանի իմանայիք թէ ուրիշ երկրներում ինչ մե-
ծամեծ բարիքներ են անում հարուստները: Շինում
են ուսումնարաններ, աղքատանոցներ, հիւանդանոց-
ներ և ուրիշ զանազան բարենպատակ հիմնարկու-
թիւններ, անմահացնում են իրանց անուանիքը և
նոր սերնդին օրինակ են տալիս բարի լինելու, օգնե-
լու խեղճին, թշուառին և կատարելու Աւետարանի
գլխաւոր պատուէրը. «օգնեցէք տառապեալին, սի-
րեցէք խեղճերին, թշուառներին»:

Մի միլիօնատէր մարդու հարցնում են.

— Ո՞րքան փող ունիս:

— Մի քանի հազար. պատասխանում ա միլիո-
նատէրը:

— Ի՞նչպէս, չէ՞ որ քեզ միլիօններ ունիս:

Միլիօնատէրը պատասխանում ա.

— Որքան ես իմ ձեռով տուել եմ բարի գործե-
րի համար և էլի որքան պիտի տամ մինչև իմ
մահը, էնքանն ա իմը:

Յարգելի հարուստներ, էսպէս իմացէք, որ ամեն
բան ձեր ձեռով տուածն ա մնում, մնացածը ձերը չէ:

Մի լրագրի մէջ կարդացինք հետեւեալը.

Ամերիկայի Պիտսբուրգ քաղաքի միլիօնատէրերից
մէկը մի նոր օրինակ հիմնեց բարեգործութեան: Նա
տեսաւ, որ կան խեղճեր ու աղքատներ, որոնք շատ
աշխատաւոր են լինում, բայց գործի աջողութիւն
չեն ունենում և քաղաքների մէջ շատ մեծ դժու-

արութիւններ են քաշում բնակարանի համար: Նա
տասը միլիօն մանէթ զոհեց, որպէս զի էդ գումա-
րով Ամերիկայի ամեն քաղաքում մեծ-մեծ տներ
շինուին և շատ էժան գներով տրուին աղքատնե-
րին: Տները շինում են գեղեցիկ, յարմար, ձմեռը
տաք ու չոր: Տների կտուրներին էլ ձմեռուայ բա-
ղեր են շինում, որ երեխաները գնան—էնտեղ խա-
ղան, դաս սովորեն և օրերը ուրախ անցկացնեն:

Ահա թէ ինչ ա ասում մի բարերար.

Մենք մեզ համար թանկագին քարերից գերեզ-
մաններ ենք շինում, մենք պահում ենք մեծամեծ
տներ, պահում ենք շատ ու շատ ծառաներ ու ա-
ղախիններ, զանազան կարգադրիչներ ենք նշանակում,
մեծ փողեր ենք փչացնում, կառավարիչների վրայ
առանձին կառավարիչներ ենք կարգում, իսկ դար-
դակ ու փուչ հոգու համար իսկի չենք մտածում:

Մեր լուսահոգի կաթուղիկոսներից մէկը՝ Բագուի
հարուստներից մէկին հարցրել ա.

— Դու քեզ համար սեպհակսն մի խրճիթ շինե՞լ
ես:

Ի հարկէ, հանգուցեալ հայրապետը նրա հոգու
համար ա հարցրել, հոգու խրճիթը պիտի շինել,
մարմինը փուչ ա, ժամանակաւոր ա:

Իժերախտաբար մեր հարուստների սիրտն ու հո-
գին իրանց զանձերի մէջ են թաղուած: Ինչպէս
Աւետարանն էլ ասում ա. — «քանզի ուր են դանձը
ձեր, անդ և սիրտը ձեր իցեն»): Սիրտը զանձի մէջ
ա թաղուում և մարդը մնում ա անսիրտ: Վայ էդ
տեսակ մարդուն: Անսիրտ, անհոգի մարդը կենդանի
մեռել ա, իսկ մեռելը եթէ հոտում ա և փչանում
ա, ուրեմն կենդանի մեռելն էլ հոտած ու փչացած ա:

Պէտք ա էն ամերիկացի միլիօնատէրի նման դար-

դակ հոգու համար էլ մտածել յաւիտեան յիշատակն էլ թողնել:

Մենք՝ զրքիս 15 երեսում խօսեցինք ուսումնարանների մասին և ասացինք, որ մեծ, կենտրոն կոչուած զիւղերում պիտի հիմնել չորս դասարան ունեցող ուսումնարան: Բայց պիտի էս էլ ասէինք, որ էդ տեսակ ուսումնարանն էլ կարելի ա հիմնել բարի մարդկանց ուժերով: Կամ մի մարդ կարող ա հիմնել և իւր անունը վրան դնել, կամ կարող են մի քանի մարդիկ միանալ և միացած ուժով շինել:

Լինում ա մարդ, որ ունի մի հազար մանէթ կամ հինգհարիւր և զրանից էլ պակաս ու զրանից էլ աւել, լինում են պառւաններ, ծերունիներ, որոնք երկար տարիների ընթացքում կօպէկ-կօպէկ փողեր են հաւաքում և ուղում են մի բարի գործ անել, մի քաղցր յիշատակ թողնել ու չեն իմանում՝ ինչ անեն: Տեղ չգիտեն, անելիք չգիտեն: Ահա էդպէս փողերով կարելի ա հէնց մեր յիշած չորս դասարան ունեցող ուսումնարանը հիմնել: Մի-ենոյն ա. հազար՝ թէ հինգ հարիւր, կամ երեք հարիւր տուողն էլ կկոչուի էդ ուսումնարանի բարերարներից մէկը, նրա անունը միշտ կմնայ էնտեղ, յիշատակն էլ միշտ կլինի անմահ: Էդ ուսումնարանում սովորող երեխաները կիմանան թէ՛ ում բարիքով են ուսում ստանում, կյիշեն նրան, երախտապարտ կլինին և իրանք էլ երբ կմեծանան, օրինակ կվերցնեն, կաշխատեն կարողութիւն ձեռք բերել և իրանց կարողութեան չափ բարեգործ լինել:

Մենք շատ գոհ պիտի լինինք, որ մեր զիւղացին

ուսման նշանակութիւնը լաւ հասկանում ա: Նա ոչինչ էլ չի խնայում իւր որդոցը ուսում տալու համար, խեղճին մենակ միջոց ա հարկաւոր:

Ես սովորութիւն ունիմ, որ մեր զիւղերը շրջելիս, ամեն տեղ, զիւղում թէ ճանապարհին՝ ինձ նման մի զիւղացու պատահելիս՝ հետը կսկսեմ խօսել, ցան ու դարդը հարցնել և զրութեան որպէսութիւնն իմանալ:

Մի անգամ զիւղից Շուշի էի գնում: Ճանապարհին պատահեցի մի զիւղացու, որ էշին ցախ էր բեռնում: Սովորաբար նրան էլ իմ եղբայրական ողջոյնը տուի և հոգս ու դարդից հարցրի:

Գիւղացին ասաց, որ երկու տղայ ունի: Մէկն էդ տարին կվերջացնէ Շուշու ուէալական դպրոցը, միւսըն էլ նոր ա մտել էդ դպրոցը:

— Իսկ դու կարողութիւն ունի՞ս. հարցրի նրան: Գիւղացին պատասխանեց.

Իմ կարողութիւնը իմ կոներումն ա, իմ ըլած-չըլածը մի էշ ա. էս ա ըսէնց՝ էսօր՝ ցախ, էգուց փառ՝ անում եմ—տանում քաղաք ծախում և հաւաքած կօպէկները երեխաներիս ուսման համար եմ տալիս: Հալա լաւ ա, որ ես մի էշ էլա ունիմ, սրա հետ աշխատում եմ, ես ցամաք հաց եմ ուտում, տկլոր եմ կենում, թաք ըլի երեխաներս ուսում ստանան: Ժամանակը փոխուել ա, հիմա ուսում որ չունենան, էսպէս մեզ նման մեօհտաճ կդառնան, քաղցած ու տկլոր կլինին: Ախր, ինչ արած, որ մեր զիւղումը ուսումնարան չունինք: Գիւղում, որ ուսումնարան լինի, էլ խաւար զիւղական չի մնալ:

Կարծեմ ամեն մէկն էս խօսքը լսելուց, սիրաւ կփառաւորուի, կուրախանայ, որ զիւղացին էսպէս ա իմանում ուսումը գնահատել և կարծեմ խըղճ-

մտանք ունեցողն էլ կհասկանայ էս տեսակ զրու-
թիւնը և էլ ջէբը փակ չի պահել, զիւղացի եղբօր
մասին կմտածէ:

Մեր լուսահոգի կաթուղիկոս՝ Խրիմեան հայրիկը
հայ ժողովրդի մէջ, յայտնի էր, որ ամենքից շատ
զիւղացուն էր սիրում: Վարժապետին խրատում
էր՝ զիւղ գնալ, տէրաւորից պահանջում էր՝ զիւ-
ղացուն շատ սիրել, հարուստին պատուիրում էր
զիւղը չմոռանալ՝ միշտ խնայում էր, որ իւր հա-
լըստութիւնից բաժին հանէ զիւղացի եղբօր հա-
մար: Խրիմեան հայրիկը, երբ վանահայր էր Վարա-
զայ վանքում, էնտեղ երկրագործութեամբ ա պա-
րապել: Արտը հերկել ա, ցանել, յետոյ էլ հնձել:

Նա ինքն իւր լաւ-լաւ զրքերի մէջ՝ մեծ մասը
զիւղացու մասին ա խօսում և շատ լաւ, շատ ի-
մաստուն կերպով էլ բացատրում ա:

Հայրիկն ասում ա. հացը զիւղացին ա տալիս,
զինին, լաւ կանաչեղէնը, մրգեղէնը, լաւ բուսեղէնը՝
ամեն բան էլ զիւղացու ձեռքովն են պատրաստ-
ւում: Նիմա որ մեր զիւղական եղբայրները մեզ էդ-
քան բարիք են տալիս և ամեն բան տալիս են չար-
չարուելով, մեծ-մեծ նեղութիւններ քաշելով, ասա-
ցէք խնայեմ, մենք ոնց կարող ենք նրանց մոռա-
նալ, նրանց չափել և չօգնել:

Ես իբրեւ զիւղի հարազատ որդի, թէպէտ հեռա-
ցած հայրենիքից, բայց միշտ քո պատկերն ա կանդ-
նած իմ աչքի առաջ, իմ սիրելի զիւղ, իմ հայրե-
նի տուն, իմ սուրբ օջաղ, իմ հարազատ օրօրոց:
Ձեր պատկերն ա կանգնած իմ աչքի առաջ, իմ
սիրելի շինականներ, իմ սրտակից հայրենակիցներ:

Ես ինչքան ոյժ ունենամ ձեզ համար եմ զոհելու:
Էս հեռուոր տեղումն էլ ձեր սիրովն եմ ապրում,
ձեր կարօտով մաշում: Ես ոչ մեծ ուսում ունիմ,
ոչ էլ երկնքից ստացած մի մեծ շնորհք: Միայն
ձեր ցաւն ու դարդն ինձ հանգստութիւն չտուն և
ես ինչ որ կարացի, էն զրեցի: Շատ էլ, որ իմաս-
տուն խօսքեր չլինի իմ զրքի մէջ, բայց անկեղծ
սրտի ցանկութիւններ շատ կան ձեզ համար, իմ
սիրելի զիւղականներ: Էս ցանկութիւնները զրեցի
և զիրք կաղմեցի, որ համ քեզ մի ծառայութիւն
անեմ, իմ փորձովն իմացած ճանապարհը ցոյց տամ,
համ էլ մեր հարուստ եղբօրն՝ իրանց պարտքը յի-
շեցնեմ: Ժամանակը փոփոխական ա: Վաղ—ուշ աշ-
խարհի բարիքը նա պիտի վայելէ, ով որ տանջում
ա չարչարում ա և իւր ճակատի քրտինքովն ա-
մեն բարիք հողեց դուրս հանում:

Ամեն մի բարիք հողի մէջն ա, ուրեմն նրանք
դուք պիտի վայելէք, իմ հողագործ եղբայրներ:

Քեզ էլ, իմ սիրելի Կատին, էսքան կարողացի
բաւականութիւն տալ: Դու, որ շատ էիր մտածում
զիւղի մասին, շատ էիր անհանգստանում, ահա ես
զրեցի բոլորը, ինչ որ կարողացի և ինչպէս որ դու
էիր ուզում:

Դու երբ ծանօթացիր զիւղական կեանքի հետ,
մանաւանդ լաւ ճանաչեցիր Քառանի զիւղը և տե-
սար նրա ցաւերն ու դարդերն, իմացար ի՞նչ է նրա
կարիքը, այնուհետև դու հոգս ու միտք շինեցիր
քեզ համար: Դու միշտ մտածում էիր զիւղերի
մասին, նրանց երեխաների մասին, որոնք անուստում
մնալով, անբախտ էլ կմնան: Ես յիշում եմ թէ
ինչպէս էիր դու գուրգուրում ու փայփայում էդ
երեխաներին և քո ուժի չափ մխիթարում նրանց:

Միրում էիր ամենքին, ցաւում էիր ամենքի հա-
մար և երբէք չես մոռանում նրանց՝ ինչպէս հարա-
զատ քոյր կամ մայր:

Ես էլ քեզ հետ, սիրելի Կատին, թէ առհասա-
րակ խեղճ շինականների մասին և թէ մասնաւոր
կերպով մեր Քառանի գիւղի մասին մտածում եմ
միշտ և ամեն կերպ կամենում եմ օգտակար լինել:
Եւ կլինեմ՝ ինչքան որ կարողանամ: Հիմա էլ էս
գիրքը նրանց նուիրեցի, էս գրքի ծախքերը ես արի,
բայց բոլոր արդիւնքն էլ՝ թէ իմ արած ծախսը և
թէ մնացած օգուտը՝ բոլորը միասին ընծայում եմ
Քառանի գիւղի ուսումնարանի օգտին: Սա էլ մեր
լուծան կլինի, սիրելի Կատին: Ինչ անենք թէ՛ փոքր
լուծայ է, բայց ես «սամարացի կնոջ» նման ուղեցի
շատ տալ, սիրտս էլ շատ ա ուղում, բայց առ այժմ
իմ ոյժն էսքան ներեց: Բացի էդ, մեր սիրելի ծնող-
ները՝ մեր հայրական տունը՝ Քառանի գիւղում՝ ձրի-
աբար տուել են ուսումնարանի համար: Եւ այժմ հա-
յոց ուսումնարանն էգտեղ ա տեղաւորուած: Ուրեմն
ուսումնարանի շէնքը Քառանի գիւղում միանգամայն
ձրի ա, երեսաներն էլ ապահով՝ կարող են ուսում
առնել, ուսում շարունակել:

Միայն խմացայ, որ գիւղացիները չեն կարող վար-
ժապետի ռոճիկը լրացնել, մանաւանդ էսպէս տխուր
ժամանակներին, երբ նեղութիւնն ամեն կողմից շատ
ա մեր գիւղացիների համար: Ես վճռեցի վարժա-
պետի ռոճիկն էլ և առհասարակ բոլոր ծախքը
ուղարկել մեզանից: Ուրեմն էսպէս Քառանի գիւղի
ուսումնարանը լիովին ապահովուած կլինի մեղա-
նից:

Էսպէս շու էլ, սիրելի Կատին, էդ կողմից ուրախ
ու հանգիստ կլինիս, որովհետեւ էսպէսով քո փա-

փաղը լրանում ա, քո սիրած երեսաները անուսում
չեն մնալ:

Դու այժմ կտեսնես քո սիրած գիւղի երեսաներն
ունին ապահով ուսումնարան և ապահով ուսուցիչ:

Զէ՛ որ դու միշտ կրկնում էիր թէ՛ «ինձ ոչ մար-
քարիտներ են հարկաւոր, ոչ թանկագին քարեր,
ոչ արբէշում: Ես ոչինչ չեմ ուզում քեզանից, մի-
այն ուսումնարան՝ խեղճ գիւղացի երեսաների հա-
մար»: Դու ուսում էիր ուզում միշտ հայ մանուկ-
ների համար, որովհետեւ ուսումը մի բանալի է՝
գէպի լոյսը տանող զօան համար:

Պալատները, մեծամեծ տներն երբէք կանգուն
չեն մնում, եթէ նրանց մէջ լոյս չկայ, այսինքն ուս-
ման լոյս:

Մենք միշտ կծածենք և միշտ մեր հօգսը կշի-
նենք գիւղացի մանուկների ուսումը: Ինչքան մեր
ոյժը ներէ, մենք երբէք յետ չենք մնալ օգնելուց:
Մենակ Քառանին չէ: Ուսման կարօտ գիւղեր շատ
կան, մենք պիտի օգնենք, որքան կարող ենք: Պէտք
է և միշտ կանչենք ամենքին էլ, ով ինչքան կարող
ա, օգնէ:

Ես կրկնում եմ, եթէ ամեն մի մարդ, հէնց ամեն
մի հարուստ գիւղացի եթէ գիւղական ժողովուրդին
օգնէ հէնց իւր ուժի, իւր կարողութեան չափ, էն
ժամանակն ինչ բախտաւորութիւն կլինի մեր բոլոր
աշխարհի համար:

Եւրոպայում էնպէս ազգեր կան, որոնք թուով
հայերից քիչ են, բայց աշխարհի երեսին շատ նշա-
նաւոր տեղ ունին, մեծ պատիւ ու յարգանք ունին:

Դրանք բոլորն էլ առաջ են գնացել ուսումով,
էդ ազգերի հարուստներն էլ օգնել են իրանց ժո-
ղովուրդին և առաջ են տարել:

Ի հարկէ բախտաւոր ա էն ժողովուրդը, որի հարուստները ժլատ չեն: Դժբախտաբար մեր հայ հարուստները շատ փողապաշտ են: Եթէ էդքան ուսում սիրէին, փողի տեղ ուսում պաշտէին, էն ժամանակ՝ միանգամայն խաւարը կվերանար մեր աշխարհից, լոյս կախրէր ամեն տեղ: Իսկ ինչ տեղ լոյս ա, ինչ տեղ ժողովուրդը դուրս ա եկել խաւարից, էն տեղերում միշտ բախտաւորութիւն ա լինում, միշտ երջանկութիւն:

Մի թագաւոր յաղթում ա միւսին իւր լուսաւորութիւնով: Մի ժողովուրդ առաջ ա գնում, բախտաւոր ա ապրում՝ զխաւորապէս ուսումով, մտքի լուսաւորութիւնով: Ծուլութիւնը հէնց անուսում լինելուցն ա: Ուսում առած մարդը, ամեն բան հասկանալով ծոյլ չի մնում, աշխատում ա առաջ գնալ, աշխատում ա տուն-տեղ ապահով պահել, բախտաւոր պահել, դրա համար էլ նա չարչարում ա, նեղութիւններ ա քաշում և ամեն բան կարգի դնում:

Խաւար ժողովուրդը միշտ գերի ա դառնում, միշտ սարուկ ա մնում լուսաւոր ժողովուրդներին: Խաւար մարդը աշխատանքի դուռը չի կարողանում դանել: Աչքը փակ ա, նա չի կարողանում չարն ու բարին լաւ ջոկել, լաւ հասկանալ:

Ոյժն ուսման մէջ ա: Ուսումով կարելի ա ամեն բան յաղթել: Ուսումի շնորհքով սարերը տեղից շարժում են, մեծ-մեծ գետերի ընթացքը փոխում են, ծովերն իրար միացնում են:

Ամեն բան անում ա մարդը, միայն, ի հարկէ խելօք մարդը: Իսկ մի մարդ եթէ խելօք ա, խելքի հետ էլ ուսում ունի, ուրեմն նա զօրեղ ա, նա ամեն բան կարող ա անել:

Շատ ու շատ խելօք երեխաներ են լինում մեր գիւղերում և անուսում մնալով, կորչում են: Էդ պէսներին եթէ տէր լինի, եթէ նրանց ուսում տըլուի, նրանք նշանաւոր մարդիկ դուրս կգան:

Ձէ ո՞ր շատ նշանաւոր մարդիկ՝ աշխարհի երեսին հէնց գիւղերիցն են դուրս եկել: Գիւղի ծնունդ են ըլել: Որին տէր ա ըլէլ, որն էլ մի որ և է հանգամանքի շնորհիւ քաղաք ա ընկել, ուսում ստացել, վերջը նշանաւոր մարդ դառել:

Հէնց մեր հայերի մէջ որքան նշանաւոր կաթուղիկոսներ, բանաստեղծներ, գիտնականներ՝ գիւղի որդիք են ըլէլ, գիւղերիցն են առաջ եկել:

Մի Աշտարակ գիւղ երկու նշանաւոր կաթուղիկոս ա տուել՝ մէկը՝ Ներսէս Երկրորդ, միւսը՝ Ներսէս Հինգերորդ, մի յայտնի վիպասան ա տուել՝ Պերճ Պօօշեան, մի անուանի բանաստեղծ՝ Սմբատ Շահագեղան և մի քանի լաւ եպիսկոպոսներ և վարդապետներ:

Հայոց նոր գրականութեան հիմնադիրն էլ՝ Խաչատուր Աբովեանը նոյնպէս գիւղացի ա ըլէլ, Քանաքեռ գիւղից:

Հին ժամանակներումն էլ մեր նշանաւոր մարդիկը՝ հայրապետներ, ազգային հերոսներ, պատմադիրներ, վերջապէս մեր գիրը ստեղծող Մեսրոպը, գիւղերիցն էին:

Շատերը նրանցից հանգամանքի շնորհիւ առաջ են գնացել, շատերին էլ աջողուել ա բարերարների շնորհիւ գնալ հեռաւոր երկիրներ, բարձր ուսում ստանալ և վերադառնալ՝ հայրենիքին ծառայել:

Հին պատմութիւնից գիտենք, որ մեր բոլոր նշանաւոր գրողները մի մի բարերարներ են ունեցել:

Հայոց Վռամշապուհ թագաւորի մեծամեծ օգնու-

թիւններով Մեսրոպ Մաշտոցը հայոց զիւղերում տարածում ա ուսումնարաններ, ուրեմն արածում ա ուսում, զիտութիւն: Մեսրոպի աշակերտները, մեծ մասը զիւղացիներ՝ Եգնիկ, Կորիւն, Դաւիթ անյաղթ նոյնպէս բարերարների շնորհիւ զնում են հեռաւոր երկիրներ բարձր ուսում են ստանում, զանազան զիտութիւններ ու լեզուներ են սովորում և վերադառնում են հայաստան՝ իրանց ստացած ուսումն ու զիտութիւնը հայաստանի մէջ տարածում:

Մեր ամենանշանաւոր պատմագրողը՝ Մովսէս Խորենացին՝ Տարօն գաւառի Խորնի զիւղիցն էր: Նա էլ բարերարների տուած միջոցներով զնաց ուրիշ երկիրներ, բարձր ուսում ու զիտութիւն ստացաւ և վերադարձաւ հայաստան: Մեծ նեղութիւններ քաշեց հայրենիքում, մեծ ծառայութիւններ արաւ հայոց ազգին, վերջն էլ Սահակ Բագրատունի իշխանի խնդրով զրեց հայոց պատմութիւնն: Իսկ էդ պատմութիւնը գովասանքի արժանացաւ ոչ միայն հայրի, այլ և բոլոր եւրոպական զիտնականների կողմից: Էդ պատմութիւնը թարգմանուած ա լատիներէն, ֆրանսերէն, իտալերէն և ռուսերէն լեզուներով:

Վերջապէս շատ նշանաւոր հերոսներ, շատ քաջ աղերք էլի զիւղերիցն են գուրս եկել:

Եթէ հին պատմութեան խորքերը չմտնենք, վերցնենք նոր պատմութիւնից՝ օրինակ՝ Դաւիթ-Բէդ, քաջն Աղասի և ուրիշ սրանց նման շատ շատերը զիւղի զաւակներ են ըլլել: Սարերում ու ձորերում մեծացած: Սրտերն էլ ազնիւ ու անարատ, հայրենիքի սէրն էլ մաքուր և անկեղծ:

Հէնց ամենավերջին ժամանակներն էլ՝ հայերին զանազան ազէտներ պատահած ժամանակ՝ ամենքից

շատ և ամենքից քաջ՝ զիւղացին ա կուրծքը դէմ տուել թշնամուն:

Ուրեմն զիւղացին միշտ երախտիք ունի հայոց ազգի վրայ: Հայոց ազգի հարուստներն էլ չափաւ ապիրախտ լինին, չափաւ մոռանան զիւղն ու զիւղացին:

Ինչպէս ասացինք, ժամանակը փոխուել ա: Այժմ՝ դժուար ա, ուրիշ կերպ առաջ գնալ: Այժմ՝ ուսման ժամանակներ են: Այժմ՝ ամեն բան ուսումով ա առաջ զնում: Ինչքան էլ որ և է հանդամանքն աջողութիւն բերի մարդուն, բայց էլի առանց ուսումի դժուար ա:

Ինչու մեր հարուստների մեծ մասը էլի շուտով աղքատանում ա, ի՞նչու նրանց հարստութիւնը որդոց-որդի չի գնում:

Նրա համար, որ հարստութիւնն եկել ա մի՞ որ և է հանդամանքով, բայց երբ որ նրա տէրը ուսում չունի, չգիտէ աշխարհի դրութիւնը, չգիտէ թէ էսօրուայ մի բանից էդուց ինչ կլինի, էդ պատճառով էլ չի կարողանում հարստութիւնը պահել, մեծացնել:

Իսկ եթէ հարուստը ուսում ունենայ, լաւ հասկանայ աշխարհի դրութիւնը, լաւ կրթէ, դաստիարակէ իւր որդիքը, միջոց տայ և խեղճերին ուսում առնելու, ամեն տեղ ուսում առած մարդկանց թիւը շատացնելու և յետոյ ամենքն էլ իրար հետ գործ ունենալով, իրար չեն խաբիլ, իրար ոտնատակ չեն տալ:

Մի երկրում, որտեղ ժողովուրդը ուսում չունի, նշանակում ա, էն երկիրը խաւար ա և էն երկրի ժողովուրդը ապրում ա խաւարի մէջ: Իսկ խաւարի մէջ էլ, հասկանալի ա, որ չար բան առաջ կգայ:

Եւ մարդասպանութիւն, և գողութիւն, և ամեն մի վատ բան:

Էդ բոլոր չարիքները ուրիշ ճանապարհով չեն վերանալ: Իրա ճանապարհն էն ա, որ մարդիկ հասկանան իրանց արածի լաւն ու վատը: Իսկ մարդիկ ուրիշ տեսակ չեն կարող հասկանալ, եթէ ուսում չունենան, եթէ մտքերը լուսաւոր չեն:

Իհա լաւ ա, որ մեր ժողովուրդն Աստուածաժախ ժողովուրդ ա: Եթէ մեծամեծ չարիքներ չի անում, որովհետեւ դեռ վախում ա Աստուածանից: Բայց ինչ՞ կլինի, երբ մի օր էլ Աստծուն մոռանայ ու խաւար մտքով մնայ քաղցած, տկոյր:

Ի՞նչ պիտի անէ:

Պարզ բան ա, որ գողութիւն էլ կանէ, մարդ էլ կսպանէ և ուրիշ շատ տեսակ չարութիւններ կանէ: Ուրեմն ամեն բան ժամանակին պէտք ա մտածել, ամեն չարիք արմատից պիտի կտրել և ամեն մի վէրք սկզբում պիտի բժշկել:

Մեր ուսում առած մարդիկն էլ պիտի լաւ մտածեն, ժողովներ կազմեն, հրաւիրեն հարուստներին և բացատրեն մեր դրութիւնը, բացատրեն զիւղի և զիւղացու դրութիւնը, շարժեն նրանց խղճմանքը և ճանապարհ ցոյց տան խեղճ ժողովուրդին մթին խաւարից հանելու համար: Էդպէս պիտի անեն և մեր ուսում առած տիկիներն ու օրիորդները: Կուսաւորութիւնը եւրոպական շորերի մէջ չէ, ոչ էլ եւրոպական ձեռով նստել-վերկենալն ա: Վնաս էլ չունի էդ տեսակ ապրելուց, բայց մենակ էդպէս ապրելը և իրանց չորս կողմն ընկած խաւարի վրայ ուշ չգործնելը նշանակում ա, որ եւրոպական լուսաւորութիւնը չին հասկացել:

Եւրոպայում լուսաւորուած ժողովուրդը նա ա

համարում ով որ հեռում ա իրանց միջեց աղքատութիւնը վերացնել, այսինքն ով որ մտածում ա աղքատի համար և միջոց ա գտնում՝ նրան աղքատութիւնից ազատելու:

Մեր մէջ ընդհակառակն՝ քիչ են մտածում էդ մասին: Աղքատի համար քիչ բան են անում: Մենք չունենք լաւ աղքատանոցներ՝ մանաւանդ հիւանդ, անդամալոյծ և առ հասարակ էնպէսների համար, որոնք չեն կարող փող աշխատել և մի կտոր հաց ձեռք բերել: Զուներք հասարակաց արհեստանոցներ, որտեղ ամեն մի խեղճը կարողանայ գործ ունենալ և աշխատեք անել ու էլ փողոցները չընկնել՝ ձեռք մեկնելու և ողորմութիւն խնդրելու:

Առ հասարակ թէ քաղաքներում՝ թէ գիւղերում՝ աղքատ ժողովուրդի համար մենք չենք մտածում: Բայց լաւ ա զրուած ստղմոսի մէջ. «երանի, որ խորհի զաղքատն և գտնանին»:

Մտածեցէք աղքատի համար, մտածեցէք մանաւանդ զիւղի համար, որովհետեւ մեծ աղքատութիւնը մեր զիւղերումն ա: Մտածեցէք, հարուստ եղբայրներ:

Կրկնում եմ՝ մեր կեանքի բոլոր բարիքը զիւղն ա տալիս, զիւղացու ձեռներովն ա պատրաստում, զիւղացու դառն քրտինքովն ու տանջանքներով:

Թէ ցանկալի ա ձեզ լուսաւորուած ազգերի հետ հաւասարուիլ, ուրեմն մտածեցէք զիւղի մասին և մի խնայէք զիւղացու ուսման համար: Ամեն մի զիւղում մի ուսումնարան բաց անելը, նշանակում ա, ամեն մի զիւղում մի անշիջանելի ծրագ փռուլ: Այո, էդ տեսակ ծրագ իսկի չի հանգել: Նա լոյս կը տայ միշտ և նրա լուսով յաւիտեան կլուսաւորուի ծրագ փռողի յիշատակը, յաւիտեան կօրհնուի:

Նրա անունը և որդուց որդի օրինակ կդառնայ՝ բա-
րութեան և առաքինութեան:

Ինչպէս սկսեցինք մեր գիրքը, որ ասացինք ուսումնական հարկաւոր զիւղացուն, էնպէս էլ վերջացում ենք, նոյնը կրկնելով և նոյնը յիշեցնելով մեր եղբայրներին ու քոյրերին, որ զիւղը խաւարի մէջ չթողնեն: Գիւղը մոռացութեան չպիտի տան: Ի՞նչ ա հարկաւոր զիւղին:

Ամենքից զլիւսաւորը լոյս, ուսման լոյս, ուրեմն
ուսումնարաններ, ուսում տարածող հիմնարկու-
թիւններ և լուսամբա բարեկարգութիւններ: Եւ թէ
մի ազգի զիւղացին լուսաւոր ա, ուրեմն էն ազգի
մէջ աղքատութիւն չկայ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0189750

